ԷՋՄԻԱԾԻՆ



Բ

1999

ԾԵ ՏԱՐԻ

Է.ՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. Է.ՋՄԻԱԾՆԻ

ՓԷՏԷՐԲՈՒՐԳ
1999

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Պահեցողությունը՝ հաղթանակ մեղքի 3

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը ենթարկվեց նոր վիրահատության. 8

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ապաքինման շրջանն անցկացնում է Նյու Յորքում 9

Բարեմաղթանքներ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին. 10

Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի շնորհավորական հեռագիրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Վարդանանց տոնի առիթով 11

Շնորհավորական հեռագիր Ալեքսիյ Բ Պատրիարքին 12

ՀՀ նախագահը հանդիպեց Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի հետ 13

Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի շնորհավորական հեռագիրը Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին՝ ծննդյան 80 և քահանայական ձեռնադրության 60-ամյակների առիթով 14

ԿՐՈՆԱԿԱՆ

Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի քարոզը՝ խոսված Մայր Տաճարում Տյառնընդառաջի տոնի առիթով 16

Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի քարոզը՝ խոսված Մայր Տաճարում 18

Տ. Միքայել Ծ. Վրդ. Աջապահյանի քարոզը՝ խոսված Ս. Հռիփսիմե եկեղեցում 20

Տ. Վազգեն վարդապետ Միրզախանյանի քարոզը՝ խոսված Մայր Տաճարում 24

Տ. Հայկազուն Ծ. Վրդ. Նաջարյանի քարոզը՝ խոսված Մայր Տաճարում 27

ՄԻՔԱՅԵԼ Ծ. ՎՐԴ. ԱՋԱՊԱՀՅԱՆ – Մեծի Պահոց պատմական հիմքը. . . . 31

ԱՐԹՈՒՐ ԴՊԻՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ – Տյառնընդառաջի խարույկը 35

ԲԱԲԿԵՆ ՆԱՆՑԱՆ – Սուրբ Երրորդության անձերի հատկությունները դավանաբանական համակարգում 38
ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ԴԸ ՍԱԼԻ – Ուղեցույց բարեպաշտ կյանքի 43

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ 1700-ԱՄՅԱԿԻՆ

ՊԻՈՆ ՀԱԿՈԲՑԱՆ – Եպիսկոպոսական Աթոռները Գրիգոր Լուսավորչի օրերին 54
Հ. ՄԱՐՏԻՐՈՍՑԱՆ – Առաջին եկեղեցական հաստատությունները Հայաստանում՝ ըստ Պլատինգերյան քարտեզի 65

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՑԱՆ – Նոր էջեր Նորավանքի եպիսկոպոսական Աթոռների պատմության 71
ԼԱՐԻՍԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ – Լույս տեսավ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի «...Եվ օրորվում է նավը ալիքների վրա» գիրքը . 87

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

ՀՐԱՆՏ ԿՈՍՏԱՆՑԱՆ – Վարդանանց տոնին նվիրված հանդիսություն Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում 92
ՀՐԱՆՏ ԿՈՍՏԱՆՑԱՆ – Տյառնընդառաջի խարույկ Մայր Աթոռում 97
ՎԱՀԵ ԴՊԻՐ ԲԵԳՈՅԱՆ – Տյառնընդառաջը՝ համաքաղաքային տոն Զարենցավանում 98
ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՑԱՆ – «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշան՝ Հովհաննես Զեքիջյանին 100
ԱՐՇԵՆ ԱԲԵՂԱ ՍԱՆՈՍՑԱՆ – Կյանքի կոչվեց նոր՝ Հովվական Գործունեությունը Համակարգող Գրասենյակը 102
Ուսանողի նախաձեռնություն 104

1700-ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Ուխտագնացություն 1700-ամյակի ծրագրում. Այցելություններ Սփյուռքի թեմեր և Հայաստան 105
Համաժողով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 107

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ – Եկեղեցական բեմ. լուրեր 109
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата 114
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin 116
«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine 118

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՊԱՀԵՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՂԹԱՆԱԿ ՄԵՂՔԻ

«Եւ յորժամ պահիցէք, մի՛ լինիք իբրեւ զկեղծաւորսն տրտմեալք, որ ապականեն զերեսս իւրեանց, որպէս զի երեւեսցին մարդկան թէ պահիցեն. ամէն ասեմ ձեզ, այն իսկ են վարձք նոցա»:

(ՄԱՏԹ. Զ 16)

Ներկա դարը, ավելի ճիշտ՝ դարավերջը, նորաձևության, նոր մտածումների, նոր տարազավորման, նոր արժեքների որոնման, նոր ճաշակների արթնացման, նոր զգացումների հետապնդման կնիքը ունի: Նորը հաճախ կշիռ է ու արժեք, երբ իմաստավորված է, ստեղծագործական ճիգ է, գեղեցկի ու բարու հաստատումն է: Սակայն միշտ չէ նորն այդպիսին:

Նորությունների հետապնդման այս ճանապարհին միշտ անտեսվում, նսեմացվում է հինը, անգամ՝ արհամարհվում: Այլ խոսքով՝ մենք հաճախ հասարակությունից դուրս և մանավանդ ժամանակակից երևալու համար որդեգրում ենք տեսություններ, դյուրությամբ յուրացնում կարծիքներ, որոնք հոգեկան սնանկության դրսևորումներն ու արտահայտությունն են:

Տարօրինակ, թերևս նույնիսկ անիմաստ կնկատեն ոմանք, երբ գիտության նվաճումներով, ինչպես նաև քաղաքական անակնկալներով աղեցուն մեր ժամանակներում առօրյա մտահոգություններով, հոգս ու ցավերով բեռնավորված անհատին, որպես խորհրդածության նյութ, ընծայենք գեղեցիկ տոների այն ոսկեղենիկ շղթան (*«Սրբոց Ղեւոնդեանց քահանայիցն»*, *«Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց՝ հազար երեսուն եւ վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին»*, *«Տեառնընդառաջ»*), որով զարդարված է ողջ փետրվար ամիսը, և որն իր ամբողջական լրումն է ստանում Սուրբ Հարության շաբաթը կանխող քառասնօրյա պահեցողության շրջանով:

Սակայն որքան էլ ժամանակավրեպ նկատեն հատկապես նրանք, ովքեր, ժամանակակից երևալու ձգտումից և նյութականի նեղ տեսանկյունից ելնելով, հոգևոր արժեքների ու բարոյական սկզբունքների նկատմամբ մակերեսային մոտեցում ունեն, բայց և այնպես գիտակից մարդու համար, ընթացիկ օրերի հոլովույթում, հավիտենական ձգտումը մնում է կյանքն առավել արժևորելու հույսը և կյանքում իմաստ որոնելու ու գտնելու իրողությունը...

***

Սիմեոն Ծերունին, իր հույսի պսակումը տեսնելով, հրճվեց, ապրեց իր կյանքի ամենաերջանիկ պահը: ԼՈՒՑՍՆ աշխարհ էր եկել և, տարիների սահանքից հետո, բաշխվելու էր համայն մարդկությանը: Տիրոջն ընդառաջ գնալու դրվագում, անկախ Սիմեոնի հրճվանքից, ԻՄԱՆԱԼԻ ԼՈՒՑՍՈՎ ՓՐԿՎԵԼՈՒ գաղափարն է պարագրված: Ցուրաքանչյուր անհատ, ինչպիսի պայմաններում էլ գտնվի, գեղեցիկ ցանկություններ ու երազանքներ ունի՝ ներկայի և ապագայի հանդեպ: Նա հարատևորեն ճգնում է, ուղիներ որոնում՝ դրանք իրականությամբ զգեստավորելու համար: Իսկ երբ իրականացած է տեսնում, վայելում է իր տքնանքի ու հաղթանակի քերկրանքը: Հիրավի, յուրաքանչյուր հաղթանակով պսակված գործ, նվաճում հոգեկան վայելք ու հրճվանք է: Բայց և նվազ ցնծալի չէ ուրախությունը բոլոր նրանց, ովքեր անձկագին տենչում են հոգու փրկության և մի օր էլ, ԻՄԱՆԱԼԻ ԼՈՒՑՍՈՎ ողողված, Սիմեոնի նման ապրում երջանկության երկար սպասված պահը:

Կյանքում ձգտում ենք տնտեսապես ավելի բարվոք վիճակների, ջանում ենք, աշխատում, և մեր փոքրիկ հաջողությունները, առաջադիմությունները ուրախացնում են մեզ, թափ հաղորդում՝ ավելիին ձգտելու և հասնելու: Սա մարդկային սովորական հատկանիշ է, և այստեղ դատապարտելի ոչինչ չկա: Այսպես կարելի է խոսել նաև մարդկային մտքի մասին: Մեր ունեցած աշխարհճանաչողությամբ, ծանոթություններով երբե՛ք չենք բավարարվում: Միշտ էլ կամենում ենք ավելի ընդգրկուն գաղափարներ ունենալ, և որքան ընդլայնվում է մեր մտահորիզոնը, այնքան գոհունակություն ու բավարարություն ենք զգում և ձգտում ենք նորանոր նվաճումների: Հոգեկանը ևս մարդահաճո ու Աստվածահաճո լինելու ձգտումն է, որ մեզ պարտադրում է էլ ավելի կատարելագործվել և առաքինություններով օժտվել:

Մեզանից յուրաքանչյուրը ձգտում է հասարակության մեջ իր մասին լավ տպավորություններ ու բարի հիշատակներ թողնել, որն էլ իրականանում է, երբ իրապես առաջնորդվում ենք Աստվածահաճո դառնալու սկզբունքներով: Բացառիկ մարդկանց է միայն հաջողվել Աստվածահաճո և առաքինի կյանք ապրել: Այդ քչերից էր Սիմեոն Ծերունին: Բոլոր նրանք, ովքեր Սիմեոնի նման անձկագին լույս ունեն և սպասում են, անպայմանորեն իրենց հոգում զգում են ԼՈՒՑՍԻ ԾՈՂԱԿԱԹՈՒՄՆԵՐԸ, ու մի օր էլ, երբ հպսնեն իրենց նպատակին, կյանքին կամովին հրաժեշտ տալիս, խաղաղությամբ կրկնելու են իմաստուն ծերունու խոսքերը. «*Արդ արձակեա զծառայս քո, Տէր, ըստ բանի քում ի խաղաղութիւն. զի տեսին աչք իմ զփրկութիւն քո*» (ՂՈՒԿ. Բ 29-30:

***

ՄԵԾ ՊԱՀՔ. այսպես են կոչել Սուրբ Հարության շաբաթը կանխող քառասնօրյա շրջանը Հայոց Եկեղեցու Հայրերը և կարևոր տեղ տվել եկեղեցական կյանքում: Ինչո՞ւ: Ի՞նչ կապ ունի այն մեր այսօրվա կյանքի հետ, երբ փոխվել և հարատև փոխվում է ողջ աշխարհը: Ժամանակավրեպ չէ՞ արդյոք պահքի մասին խոսելը: Դեռ ավելին: Մեծ Պահքի հետ են առնչվում նաև *մեղք, մեղքի գիտակցություն, զղջում և ապաշխարություն* հասկացությունները:

Ներկա հասարակության թույլատու սահմաններում այսպիսի գաղափարների արծարծումը շատերի համար նույնիսկ անընկալելի է, միամտության, տգիտության, սնոտիապաշտության դրսևորում: Սակայն ասում են, թե ծառն իր պտղից է ճանաչվում: Հասարակության որդեգրած այս կեցվածքը շռայլորեն իր պտուղներն է տալիս, որոնք դառնահամ են ու անցանկալի: Մեր այսօրվա քաղաքակիրթ կյանքը լցնող որոշ իրողությունների պարզ մատնանշումն իսկ կարող է խորհրդածության տեղիք տալ: Այդպիսիք են՝ *ընտանեկան երջանկության բացակայությունը, անբարո վարք ու բարքը, վայրագ արարքների ծաղկումը, անհորիզոն ու աննպատակ կյանքը*: Այս ամենի մասին կշռադատորեն խորհելուց հետո, կարելի՞ է դրանք թույլատրելի, բնական ու օրինաչափ համարել, թե՞ պետք է ընդունենք, որ այս պտուղներն աղետաբեր շեղումներ են, առկա՝ կյանքում, բայց ո՛չ երբեք՝ բնականոն և ընդունելի: Այս դեպքում է արդեն, որ մենք անհերքելիորեն պետք է ընդունենք ՄԵՂՔԻ ներկայությունը և Ավետարանչի պես միշտ հիշենք, թե «մեղքը ԱՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ Է» (Ա ՀՈՎՀ. Գ 4): Այսինքն՝ մեղքը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ օրինաց խախտում, զանցառություն՝ օրենքի դեմ:

Արդ, եթե մեղքն էապես և տիրականորեն ներկա է մեր կյանքում, ապա մեծագույն ինքնախաբեություն է «ՄԵՂՔ» բառից ու բառաբացատրությունից խուսափելը, փախչելը: Եթե մեղքը կա, ուրեմն ժամանակավրեպ չէ երբեք զղջման ու ապաշխարության մասին խոսելը: Հետևաբար, ՄԵԾ ՊԱՀՔՆ այսօր նույնքան այժմեական է իր իմաստով ու նշանակությամբ: Եվ, սակայն, թող մեզ չմոլորեցնի «ՊԱՀՔ» բառը, որն առհասարակ կապում ենք կերակուրների հետ: Եթե իրավամբ պահեցողությունը միայն կերակուրների հետ առնչվեր և կամ ինքն իրեն ֆիզիկապես տրտմեցնելն ու չարչրկելը լիներ, ապա այն ոչ միայն մերօրյա, այլև բոլոր ժամանակների համար էլ թյուրիմացություն կնկատվեր: Սակայն Աստված Ինքը Եսայի մարգարեի բերանով քննադատեց պահեցողության այդ սխալ ըմբռնումը և փոխարենը մատնանշեց նրա իրական գաղափարը (ԵՍԱԾԻ ԵԸ 3-7, 9-10, 13-14):

Որքա՜ն պարզ ու հստակ է Աստծու խոսքը: Տիրոջ պահանջած

պահեցողությունն ուղղումն է մեր կյանքի, սրբագրումը մեր թերացումների, բարեփոխումն ու բարվոքումը մարդկային և ընտանեկան մեր հարաբերությունների, մեր բարոյական ամուր և օրհնաբեր սկզբունքների, ինչպես նաև՝ դերի ու պատասխանատվության բարձր գիտակցումը: Իսկ այս ամենը կյանքը ղեկավարող սկզբունքներ են:

Մեծի Պահոց շրջանը տարվա մեջ մեկ անգամ մեզ կոչում է ինքնակրթության, վերադաստիարակման: Կարելի՞ է ժամանակավրեպ համարել Աստծու կամքին հաղորդ դառնալը: Երբե՛ք: Իսկ թե որո՞նք են պտուղները Աստծու պահանջած պահեցողության, դարձյալ կիմանանք հենց Աստվածային խոսքի ընթերցումից՝ մեր ձեռքն առնելով Գրքերի Գիրքը (ԵՍԱՅԻ ԾԸ 8-9, 11, 14):

Որքան իրական են պատվիրանազանցության (=*մեղքի*) հետևանքները, նույնքան իրական է պատվիրանապահության (= *պահեցողության*) բերած օրհնությունը, Աստծու օրհնությունը: Այդ օրհնությունը, լուսավորության, բժշկության, արդարության ու ամենալից հաջողության խոստումները չեն վերաբերվում անդենականին, այլ մեր ներկա կյանքին, ա՛յս աշխարհին, ա՛յս «*երկրի վրա*»:

***

Վերջում կամենում եմ փոքրիկ, սակայն սքանչելի ու բացառիկ մի օրինակ ընծայել «*Էջմիածին*» ամսագրի ընթերցողներին՝ հետևություն և դաս քաղելու հնարավորությունը թողնելով յուրաքանչյուրին յուրովի...

Ջմռան մի օր ուսուցիչը կանչում է աշակերտներին և պատվիրում վազել ձյան վրայով՝ պարգև խոստանալով նրանց, ովքեր, ուղիղ հետագիծ թողնելով, կանցնեն իրենց ճանապարհը: Բոլոր աշակերտներն էլ վազում են: Սակայն միայն մեկին է հաջողվում ուղիղ հետագիծ թողնել: Ուսուցիչը հարցնում է՝ ինչպե՞ս վազեցին: Բոլորն էլ պատասխանում են, թե, ուշադիր հետևելով իրենց ոտքերին, ջանացին ուղիղ վազել: Նրանք անհաջողակներն էին: Ուսուցիչը նույն հարցն ուղղում է նաև պարգևի արժանացողին: Վերջինս պատասխանում է, թե, ոտքերին ուշադիր հետևելուց ավելի, հանդիպակաց բարձր, երկնուղեշ ծառն է իր համար նշանակետ ընտրել և, դիմելով դեպի այն, կարողացել է, ուղիղ ընթացքով անցնել իր ճանապարհը...

Կամենո՞ւմ եք արդյոք դուք ևս արժանանալ ուղիղ և անխոտոր այս ընթացքի պարգևին, ուրեմն ընդառաջ գնացեք դեպի ազնիվ ու բարձր գաղափարները, դեպի Աստվածատուր պատվիրանների ամրագրումը, դեպի հավիտենություն...


ԳԱՐԻՆ ՏՐԴԵՍԵՆ
ՊԱՐՏՈՆԱԿԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՆԹԱՐԿՎԵՑ ՆՈՐ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅԱՆ

Ինչպես հայտնի է, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, անցած տարվա հոկտեմբեր ամսին Նյու Յորքում կատարված նոր վիրահատությունից հետո, շարունակում էր հետվիրահատական ապաքինման շրջանն անցկացնել Միացյալ Նահանգներում: Նորին Սուրբ Օծության առողջական վիճակին հետևում էր դոկտոր Ռոյ Սեյշոնը:

Վերջերս Վեհափառ Հայրապետը ենթարկվեց լրացուցիչ բժշկական քննության:

Համաձայն փետրվարի 3-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ստացված հաղորդագրության, որն ուղարկել է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը, տեղեկանում ենք, որ քննության արդյունքում բժիշկները նպատակահարմար են գտել կատարել ևս մեկ վիրահատություն: Վեհափառ Հայրապետի վիրահատությունը նշանակվել էր սույն թվականի փետրվարի 5-ին, ուրբաթ օրը:

Այս կապակցությամբ փետրվարի 4-ին ԱՄՆ մեկնեց Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը՝ տեսակցելու Նորին Սրբության հետ:

Վիրահատությունը տեղի ունեցավ փետրվարի 5-ին Նյու Յորքում, որտեղից ուղարկված հաղորդագրությամբ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը հայտնում է, որ, ըստ գլխավոր վիրաբույժ դոկտոր Ռոյ Սեյշոնի, վիրահատությունն անցել է բարեհաջող:

Վիրահատությունից հետո Վեհափառ Հայրապետը, բժիշկների անմիջական հսկողության տակ, կանցկացնի ապաքինման շրջան: Դոկտոր Սեյշոնի գնահատմամբ, Նորին Սուրբ Օծության վիճակը կայուն է: Վեհափառ Հայրապետը հիվանդանոցում կմնա շուրջ տասն օր:

***

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԱՊԱՔԻՆՄԱՆ ՇՐՋԱՆՆ ԱՆՑԿԱՑՆՈՒՄ Է ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ

Փետրվարի 17-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը դուրս գրվեց հիվանդանոցից և շարունակում է ապաքինման

շրջան անցնել Նյու Յորքում՝ գլխավոր վիրաբույժ Ռոյ Սեյշոնի անմիջական հսկողությամբ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ստացված հաղորդագրության համաձայն, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը տեղեկացնում է, որ կազդուրման շրջանը հավանաբար կտևի 4-6 շաբաթ:

Բժիշկները գոհ ու լավատես են վիրահատության արդյունքներով:

Փետրվարի 19-ին Նյու Յորքից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին վերադարձավ նաև Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը:

Սրբազան Հայրը նաև հաստատեց Մայր Աթոռ ստացված տեղեկությունները՝ Նորին Սրբության ապաքինման ընթացքի և արդյունքների մասին:

Հավատավոր հայ ժողովրդի հետ շարունակենք աղոթել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շուտափույթ ապաքինման և արևշատության համար:

ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին, վիրահատության առիթով, շուտափույթ ապաքինման բարեմաղթանքներ են հղել Մեծի Տանն Կիլիկիո Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսը, Երուսաղեմի Հայոց Պատրիարք ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը, Կոստանդնուպոլսո Հայոց Պատրիարք ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը, Վատիկանից՝ Կաթոլիկ Եկեղեցու պետ Ն.Ս. Հովհաննես Պողոս Բ Պապը, Ռուս Օրթոդոքս Եկեղեցու պետ Ն.Ս. Ալեքսիյ Բ Պատրիարքը, Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Խոսրով Հարությունյանը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Արկադի Ղուկասյանը, պաշտոնատար այլ անձինք:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը խորին շնորհակալություն է հայտնել բոլորին՝ իր նկատմամբ ցուցաբերած ուշադրության և ազնիվ զգացումների այս արտահայտությունների համար:

Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՉԱՊԱԼՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ, ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի ՆՅՈՒ ՅՈՐՔ

Վեհափառ Տեր,

Վարդանանց տոնի և Ձերդ Սրբության անվանակոչության տոնի առթիվ, հանուն Մայր Աթոռի միաբանության, պաշտոնեության, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչության, դասախոսների և ուսանողության, շնորհավորում եմ Ձերդ Վեհափառությանը՝ մաղթելով Ձեզ շուտափույթ և կատարյալ առողջություն:

Թող Բարեգութն Աստված Ձեզ շնորհի համբերություն, որպեսզի լիովին ապաքինված վերադառնաք ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ իբրև մեր սիրելի Վեհափառը և Հովվապետը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ հովվելու մեզ:

Հանուն բոլորի մատչիմ ի համբույր Օծյալ Աջույդ՝

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՉԱՊԱԼՅԱՆ
Դիվանապետ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

11 փետրվարի 1999

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ ԱԼԵՔՍԻՅ Բ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Համայն Ռուսիոյ և Մոսկվայի Պատրիարք Ալեքսիյ Երկրորդի ծննդյան 70-ամյա հոբելյանի առիթով փետրվարի 16-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության անունից շնորհավորական հեռագիր հղեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: Հեռագրում ասվում է.

«Ձերդ Սրբություն,

Հանուն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության, մեծագույն ուրախությամբ ու սիրո մեծ զգացումով շնորհավորում ենք Ձեզ՝ Ձեր ծննդյան 70-ամյակի առիթով:

Աղոթում ենք առ Աստված, որպեսզի Տերը շնորհի Ձեզ քաջառողջություն, երկար տարիների կյանք և անսպառ իմաստություն՝ ի նպաստ Ռուս Ուղղափառ Եկեղեցու և ռուս ժողովրդին ծառայելու մեծ գործին»:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆԴԻՊԵՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՍ. ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ՀԵՏ

ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանը փետրվարի 19-ին ընդունեց Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանին:

Սրբազան Հայրը, որ նոր էր վերադարձել Միացյալ Նահանգներից, Ռոբերտ Քոչարյանին տեղեկացրեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի առողջական վիճակի մասին և նշեց, որ հետվիրահատական ապաքինումը բավականին հաջող է ընթանում:

Զրույցի ընթացքում արծարծվեցին նաև Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակման 1700-ամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքին, ինչպես նաև պետություն-Եկեղեցի փոխհարաբերություններին վերաբերող հարցեր:

Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱԼՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԾՆՆԴՅԱՆ 80 ԵՎ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ 60-ԱՄՅԱԿՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՎՈՒԹՈՒՆ
Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ՍՐԲՈ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Ամենապատիվ Սրբազան Հայր,

Հանուն Մայր Աթոռի միաբանության, Գերագույն Հոգևոր Խորհրդի, Մայր Աթոռի պաշտոնեության և Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչության ու սաների, սրտի անհուն գոհունակությամբ բերում ենք մեր շնորհավորանքները՝ Ձերդ Ամենապատվության 80-րդ տարեդարձի, ինչպես նաև քահանայական ձեռնադրության 60-ամյակի առիթով:

Բեղուն ծառայությամբ և հոգևոր նվիրումով առլեցուն այս տարեդարձները միայն պատիվ ու փառք կարող են շնորհել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն բոլորով սրտիվ նվիրված Ձեր անձին:

Մեր բոլորի սրտագին մաղթանքն է, որ Ամենաբարին Աստված Ձեզ պարգևի երկար տարիների բեղմնավոր կյանք և իմաստություն՝ առաջնորդելու Սրբոց Հակոբյանց զինվորյալ միաբանությանը փառքից փառք և ուղիղ վարդապետությամբ հովվելու Ձեզ վստահված դարավոր պատմություն ունեցող առաքելահաստատ Սուրբ Աթոռը Սրբոց Հակոբյանց:

Շնորհավոր երջանիկ զույգ տարեդարձեր և քաջառողջ երկար կյանք Ձերդ Ամենապատվության:

Խոնարհ աղոթակից՝

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱԼՅԱՆ
Դիվանապետ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

17 փետրվարի 1999

ԿՐՈՆԸԿԸՆ

Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(14 փետրվարի, կիրակի, 1999 թ.)

«Արդ, արձակեա զծառայս քո, Տէր, ըստ բանի քում ի խաղաղութիւն. զի տեսին աչք իմ զփրկութիւն քո՝ զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց»:

(Ղուկաս Բ 29-31)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Հիսուս Քրիստոսի քառասնօրյա եղած ժամանակ Տաճարին ընծայման տոնն է այսօր: Երեկ գիշեր, երեկոյան ժամերգության ընթացքում, մենք կատարեցինք «Հիսուսի Տաճար ընծայման» նախատոնակը, ապա անդաստան կատարեցինք և Հոգևոր Ճեմարանի մարզադաշտում եկեղեցուց տարված մոմի կրակով լուցանեցինք, վառեցինք այն խարույկը, որ խորհրդանշում է Լույսը՝ բերված Քրիստոսի աշխարհ գալով: Եվ այսօր հոծ բազմությամբ հավաքվել ենք այստեղ՝ հիշատակելու Հիսուսի Տաճար ընծայման պատմությունը՝ դեռևս քառասուն օրական եղած ժամանակ:

Հիսուսի ծնողները՝ Հովսեփն ու Մարիամը, ըստ հրեական ավանդության, իրենց անդրանիկ որդուն տարան Երուսաղեմ՝ ընծայելու Տաճարին: Սովորություն էր, որ ընտանիքի առաջնեկ որդին Աստծուն պատկաներ: Եվ որովհետև Աստծուն պատկանելը նշանակում է Տաճար ընծայել, այդ սովորությունը Հիսուսի համար ևս կատարվեց. տարան Նրան և ընծայեցին Աստծուն: Եվ այդ առթիվ, ըստ սովորության, տարան մի զույգ տատրակ:

Պատմությունից գիտենք, որ ըստ օրենքի միայն ղևտացիները քահանայության աստիճան կարող էին ունենալ, և երբ հրեական տասներկու ցեղերից զավակներ էին ընծայվում Տաճար, այդ առթիվ ընծա էր բերվում՝ ղևտացի քահանային տալու համար: Տաճարում շատ հատկանշական մի դեպք պատահեց. այնտեղ մի ծերունի կար, պատմությունն ասում է, թե երեք հարյուր երեսունհինգ տարեկան էր նա, և իրեն խոստացված էր տեսնել Մեսիային և նոր միայն կյանքից հեռանալ: Համաձայն եկեղեցական ավանդության, դեռևս Քրիստոսի ծննդից երկու հարյուր ութսունհինգ տարիներ առաջ նա մասնակցել է Սուրբ Գրքի եբրայեցերենից հունարենի թարգմանությանը, որ կոչվում է «Յոթանասնից թարգմանություն»:

Տիրոջ Տաճար ընծայման օրը երեք հարյուր երեսունհինգ տարեկան այս ծերունին, Սուրբ Հոգու առաջնորդությամբ, գտնվում էր այնտեղ: Հավանաբար նա ղևտացի քահանա էր: Այս մասին Ավետարանը ոչինչ չի գրում: Ծերունին,

Հիսուս մանկանը՝ Տաճարի խորանի առջև բերելով, փառք է տալիս Աստծուն և ասում՝ արդ, արձակիր Քո ծառային, որովհետև իմ աչքերը տեսան մարդկության փրկությունը:

Ծերունին, երեք հարյուր երեսունհինգ տարեկան հասակում, Տաճարում, աղոթքի պահին, հանդիպում է իր Փրկչին՝ Մեսիային, և, գրկելով Նրան, փառք տալիս Աստծուն, քանզի վերջապես տեսավ աշխարհի փրկությունը: Հանդիպեց ողջ մարդկության համար նոր վարդապետության սկիզբը դնողին, հանդիպեց մարդ-Աստված հաշտությունը կնքողին, և ինչպե՞ս պիտի չուրախանար՝ գրկելով այդ մանկանը: Հավանաբար ուրախության, խանդադատանքի արցունքներ աչքերից հոսեցին և անմիջապես մտածեց, որ, իր ժողովրդի փրկությունը տեսնելով, եկել է նաև իր վախճանը: Այնտեղ գտնվող մի մարգարեուհի, Աննա անունով, նույնպես փառք էր տալիս Աստծուն և փառաբանում Հիսուս մանկանը և մարգարեական իր շնչով ասում, թե ինչ պիտի պատահեր Նրան, ինչպիսի դժվարությունների միջից պիտի անցներ, խաչի վրա պիտի բարձրանար՝ Իր անմեղ արյունը թափելու, դրանով իսկ սրբելու ու մաքրելու ոչ թե Իր մեղքերը, այլ մե՛րը, մարդկության մեղքերը, և ինչպիսի վեհ զոհողություն էր կրելու այդ փոքրիկ մանուկը:

Սիրելի հավատացյալներ, չմոռանաք, որ այսօր Բուն Բարեկենդան է նաև, բայց քանի որ Տյառնընդառաջը Տիրոջը նվիրված տոն է, այդ պատճառով Բուն Բարեկենդանի Պատարագը փակ վարագույրով տեղի չի ունենում, վարագույրներով փակված չէ խորանը, և մենք կարողանում ենք Բուն Բարեկենդանի այս օրը, որ տերունական տոնակատարությամբ դարձել է Տյառնընդառաջի տոն, իսկ Պատարագից հետո Սուրբ Խորանները պիտի փակվեն, այս երեկոյից սկսած մեր եկեղեցու արարողություններն ավելի հանդարտ, խաղաղ և աղոթալից շեշտով պիտի կատարվեն: Վաղվանից սկսվում է Մեծ Պահքը:

Նրանք, ովքեր պատրաստ են այս զոհողությունը հանձն առնել, թող քառասուն օր մեզ հետ քայլեն Քրիստոսի խաչի ճանապարհով՝ զոհողությամբ, աղոթքով, պահեցողությամբ: Բայց պահեցողությունը ուտելիքը չէ միայն, պահեցողությունը լեզուն ևս զսպելն է: Ով կարողանա լեզուն զսպել, հավանաբար մսեղեն չուտելուց ավելի մեծ զոհողություն արած կլինի:

Վաղվանից ապաշխարության շրջան է. աղոթքով, հսկումով, ներքին անդրադարձով և զոհողություն կատարելով այն անցկացնենք: Եթե տեսնենք, որևէ մեկը հաց չունի, մեր հացի կեսը նրան տանք, եթե տեսնենք որևէ մեկին նեղության մեջ, օգնենք նրան, որովհետև Ավետարանն ասում է. «Կուզեմ զոհողություն և ոչ թե զոհ» (Մատթ. ԺԲ 7): Աշխարհը փրկության կգնա զոհողության վրա հիմնված: Աշխարհը առանց զոհողության, առանց բարերարության և առանց համեստության այսօր հնարավոր չէ փրկության տանել:

Ուրեմն, սիրելի հավատացյալներ, այսօր Հիսուսի՝ Տաճար ընծայման տոնով խանդավառված, լցված և Լույսի փառաբանությունը կատարելով, գնանք դեպի վաղվա օրը՝ զոհողություն հանձն առնելով, ապաշխարության դիմելով և քառասնօրյա պահեցողության շրջանը դարձնելով մեզ համար մեղքերից սրբվելու, մաքրվելու մի առիթ:

Օրհնված լինեք, հանուն մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի. ամեն:

ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՀՈՎՆԱՆ ԱՐՔԵՊ. ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(7 փետրվարի, կիրակի, 1999 թ.)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի միաբանակից եղբայրներ, ճեմարանի սաներ և հավատացյալ ժողովուրդ:

Այսօր ձեզի, որպես քարոզի բնաբան և այդ բնաբանի վրա զարգացած խորհրդածություններ, կուզեմ ներկայացնել Պողոս Առաքյալի՝ Տիմոթեոսին ուղղված երկրորդ նամակեն հատված մը, որը տակավին շաբթվա ընթացքին, հինգշաբթի երեկոյան, դարձուցի նաև խոկումի և խորհրդածության նյութ, երբ այս տաճարի մեջ աղոթքի և խոկումի միացա ճեմարանի սաներու հետ: «Մեծ տան մը մեջ ոչ միայն ոսկե և արծաթե անոթներ կունենանք, բայց նաև փայտյա և խեցե: Կան այնպիսիները, որոնք պատվավոր գործածության համար են, կան էլ այնպիսիները, որ ոչ պատվավոր գործածության համար են: Եվ եթե մեկը ինքն իրեն կմաքրե, կդառնա պատվավոր անոթ, սրբագործված և պիտանի իր Տիրոջը՝ պատրաստված բոլոր տեսակի բարի գործերի համար» (Բ Տիմոթեոս Բ 20-21):

Տունը, սիրելի բարեպաշտ հավատացյալներ, որու մասին կխոսի Պողոս Առաքյալ, եկեղեցին է, որուն մեջ անոթները մենք ենք, և եթե մեր անձերը հոգևորապես կհարստացնենք, ապա կդառնանք պատվավոր անոթ, սրբագործված և պիտանի Աստծո՝ մանավանդ պատրաստ բոլոր տեսակի բարի գործերի համար: Եկեղեցին, որու մասին Պողոս Առաքյալ կխոսի «Մեծ տան» պատկերով, Աստծո կողմե ճարտարապետված շենքն է, որպես սյուն և հաստատություն ճշմարտության, որուն հիմքերն են մարգարեները և առաքյալները, և անոր անկյունագլուխը Քրիստոս Ինքն է: Եկեղեցին, որու մասին Պողոս Առաքյալ կխոսի «Մեծ տան» մտածումովը, այն ընտանիքն է, որուն անդամներուն մեջ կխմորվի «զՔրիստոս զգեցարուք» գիտակցությունը:

Եկեղեցին, որի մեջ կփառավորվի Քրիստոս, Ավետարանի լույսովը կպատգամե մեզի, որպեսզի հավատացյալներս դառնանք Աստծո պիտանի անոթ, և ինչպես ամեն տունի մեջ, նույնպես Աստծո տան մեջ կան բազմաթիվ անոթներ. մենք իսկ ենք այդ անոթները: Ինչպես այդ կարգի իրեղեններու, անոթներու բուն արժեքը ոչ այնքան իրենց նյութի բնության, որքան իրենց գործածելիության հարմարության մեջ կկայանա, ահա նույնպես մեր արժանիքը պետք է տեսնենք ոչ թե մեր դիրքի և աստիճանի առավելության, այլ ընդունակության ու պատրաստակամության մեջ, որոնցմով մենք կրնանք ինքզինքնիս պիտանի ու վայել անել Աստծո կամքին՝ մարդկության փրկության ծրագրի գործածության համար:

Սիրելի բարեպաշտ հավատացյալներ, մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Ծնունդեն հետո հինգերորդ կիրակին է այսօր, և առաջիկա կիրակին, մեր Եկեղեցվո տոնացույցի համաձայն, Տյառնընդառաջի տոնն է:

Տյառնընդառաջը մանուկ Հիսուսի «Քառասնօրյա Տաճար ընծայման» օրն է: Հրեական սովորության համաձայն, նորածին մանուկը իր ծնունդեն քառասուն օրեր հետո Տաճար կտանին՝ Աստծուն ընծայելու համար, և այդ սովորությունը անցած է նաև մեր եկեղեցվո կյանքին մեջ: Սակայն այդ տոնը՝ Տյառնընդառաջը, միայն մանուկներու համար Տաճար ընծայման օր մը չէ, որ պետք է ըլլա: Տյառնընդառաջը պետք է ըլլա բոլորիս համար նվիրական տոն մը՝ մեր կյանքը Աստծուն վերընծայելու տեսակետեն: Սհավասիկ, հրաշալի առիթ մը, որպեսզի մեր հոգևոր կյանքը առաջնորդենք վերածնունդի և Աստծուն վերընծայումի: Որպես եկեղեցվո սպասավորներ, հոգևորականներ, ուսուցիչներ, հասարակական գործիչներ, վերջապես, բոլորս անխտիր, ամեն ժամ պետք ունինք նորոգելու աստվածապարգև մեր կյանքը, որպեսզի այն դարձնենք պիտանի Տիրոջը, և մեր էության մեջ վերակերտենք երկնավորի պատկերը:

Սիրելի հավատացյալներ, Ավետարանը կպատգամե, որ մեր կյանքը կապենք եկեղեցիին, որը մեզի կպատմե Հիսուսի կյանքը բոլոր հանգրվաններով՝ անոր ծնունդեն մինչև հարություն, Առաքյալներեն մինչև Սուրբերը, որպեսզի հոգևորապես զարգանանք և դառնանք ճշմարիտ հետևողները Քրիստոսի և արժանի ըլլանք՝ ստանալու քրիստոնյայի կոչումը: Մեր խորհրդածություններն ամփոփելով, կհրավիրենք ձեզի, որ, մեզի հետ միասին, դուք ալ հաջորդ շաբաթը դարձնեք հոգևոր պատրաստության ժամանակամիջոց մը, որպեսզի երբ տոնախմբենք Հիսուսի «Քառասնօրյա Տաճար ընծայումը», զգանք ու ապրինք այնպես, որ մեր կյանքը, աղոթքով սրբելե ու մաքրելե հետո կընծայենք Աստծո և այդ ընծայումը կիմաստավորենք ժողովրդին ծառայելով: Հետևաբար, թող գալիք օրերը ըլլան աղոթքի, ներհայեցողության շրջան մը, կյանքը ծառայության վերափոխելու գիտակցությունը մշակելու օրեր և, վերջապես, կյանքը դարձնելու զԱստված փնտրելու ճանապարհ. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

«Շնորհ, սէր և խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ՝ ընդ ամենեսեանդ. ամէն»:

***

Սիրելի բարեպաշտ հավատացյալներ, լուսարարապետ Սրբազանի խնդրանքով կուզենք ձեզ բոլորդ իրազեկ դարձնել, որ անցնող ուրբաթ օրը, Նյու Յորքի մեջ, ազգիս Վեհափառ Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսը վիրաբուժական գործողության մը ենթարկվեցավ: Փառք Աստծո, մեզի տրված տեղեկությանց համաձայն, այդ գործողությունը, որ երկրորդն է անցնող ամիսներու ընթացքին, անցած է բարեհաջող, և միաբանությունը Վեհափառ Հայրապետին հղած է իր բարեմաղթությունները բարի ապաքինման, ինչպես նաև ձեր բոլորի անունով՝ բարի զգացումներ, և ձեր բոլորի սերը և հարգանքը:

«Տէր ողորմեայի» պահուն, սիրելի բարեպաշտ հավատացյալներ, բոլորս միասին աղոթք վերառաքենք առ Աստված, որպեսզի զորացնե, բժշկե Վեհափառ Հայրապետը, որպեսզի կարճ ժամանակամիջոցի մը ընթացքին անիկա, ամբողջապես վերագտած իր նախկին առողջական վիճակը, վերադառնա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, որպեսզի այստեղեն շարունակե հովվապետել Հայաստանյաց Առաքելական մեր Մայր Սուրբ Եկեղեցին:

Տ. ՄԻՔԱՅԵԼ Ծ. ՎՐԴ. ԱՋԱՊԱՀՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ՀՌԻՓՍԻՄԵ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(21 փետրվարի 1999 թ.)

«Տեր, ողորմեաց մեզ, զի ի Քեզ յուսացաք»:
«Տեր, ողորմիր մեզ, որովհետև Քեզ հուսացինք»:
(ԵՍԱՅԻ ԼԳ 2)

Սիրելի հավատացյալներ, ահա մեկ շաբաթ անցավ ապաշխարության, պահեցողության, խոկումի ու աղոթքի այն շրջանից, որ կոչվում է Մեծ Պահք: Եվ ահա Մեծի Պահոց այս առաջին կիրակի օրը, փակյալ խորանի առջև, որը մեզ հիշեցնում է կորուսյալ դրախտի իրականությունը, հավաքվեցինք՝ աղաղակելու և ասելու. «Տեր, ողորմիր մեզ, որովհետև Քեզ հուսացինք»: Եսայի մարգարեի այս խոսքերն են այսօր հնչում մեր ականջներին, երբ մեր Առաքելական Սուրբ Եկեղեցու կանոնի և կանոնակարգի համաձայն առաջին կիրակին, Բուն Բարեկենդանից հետո, նվիրված է դրախտից մարդու արտաքսման իրողությանը: Այսինքն՝ հիշեցնում է մեզ, որ կար մի ժամանակ, երբ մարդն ապրում էր երանական դրախտում:

Այն ամենը, ինչ ստեղծվել էր Արարչագործության ժամանակ Աստծո կողմից, տրված էր մարդուն ի վայելումն, և ոչ միայն այդ, այլ նաև ողջ Արարչագործության ծիրի մեջ Աստված ստեղծել էր մի երանական և եդեմական պարտեզ, որտեղ չկար ո՛չ ցավ և ո՛չ հեծություն, չկար ո՛չ վիշտ, ո՛չ հալածանք, ուր կար միայն Աստծո ներկայությունն ու Աստվածային տեսությունը: Եվ վայելում էր մարդն այդ Աստվածային ներկայությունը, Աստվածային տեսությունը՝ լիակատար և լիարժեք կերպով, անձ՝ անձի հետ հարաբերությամբ: Սակայն գիտեք, որ Արարչագործության այդ սկզբնական օրերին տեղի ունեցավ խաթարումը մարդկային կյանքի, խափանումը արարչագործ ներդաշնակության, խանգարումը Աստծո և մարդու իրական հարաբերության ու Աստվածային տեսության, խառնակումը բարու և չարի: Սա տեղի ունեցավ այն պատճառով, որը մենք ուրիշ բան չենք անվանում, եթե ոչ՝ մեղք: Աստվածաշնչական պատումը շատ գեղեցիկ և բանաստեղծական կերպով ու հուզումով է նկարագրում այդ մեղքը՝ եդեմական պարտեզում մարդու՝ Աստվածային պատվիրանին չհնազանդվելու և, Աստվածային պատվիրանին չհնազանդվելով, այդ պատվիրանը ոտնահարելու ու իր սեփական մտքով, սեփական խելքով, սեփական ձեռնհասությամբ Աստծուն մոտենալու և աստվածանալու այդ մոլուցքը:

Բազմիցս կարդացել ենք այդ պատմությունը, բազմիցս հնչել է մեր ականջներին, թե ինչպես մեր նախամայրը՝ Եվան, երկխոսության մեջ մտավ չարի հետ: Երկխոսության մեջ մտնելով՝ կասկածի սերմը ցանվեց իր հոգուց ներս, և նա կասկածեց աստվածային անհուն բարությանը, աստվածային անհուն գթությանը, աստվածային անսահման ողորմությանը և Աստծո

ստեղծած այն կարգ ու կանոնին, որի մեջ ապրում, գործում էր ոչ միայն մարդը, այլ նաև ողջ ստեղծագործությունը: Նախամայրը կասկածեց Աստծո պատվիրանի ճշմարտացիությանը: Այդ կասկածը եկամուտ էր, դրսից էր, այն նախասկզբնական չարից էր, որին մեր Տեր Հիսուս Քրիստոս անվանում է «ի սկզբանե մարդասպան»: Եվ այդ կասկածամտությամբ, արդեն մինչև իսկ այդ խորհրդանշական կամ իրական պտղի ճաշակումը, եվան մեղանչեց: Մեղանչեց նաև Ադամը: Նրա մեղքը կայացավ Աստծո ներկայությունը, Աստծո իրական գոյությունը իր կյանքից ներս մերժելու և արհամարհելու մեջ, որովհետև Ադամը կարծեց, թե այն, ինչ ինքն անում է, Աստված կարող է չտեսնել, Աստված կարող է չնկատել, որովհետև այդ պահին ինքն իր կողքին չզգաց Աստծո ներկայությունը, ինքն իենից այդ պահին դուրս վանեց Աստծո ներկայությունը:

Նա իր մարդկային նախնական միամտության մեջ կարծեց, թե Աստված կարող է տեսնելով տեսնել և չնկատել գործված մեղքն ու կատարված ոճիրը: Ուրեմն, մեր նախամայրն ու նախահայրը մեղանչեցին յուրաքանչյուրը յուրովի. մեկը՝ կասկածամտությամբ, մյուսը՝ Աստվածային ներկայությունն անտեսելով, սակայն երկուսի գործած մեղքն էլ իր արտահայտությունը գտավ միևնույն արարքի մեջ, որ էր՝ մոտենալ ծառին և քաղել ծառից այդ պտուղը: Դա հենց նշանակում էր Աստվածային պատվիրանի ոտնահարում: Ուրեմն երկու տարբեր մոտեցումներ, երկու տարբեր հոգեմտավոր գործողություններ տարբեր մարդկանց մղեցին միևնույն մեղքին՝ Աստվածային պատվիրանի ոտնահարմանը:

Այսօր, երբ մենք հավաքված մեկ անգամ ևս մեր մտքի ու հոգու մեջ վերարթնացնում ենք այդ արտաքսման դառն իրողությունը, և եթե նայում ենք ինքներս մեր մեջ, ինքներս մեր շուրջը, ապա տեսնում ենք, որ դարձյալ, ինչպես այդ նախասկզբնական ժամանակներում, այնպես էլ այսօր, աստվածային պատվիրանների զանազան ոտնահարումները տեղի են ունենում այդ երկու հոգեմտավոր մղումներից: Ոմանց մոտ մեղքը և մեղանչումը տեղի է ունենում կասկածամտությունից: Եվ դարձյալ, ինչպես ամենասկզբում, սկզբնատիպ չարը մոտենում է, քաշում մեզ երկխոսության մեջ և մեր սրտի ու հոգու ներսում կասկածամտություն սերմանում այն սկզբնական և հավիտենական ու անփոփոխելի բարու նկատմամբ, որ է Աստված: Եվ հաճախ մենք այդ երկխոսության, այդ խոսակցության ընթացքում պարտվում ենք, մեր գենքերը վայր ենք դնում, կասկածի սերմը ծլում և ծլարձակում է մեր հոգիներից ներս, և մենք կասկածում ենք Աստվածային բարությանը, Աստվածային ողորմությանը, Աստվածային անսահման ու անհուն ներդաշնակությանը:

Զանազան առիթներով մարդկային հասարակության մեջ, մեր պատճառով, մեր սխալների, մեր մեղանչումների պատճառով, մենք ականատես ենք լինում դժբախտությունների, վշտերի, հալածանքների: Այդ ամենը փոխանակ բացատրելու այն իրողությամբ, որ աստվածային պատվիրանների ոտնակոխ անելու հետևանքով ենք մենք հանդիպում նման հալածանքների, նման վշտերի, ընդհակառակը՝ կասկածում ենք. կասկածում ենք Աստծո բարությանը, և մեզանից ծնված չարը, մեզանից ծնված չարիքը փորձում ենք վերագրել Աստծուն: Նման կասկածամտությամբ այսօր ևս բազմաթիվ

արարքներ են տեղի ունենում, բազմաթիվ հանցագործություններ և զանցանքներ են կատարվում, որովհետև կասկածում ենք Աստվածային իրապես անսահման և անհուն բարությանը: Շատ հաճախ գործում ենք նաև մեղքեր՝ ադամական հոգեմտավոր կարողության սահմաններում, որովհետև կարծում ենք, թե Աստված բացակա է:

Մեղանչում ենք, որովհետև կարծում ենք, թե Աստված չի տեսնում, մեղանչում ենք, հանցանք ու զանցանք ենք գործում, որովհետև կարծում ենք, թե Աստված այս պահին ուրիշ գործերով է զբաղված, կամ մեր այդ փոքրիկ հանցանքը կամ զանցանքը Աստծո ուշադրության համար անարժան ենք համարում: Եվ շարունակում ենք այդ իմաստով մեղանչել և նմանվել ինչպես առաջ, այնպես էլ այսօր՝ մեր նախամորն ու նախահորը: Սակայն Սուրբ Գիրքն ասում է, թե ո՞վ է այն մարդը, որ ապրում է և մեղք չի գործում:

Մարդկության արշալույսին տեղի ունեցած այդ ողբերգությունը խաթարել, խափանել, հաղթահարել է մեր բնությունը, և մենք, որպես մարդ, մեղանչական էություն, մեզ դնելով ուղղակի չար զորությունների հարձակման տակ, ստիպված ենք մեր ամենօրյա կյանքում պայքարել: Այդ պայքարը շատ հաճախ ուղեկցվում է մեղանչումներով: Սակայն երբ կարծում, մտածում ու համոզվում ենք, որ մեղավոր ենք, ինչիսի՞ն է լինում մեր անդրադարձը՝ մեղավոր լինելու իրականությանը: Դարձյալ վերադառնանք արտաքսման այդ պատումին: Տեսնենք, թե մեր նախահայրն ու նախամայրը ինչպիսի՞ անդրադարձ ունեցան իրենց մեղավոր լինելուն, երբ զգացին, որ Աստված տեսավ, երբ զգացին, որ Աստված իմացավ: Երբ Աստված մտավ եդեմական պարտեզ ու հարցրեց՝ ո՞ւր ես, Ադամ, ինչպիսի՞ն եղավ Ադամի ու Եվայի անդրադարձը: Փորձեցին թաքնվել՝ փոխանակ ներկայանալու Աստծուն, ներողություն խնդրելու, ապավինելու Աստծո անսահման գթությանն ու ողորմությանը, որ ոչ թե արդարությամբ է դատում, այլ գթությամբ՝ քավում: Թաքնվեցին՝ մտածելով, որ թաքնվելով կարող են խուսափել մեղավոր լինելու զգացումից և որպես դրա հետևանք՝ պատժից:

Այսօր էլ մեզանից շատերը երբ մեղք են գործում և երբ զգում են, որ մեղավոր են, անհունորեն ու անսահմանորեն մեղավոր են, փորձում են թաքնվել, խուսափել Աստծուց: Եվ այն ճանապարհով, որ տանում է դեպի Աստված, փորձում են չընթանալ, մեջք են դարձնում այդ ճանապարհին, շուռ են գալիս դեպի այն: Երբ անցնում են փողոցով և տեսնում Քրիստոսի եկեղեցին, շրջանցում են այն, չեն մտնում ներս, չեն խոնարհվում մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Սուրբ Սեղանի առջև՝ կարծելով, թե այդ խուսափումով կամ թաքնվածությամբ պետք է խուսափեն Աստծո ամենատես աչքից: Սակայն Աստծո ամենատես աչքն ամենուր է, նամանավանդ, ամենից առաջ և ամենից առավել, յուրաքանչյուր մարդու հոգու և մտքի ներսում: Յուրաքանչյուրի խիղճը, որպես դատավոր, խոսում է և մշտապես հիշեցնում այդ մասին, որ ինքը մեղանչել է, մեղավոր է:

Եվ նաև Ադամի մյուս անդրադարձը՝ ի դեմս իր մեղավոր լինելու զգացման. Աստծո «ի՞նչ արեց» հարցին ի պատասխան, փորձեց իր մեղքը բարդել կնոջ վրա՝ իր ընկերոջ, իր միակ բարեկամի, իր կողակցի և լծակցի վրա, որովհետև ուրիշ մեկն արդեն իսկ չկար: Այսօր էլ մեզանից շատ-շատերը, երբ մեղանչում

են և մեղք են գործում, փորձում են այդ մեղքի պատճառը և առիթը փնտրել ուրիշների մեջ, այն բարդել ուրիշների վրա, իրենց մեղավորությունը և մեղանչականությունը բացատրել զանազան սոցիալական, ընկերային, հասարակական երևույթներով, ազգային կյանքի խաթարումով, հասարակական կյանքի թերացումներով, ծնողների սխալ դաստիարակությամբ և այլն, սակայն շատ քչերն են փորձում իրենց հոգու և մտքի ներսում տեսնել յուրաքանչյուր ոճրի ու մեղքի սկզբնապատճառը:

Եվ ի վերջո տեսնում ենք, թե որքան նման ենք մեր նախահորն ու նախամորը՝ մեր անբացատրելի մղումով դեպի մեղանչումն ու մեղքը և մեր խուսափումով ու չքմեղությամբ: Ուստի Մեծի Պահոց շրջանը հենց այն ժամանակահատվածն է, երբ մենք ներս ենք մտնում հոգևոր առողջարան՝ ախտորոշելու մեր հոգու հիվանդությունները և ըստ այդմ դեղ ու ճար դնելու մեր հոգևոր վերքերին: Եվ ինչպես մարմինը կարիք ունի բուժման ու խնամքի, այնպես էլ հոգին կարիք ունի սրբվելու և մաքրվելու: Ուրեմն ճիշտ ապրենք մեզ ընձեռնված այս հնարավորությունը՝ փորձելով առավելագույնը քաղել մեր և ձեր օգտի համար: Եվ արտաքսման պատումից ստացած մեր բարոյական դասով ուրիշ բան չունենանք ասելու, եթե ոչ կրկնենք Եսայի մարգարեի խոսքերը՝ «Տէր, ողորմեաց մեզ, զի ի Քեզ յուսացաք»: Ամեն:

Տ. ՎԱՉԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԻՐՋԱԽԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(21 փետրվարի, կիրակի, 1999 թ.)

«Եւ մի՛ կերպարանիք կերպարանօք աշխարհիս այսորիկ, այլ նորոգեցարուք ի նորոգութիւն մտաց ձերոց»:

(Հռոմ. ԺԲ 2)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Եվ մի՛ կերպարանվեք այս աշխարհի կերպարով, այլ նորոգվեցեք ձեր մտքի ու ձեր հոգու նորոգությամբ»:

Սիրելի հավատացյալներ, Պողոս Առաքյալի՝ հռոմեացիներին ուղղված սույն հորդորը շատ պատշաճ է մանավանդ այսօրվա համար, այս կիրակիին, որ Մեծ Պահքի ոսկե շղթայի մեջ անվանված է Արտաքսման Կիրակի: Աստվածաշունչ Մատյանի Ծննդոց գիրքը մեզ ներկայացնում է, թե ինչպես Աստված ստեղծեց ողջ տիեզերքը, որը Աստծու բարության և անպարփակելի սիրո արդյունք էր: Աստված չէր կարող այդ սերը, այդ բարությունը միմիայն Իր մեջ պահել: Նրան անհրաժեշտ էր ստեղծել տիեզերքը, ստեղծել Իր նմանությամբ, Իր կերպարով անձնավորություն, ում հետ կարողանար հաղորդակցվել, ով Իր նմանողությամբ կարողանար հասկանալ ողջ արարչությունը՝ տիեզերական գեղեցկությունը: Եվ ահա, ստեղծելով հրաշալի տիեզերքը, ստեղծեց նաև դրախտը և մարդուն դրեց այդ դրախտի մեջ:

Ամենքս էլ, սակայն, Սուրբգրային պատմությունից տեղյակ ենք, թե ինչպես առաջին մարդը անհնազանդության մեղքով արտաքսվեց դրախտից ու, այդ օրվանից սկսած, իր աշխարհային կյանքը ձևավորեց ինքնուրույն՝ որպես Աստծու ստեղծած ներդաշնակ տիեզերքից խեղաթյուրված մի առանձին էություն: Որքան դժվար է մեզ համար, սիրելիներ, երբ մի պահ փորձենք պատկերացնել, թե ինչ տխուր երևույթ է մարդու համար Աստծու ներկայությունից արտաքսվելը: Եթե երբևէ մեր ծնողները, մեր ընկերները կամ աշխատանքի ծառայության վայրում մեր ղեկավարները մեզ հեռացնում, մեզ վտարում են իրենց ներկայությունից, որքան տխրում և որքան տրտմում ենք, և որքան ևս առավել, երբ մեր մեղքերի դիմաց Աստված մերժում է մեզ, հեռացնում Իրենից. անշուշտ այստեղ ոչ թե Աստված Ինքն է հեռացնում, այլ մարդը, մեղք գործելով, ինքնին հեռանում և մերժում է իր մեջ Աստծուն: Մարդը եթե չմերժի Աստծուն, չի կարող մեղք գործել: Երբ թերթում ենք Աստվածաշունչ Մատյանի Թագավորաց Առաջին գիրքը, մեր առջև բացվում է մի շատ տխուր պատկեր, երբ ասվում է, թե այդ օրերին Իսրայելի ամբողջ ժողովրդի համար Աստված ոչ մի հայտնություն չէր կատարում, և Ինքն Իրեն չէր հայտնում: Նույն այս իրավիճակում էր գտնվում Առաջին մարդը: Եվ ահա շատ անգամ մեր կյանքում դա կրկնվում է:

Աստվածաշունչ Մատյանից իմանում ենք, թե ինչպես մարդուն Աստված

ստեղծեց Իր կերպարով, թե ինչպես մեղքը մտավ աշխարհ և թե այդ մեղքը նրանից հետո ինչպիսի ավերածություններ գործեց: Ահա, քառասնորդական Պահքի այս շրջանը, հաստատված մեր եկեղեցու հայրերի կողմից, հնարավորություն է ընձեռում, որ Աստծու կողմից արտաքսված մարդը, Պողոս Առաքյալի հորդորով, նորոգվի նոր հոգով, նոր մտքով և նորից վերադառնա դեպի Աստված: Սա մի հնարավորություն է, որպեսզի մարդը ներհայեցողությամբ, անդրադառնա իր ներսի հոգևոր մարդուն, նրա հոգին վերափոխի, վերածնունդ տա այդ հոգուն, այնտեղ որոնի Աստծուն ու գտնի Նրան: Եվ, ինչպես պիտի ասեր հետագայում Հակոբոս Առաքյալը. «Մերձենանք Աստծուն, և Աստված կմերձենա մեզ» (Հակոբոս Դ 8):

Երբեք չենք կարող, անշուշտ, ապաշխարող և զղջացող մարդու համար օրեր ժամեր հաստատել: Դա մի ներքին հոգեկան զգացում է, ներքին հոգեկան մղում, որ ամեն օր, ամեն վայրկյան մարդու ներսում խղճմտանքի հետևանքով հնարավոր է, որ բոցավառվի: Սակայն, քառասնորդական այս Պահքի շրջանում, եկեղեցին դադարի, հանգստի մի հնարավորություն է տալիս մարդուն, որովհետև մարդը կարիք ունի առօրյա հոգսերից, պատասխանատվություններից՝ պետության, եկեղեցու, ընտանիքի, տարբեր սրբազան հաստատությունների, նաև իր նկատմամբ պատասխանատվության, դադարի և ինքնաքննության, ինքնամաքրման և ինքնասրբման՝ Աստծուն մերձենալու ճանապարհը որոնելու:

Սիրելի հավատացյալներ, կարող ենք, անշուշտ, հարց տալ. «Ինչու՞ Աստծու նմանողությամբ ստեղծված մարդը մեղք է գործում նաև այսօր»: Իհարկե բազում են պատճառները, մեղանչելու համար բազմաթիվ գայթակղություններ կան, դրանք շատ են մեր կյանքում: Բայց այդ գայթակղությունների կողքին ավելի ցավալի մի երևույթ կա, երբ մարդը չարիքներ է գործում: Եկեղեցու վարդապետները բացատրում են, որ դա անգիտությունից է:երբ մարդը Սուրբգրային ուսմունք չունի, կարող է, այո՛, նաև չարիք գործել: Ահա, անգիտությունը և գայթակղությունը կարող են մարդուն հեռացնել Աստծուց և տանել դեպի կորուստ: Եվ, անշուշտ, այս ամենով հանդերձ, չենք կարող երբևէ հուսահատվել և հուսալքվել, որովհետև Ինքը՝ Քրիստոս մարմնավորվեց, դարձավ մարդ մեր նմանողությամբ, որպես նոր Ադամ, որպես նոր մարդ:

Այսօրվա եկեղեցին, որ հաստատված է Իր կողմից, այդ նույն հնարավորությունն է տալիս երկրի վրա՝ դեպի դրախտ գնացող, դեպի Աստված բարձրացող ճանապարհն է ցույց տալիս: Այսօրվա ավետարանական ընթերցվածները գալիս են օգնելու մեզ: Եթե ուշադիր հետևեցիք, Պողոս Առաքյալի՝ հռոմեացիներին ուղղված թուղթն ամբողջությամբ հորդոր էր հոգևոր նորոգության, չարություններ չանելու, այլ լինելու բարի, և ապա՝ դրա ամենակատարյալ ավարտը, որ երբեք չարին չարով մի հատուցեք, այլ բարությամբ: Ձեր թշնամիներին օգնեք, եթե նրանք ծարավ են, ջուր տվեք, ու դուք դրանով ավելի մեծ պատժի կենթարկեք ձեր թշնամուն: Ապա գալով արդեն Նոր Կտակարանին, երբ ընթերցվեց Մատթեոսի Ավետարանը, Լեռան քարոզի շարունակությունը, այնտեղ ևս Քրիստոս նորոգության կոչ էր անում, թե Ինքը չի եկել հինը ոչնչացնելու, այլ՝ նորոգելու: Իսկ ո՞րն է այդ նորոգությունը: Նորոգությունը՝ կատարյալ մարդ լինելն է, նորոգությունը ողջ

աստվածապաշտության մեջ կատարելության ձգտումն է: Մարդկային այս փոխադարձ հարաբերություններից ձևավորվում է նաև երկնային՝ մարդ և Աստված հարաբերությունը:

Սիրելի քույրեր և եղբայրներ, Արտաքսման կիրակի խորհուրդը կրկին ու կրկին հուշում է մարդուն, որ ինքը, հողեղեն արարած լինելով, նաև հոգեղեն արարած է: Նրա ներսում կա հոգի, և այդ հոգով է, որ ինքը կապվում է իր Արարչին: Աստված Իր ներունակ էությամբ, մնայուն կերպով հետևում է մարդու գործունեությանը: Ինքը մեզ հեռացնելով, արտաքսելով, խրատեց, ինչպես Պողոս Առաքյալը պիտի ասեր՝ «Խրատեց այդ ամենով դեպի Քրիստոս առաջնորդելու համար»: Եվ ահա այսօր, երբ մենք այդ հնարավորությունն ունենք պահեցողության միջոցով մեր հոգին մաքրելու, հիշենք ավետարանական մի քանի գեղեցիկ դրվագներ, ուր Քրիստոս ցույց տվեց, թե գուցե մարդը մեղանչել է, բայց նրա հոգում կա առողջ շունչ, պարզապես այն թմրած է:

Կարող ենք հիշել անառակ կնոջ դարձը, կարող ենք հիշել մաքսավորի դարձը, կարող ենք հիշել նաև անառակ որդու դարձը: Սրանք այն նուրբ և շատ գեղեցիկ հնարավորություններն են, որոնցով Քրիստոս ցույց տվեց, որ Աստված պատժիչ մահակով չի հարաբերվում իր ժողովրդի հետ: Նա հասկանում է մարդուն, ներթափանցում մարդու հոգու խորքը, որոնում այնտեղ բուն մարդուն, նրա խղճմտանքն արթնացնում և այդ խղճմտանքի միջոցով դարձ դեպի Աստված նրան առաջնորդում:

Որքան ենք մենք շոյվում, իրոք որքան ենք ներքին հիացական պահ ապրում, երբ մեր դիմացինը, մեր ընկերը, հեռավորը կամ մերձավորը մեզ հասկանում է, իր խոր հայացքով թափանցում մեր հոգուց ներս ու տեսնում, թե այնտեղ ինչ է կատարվում, որքան ևս առավել այս նույնը հաճելի է Աստծո համար: Ուստի, սիրելիներ, երբեք մի հուսահատվեք, միշտ հիշեք, որ կա ապաշխարության միջոցով փրկություն: Եվ Քրիստոսի՝ Աստծու Որդու մարմնանալու մեծագույն խորհուրդն էլ հենց դա է. ավետիսը, հույսը փրկության, ճանապարհը դեպի Աստված մերձենալու՝ սա է: Մենք այս խնդրին, այս կարևոր հարցին պիտի շատ լրջորեն մոտեցանք: Դա երբ էլ լինի՝ Քառասնորդական Պահքի ժամանակ, թե առանձին օրերի, անպայման անսանք մեր խղճի ձայնին, դառնանք դեպի Աստված և Արտաքսման Կիրակիի փոխարեն նշենք մերձեցման ու Աստծու հետ հաղորդակցության կիրակին՝ որպես խորհուրդ մեր նորոգության:

Ահա այս մտածումներով, այս հույսով էլ ձեզ համար աղոթում ենք, սիրելիներ, հավատքի ամրությամբ, այս Քառասնորդական Պահքը ապրեք աղոթքով, բարեպաշտությամբ, բարի գործերով, ներողամտությամբ, դարձի գալով դեպի Աստված: Այս է այսօրվա մեր հորդորը, և թող Աստված զորացնի ու Իր առատ շնորհները պարգևի ձեզ. Այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Տ. ՀԱՅԿԱԶՈՒՆ Ծ. ՎՐԴ. ՆԱԶԱՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(28 փետրվարի, կիրակի, 1999 թ.)

«Հայր, մեղա յերկինս եւ առաջի քո. ոչ եւս եմ արժանի կոչել որդի քո»

(Ղուկաս ԺԵ 21)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Հիսուս Իր կյանքի ընթացքում հաճախ շրջապատված էր լինում մեղավորներով, մաքսավորներով, և սա ասեկոսների պատճառ էր դառնում: Մաքսավորները հրեա ցածր դասակարգի մարդիկ էին, ովքեր մի կտոր հացի համար ստիպված էին լինում աշխատել հռոմեացիների իշխանության տակ՝ իբրև հրեաներից տուրք հավաքողներ: Հետևաբար հրեաները կրկնակի ատում էին այդ մարդկանց. նախ իբրև դավաճանների և, երկրորդ, որ իրենց հիշեցնում էին հռոմեական ծանր լծի տակ գտնվելը: Այնպես որ այն ժամանակվա ուսուցիչները՝ հրեա ռաբբիները և դպիրները, մեղադրում էին Հիսուսին՝ ոչ սուրբ մարդկանցով շրջապատված լինելու համար, որովհետև, ըստ նրանց, եթե մարդը սուրբ է, չպետք է հարաբերվի անսուրբ մարդկանց հետ: Իսկ Հիսուս նրանց ասում էր. «Ես արդարներին կանչելու չեմ եկել, այլ մեղավորներին» (Մատթ. Թ 13), որովհետև Աստված չի կամենում մեղավորի կորուստն ու մահը, այլ նրա դարձը առ Աստված: Որպեսզի Հիսուս Իր ասածը ավելի հստակ դարձներ, մի առակ պատմեց նրանց:

Առակը կյանքի մի պատկեր էր: Հատկապես Արևելքի ժողովուրդները, գիտեք, պատմություն շատ են սիրում և, մանավանդ, այդ ժամանակաշրջանում մի խոսք ասելու համար ավելի հարմար էր, որ այն պատմությամբ ներկայացվեր: Եվ մեր մտքում, որ Հիսուսի առակներին մանկուց ենք ծանոթանում, գեղեցկորեն տպավորվում են դրանք, առավել ևս, երբ պատկերների հետ են զուգորդվում: Սակայն, չափահաս հասակում, հատկապես այս առակի օրինակով, անդրադառնում ենք, թե այն ինչ է ուզում ասել մարդուն: Առակը մտածել է տալիս մեր մեղքերի մասին, իսկ երբ ավելի տարիք ենք առնում, ալեհեր դառնում, մեզ զգում ենք հոր դերի մեջ, իմանում ենք, թե ինչպես պետք է ներել մեզանից փոքրերին:

Այս նկատի ունենալով, Հիսուս նրանց պատմում է մի մեծահարուստ մարդու մասին, որ երկու զավակներ ուներ: Գիտենք, որ ընդհանրապես, մարդ իր փոքր զավակին մի քիչ ավելի է սիրում, ավելի է կապվում նրան: Կրտսեր այս զավակը, որը երևի մի քիչ էլ չար էր, մի օր իր հորն ասում է. «Ինձ հասանելիք ժառանգությունը տուր: Ես պիտի գնամ ու վայելեմ այն: Մեկ է, մի

օր պիտի տաս, այսօր տուր»: Եվ հայրը, սիրուց դրդված, տալիս է նրան հասանելիք ժառանգությունը: Երիտասարդ այդ տղան, վերցնելով իր ողջ ստացվածքը, գնում է հեռու երկիր, ցոփ ու շվայտ կյանք վարում այնքան ժամանակ, քանի դեռ հարստությունը կար: Բայց որովհետև այդ դրամը միայն վատնվում էր և չէր ավելացվում, մի օր էլ, բնականաբար, վերջանում է, որի հետ միասին նաև անհետանում են նրա բոլոր, այսպես կոչված, ընկերներն ու բարեկամները:

Միգուցե իր չար բախտից էր երևի, որ այդ տարի սով է լինում: Երիտասարդը, որ հարուստ էր, արդեն ոչինչ չուներ, նույնիսկ ապրելու ամենաչնչին գումարը: Հարկադրված գնում է մի հարուստի մոտ, ուր կարող էր խոզեր պահել, որպեսզի կարողանար իր գոյությունը պահպանել: Սակայն վաստակածն այնքան չնչին էր, որ ստիպված էր լինում նույնիսկ խոզերին տրվածից ուտել: Այս թշվառության մեջ մի հույս, մի միտք է ծագում իր մեջ, ասում է. «Վերջ ի վերջո ես հայր ունեմ, ընտանիք ունեմ, գնամ, հորս ասեմ. «Հայր, ես քո և երկնքի առջև մեղանչեցի, սխալ գործեցի և ինձ մի ընդունիր որպես քո զավակը, ես արժանի չեմ դրան, բայց գոնե ինձ ընդունիր որպես քո աշխատավորներից մեկին, որպեսզի կարողանամ ճակատիս քրտինքով ապրել»:

Սիա այսպես կրտսեր որդին ցնցոտիներով, աղտոտված վիճակով ճամփա է ընկնում դեպի հայրական տուն: Ծեր հայրը, քանի որ տարիներ էին անցել, հույսը կտրել էր: Ինչքան դժվար է, երբ մարդ հույսը կորցնում է. որքան էլ վատը լիներ նա, իր զավակն էր վերջիվերջո: Երբ լուրը հասնում է իրեն, թե քո կրտսեր որդին վերադառնում է, չի դիմանում: Ինչպես և կվարվեր յուրաքանչյուր ծնող, վազում է որդուն ընդառաջ, տեսնելով նրա աղտոտված, հյուծված վիճակը, ընդունում է նրան, փարվում, համբուրում՝ ցույց տալու համար իր սերն ու գուրգուրանքը:

Երբ զավակը փորձում է բացատրել, անգամ խոսել չի թողնում նրան, այլ անմիջապես ամենագեղեցիկ զգեստն է տալիս, իր մատանին, իշխանություն է տալիս նրան և հրամայում, որ մի մեծ խնջույք անեն և ամենապարարտ եզը մորթեն, որպեսզի իրենք կարողանան նշել այդ մեծ իրադարձությունը, քանզի՝ «Իմ զավակը կորած էր և գտնվեց, մեռած էր և կենդանացավ» (Ղուկաս Ժե 32): Այդ ժամանակ ավագ որդին, որ այս տարիների ընթացքում հավատարմորեն աշխատում էր հոր համար, իր ճակատի քրտինքով մեծացնում հայրական հարստությունը, հանկարծ լսում է տան մեջ խրախճանքի ձայներ և հարցնում. «Ի՞նչ է պատահել»: Ասում են. «Քո եղբայրը, որ կորած էր, վերադարձավ, և հայրդ մեծ ուրախության ու խրախճանքի սկիզբ դրեց»:

Մեծ եղբայրը տրտմում է ու տուն չի մտնում: Հայրը կանչում է նրան և հարցնում. «Ի՞նչ կա, որդիս»: Նա պատասխանում է. «Հայր, այս քանի տարի է, որ ծառայում եմ քեզ և երբեք քո հրամանները զանց չեմ արել, ինձ երբեք մի ուլ չտվիր, որ բարեկամներիս հետ ուրախանայի: Երբ եկավ քո այդ որդին, որը քո ունցվածքը կերավ պոռնիկների հետ՝ պարարտ եզը նրա համար մորթեցիր» (Ղուկաս Ժե 29-30):

Հայրը դառնում է նրան և ասում. «Որդյակ, դու միշտ ինձ հետ ես, և ամեն

ինչ, որ իմն է, քոնն է, բայց պետք է ուրախ լինես և ցնծաս, որովհետև քո այս եղբայրը մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց»:

Հետևաբար, ինչպես քարոզի նախաբանում ասացինք, այս շատ գեղեցիկ առակը առիթ է տալիս, հատկապես Պահոց այս շրջանում, մտածելու մեր գործած մեղքերի մասին: «Ով է այն մարդը, որ ապրում է ու մեղք չի գործում, այդպիսի մարդ չկա: Բոլորս էլ մեղավորներ ենք այս աշխարհում: Նարեկացին՝ մեր ամենամեծ սրբերից մեկը, ասում է. «Եթե բոլոր ծովերը թանաք դառնան և բոլոր անտառները գրիչ, և ես փորձեմ գրել իմ մեղքերը, չեն բավարարի»: Դրանով, իհարկե, նա ուզում է գրել ոչ միայն իր մեղքերը, այլ բոլոր մարդկության և բոլոր ժամանակների մեղքերը, սակայն քրիստոնյան, դրանով հանդերձ, գիտենալով արդեն իր մեղքերի մասին, անհույս չէ: Եվ այս նույն մտքով Հիսուս շարունակում և ասում է. « Եթե քո եղբայրը մեղանչի, սխալ գործի, սաստիր նրան, և եթե դարձի գա, ներիր նրան» (Մատթ. ԺԸ 15-20):

Շատ կարևոր տողեր են սրանք. եթե մեղանչի, ապա սաստիր նրան: Սաստելը պարզապես բարկանալ չէ, այլ, այն անձին, որ սխալ է գործել, կարգի հրավիրելն է: Նրան ուշադրության է հրավիրելու այն հանգամանքը, որ այդ ճանապարհը, և այդ ընթացքը իրեն միայն դեպի կործանում կարող են տանել: Հետևաբար, մեզանից ամեն մեկի պարտականությունն է՝ մեր մտերիմներին զգուշացնել, երբ տեսնում ենք, որ թավալգլոր ցեխի մեջ են գնում, ոչ թե մի հարված էլ մենք տանք, որպեսզի ամբողջովին ընկղմվեն, այլ ընդհակառակը, իրենց ուշադրություն դարձնենք, որ վտանգի մեջ են և մեր այդ սաստելով նրանց ուշքի բերենք:

Առաջին քայլը, սակայն, ամենակարևորը մեզ համար, որպես անհատներ, անդրադարձն է մեղքին և սխալին: Հիսուսի ժամանակաշրջանին մոտիկ ապրող այդ բոլոր դպիրները, ռաբբիները՝ վարդապետները, չէին ընդունում, թե իրենք մեղավոր են, ընդհակառակը, իրենց սուրբ էին համարում: Քանի մենք մեզ սուրբ կհամարենք, մեր սխալները չենք տեսնի, այդ սխալների մեջ ավելի խորը կթաղվենք:

Աստված ոչինչ չի կարող անել, եթե մենք, նախ և առաջ, չընդունենք, որ մեղավոր ենք: Առաջին հերթին պետք է ընդունենք մեր սխալը: Մի անգամ որ սխալն ընդունեցինք, դրանից հետո հաջորդ քայլն տեղի կունենա: Առօրյա կյանքում հիվանդը, եթե չի ընդունում, որ ինքը հիվանդ է, հիվանդանոց չի գնա, բժշկի չի դիմի, հետևաբար, չի բուժվի: Նույն ձևով էլ հոգևոր հիվանդը նախ պետք է անդրադառնա իր սխալին, իր մեղքին և մի անգամ որ անդրադառնա, դրանից հետո կարող է բուժման մասին մտածել: Դա էլ այդ մեղքի ապաշխարանքն է, անդրադարձումը: Ամենքս էլ մեր եսասիրական ձգտումներով միշտ ուզում ենք ցույց տալ, թե կատարյալ ենք և ուզում ենք զարմացնել դրանով բոլորին, բայց Աստծուն էլ հո չենք կարող զարմացնել կամ խաբել, հետևաբար, որպես ճշմարիտ քրիստոնյաներ, պետք է բանանք մեր սրտերը առ Աստված, պետք է խոնարհվենք և ընդունենք մեր սխալները, որովհետև եթե չընդունենք դրանք, կտապալվենք, կկործանվենք:

Սիրելի հավատացյալներ, ես մաղթում եմ, որ այս Մեծի Պահոց շրջանին

մաքրենք մեր հոգիները ոչ միայն արտաքին երևույթներից. ոչ միայն մեր մարմինը ծոմապահությամբ մի քիչ տկարացնելով. այլ նաև մեր հոգիները խոնարհեցնելով. որպեսզի երբ մաքրվենք մեր մեղքերից. կարողանանք մաքուր սրտով ու հոգով դիմավորել Քրիստոսի հրաշափառ Հարությունը և ընդունել Նրան մեր սրտերում և մեր հոգիներում: Հետևաբար, ես մաղթում եմ, որ այս Մեծ Պահքի շրջանը նախ և առաջ բոլորիս համար անդրադարձման մի շրջան լինի մեր մեղքերին ու սխալներին: Նրանք, ովքեր իրենց տարիքի մեջ բավականին առաջացել են, որպես հասուն և իմաստուն մարդիկ. ջանան ներել իրենց դիմացինի մեղքերը: Եթե մենք իրար չկարողանանք ներել, չենք կարող մոտենալ Աստծուն, որն անբասիր մաքրություն է և սրբություն:

Հետևաբար, պետք է կարողանանք ներել միմյանց Մեծ Պահքի այս շրջանում՝ մի կողմ դնելով ամեն տեսակի փոքրիկ ճղճիմություններ և հաշիվներ: Դրա համար էլ մենք մաղթում ենք, որ Աստծո զորությունը բոլորիս հետ լինի, և թող Սուրբ Հոգին ամենքիս առաջնորդի մինչև այն փառավոր և օրհնյալ օրը, երբ կրկին անգամ կկարողանանք ականջալուր լինել Քրիստոսի Հարության ավետիսին և ընդունել Նրան մեր մաքրված և սրբված սրտերում ու հոգիներում. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՄԻՔԱՅԵԼ Ծ. ՎՐԴ. ԱԶԱՊԱՀՅԱՆ

ՄԵԾԻ ՊԱՀՈՑ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Մեծի Պահոց շրջանը, իր այսօրվա վիճակով, արդյունք է երկար և խորապես բարդ պատմական զարգացման, որի ոչ բոլոր բնագավառներն են համապատասխան կերպով ուսումնասիրված: Մի շարք հարցեր դեռևս անպատասխան են մնում, և բավական հետազոտական աշխատանքի կարիք կա ոչ միայն երկրորդական մանրամասնությունների մարզում, այլև հիմնական հարցերի վերաբերյալ: Մենք փորձելու ենք ընդամենը համառոտ կերպով ուրվագծել եղած վկայություններն ու հետազոտությունները՝ իրենց էական գծերի մեջ:

Բոլոր հիմքերը կան կարծելու, որ Բ դարի կեսին Եկեղեցուն ծանոթ էր միայն մի շատ կարճ պահեցողության շրջան, որ նախորդում էր ամենամյա Զատկական տոնին: Սակայն վկայություններ կան, որ անգամ այս պահեցողության շրջանը տարբեր վայրերում անցկացվում էր տարբեր կերպ:

Խոսելով Զատկական վեճի[1] մասին՝ Ս. Իրենեոս (Երանոս) Լուգդունացին (մոտ 130–200) գրում է, որ վեճը *«ոչ միայն օրվա վերաբերյալ էր, այլև պահեցողության իրական բնույթի մասին. քանզի ոմանք կարծում են, որ պետք է պահել մեկ օր, ուրիշներ՝ երկու, այլք՝ նույնիսկ ավելի. ոմանք իրենց օրը քառասուն ժամ են հաշվում՝ ցերեկ ու գիշեր: Եվ կիրառության այսպիսի զանազանությունը չի սկսել մեր օրոք, այլ շատ ավելի վաղ՝ մեր նախորդների օրոք»*[2]:

Տերտուղիանոսը (մոտ 160–225) վկայում է, որ ինքը տեղյակ է ընդամենը այն պահքին, որ ծգվում էր Ավագ Ուրբաթից մինչև Զատիկ[3]: Նույնն է վկայում նաև Հիպպոլիտոս Հռոմեացին (մոտ 170–236)[4]:

Սակայն Գ դարի կեսերից մենք արդեն տեսնում ենք, որ այս զատկական պահքը (առնվազն որոշ շրջաններում) ծգվում էր մեկ

---

[1] Քրիստոնեական Եկեղեցու դիմագրված առաջին վեճերից մեկը, որ վերաբերում էր Զատիկը հրեաների հետ (Նիսանի 14-ին) կամ առանձին առնելուն: Իրենեոսն այս հարցում հակված էր ազատ ընտրության իրավունքի կողմը:

[2] Մեջբերված Եվսեբիոսի կողմից՝ Եկեղեցական պատմություն, Ե 24:

[3] Պահեցողության մասին, Բ 13–14, Աղոթքի մասին, ԺԸ, տե՛ս նաև Մկրտության մասին, ԺԹ:

[4] Առաքելական Ավանդություն, Բ, 20, 21:

շաբաթ (այսօրվա «Ավագ Շաբաթը»): Այսպես, ասորական «Առաքելական Ուսուցման» (Didascalia Apostolorum) (Գ դարի կես) մեջ մենք կարդում ենք. «...ուստի դու Զատկի օրերին պետք է պահես շաբաթվա երկրորդ օրից (այսինքն՝ երկուշաբթի օրվանից) և պետք է դիմանաս միայն հացով և աղով և ջրով մինչև հինգերորդ օրվա (այսինքն՝ հինգշաբթի) իններորդ ժամը... Սակայն ուրբաթ և շաբաթ օրերին պահիր ամբողջությամբ և ոչինչ մի ճաշակիր»[5]:

Գրեթե նույն ժամանակ Դիոնիսիոս Ալեքսանդրացին (մահ. 264) Բասիլիդեսին ուղղված իր նամակում կրկին խոսում է մեկշաբաթյա պահեցողության մասին[6]:

Երբ քառորդ դար հետո մենք ունենք արդեն առաջին վկայությունը քառասնօրյա պահեցողության մասին՝ Նիկիայի ժողովի (325) ե կանոնի մեջ, որից կարելի է ստանալ այն տպավորությունը, որ այն արդեն ծանոթ էր և ոչ թե արմատական նորամուծություն:

Ե՞րբ, որտե՞ղ և ինչպե՞ս զատկական պահքը երկու կամ վեց օրից վերանեց քառասնօրյա պահեցողության: Սրանք հարցեր են, որոնց ժամանակակից ծիսագետները տալիս են երկու տարբեր պատասխաններ:

Ոմանց կարծիքով Մեծ Պահքը վերոհիշյալ զատկական պահքի և սկզբում զատկական ջրջանից անկախ ու Իր Մկրտությունից հետո անապատում Քրիստոսի պահեցողությունը հիշատակող մեկ այլ պահքի «միաձուլման» արդյունք է: Երկրորդ պահքը կապված չէր Զատկի հետ, այլ Աստվածահայտնության տոնի, և սկսվում էր հունվարի 7-ին: Երկուսի միաձուլումը տեղի է ունեցել երախայից դրության և նրանց Զատկից առաջ Մկրտության նախապատրաստելու կիրառության ազդեցության ներքո: Այս տեսակետը պաշտպանել են այնպիսի հայտնի ծիսագետներ, ինչպիսիք են Ա. Բաումշտարկը[7] և Ժ. Դանիելուն[8]:

Ծիսագիտության պատմության մյուս մասնագետները այն կարծիքին են, թե քառասուն օրերը արդյունք են զատկական պահքի հարանուն մեծացման և ծագել են երախայից դրության իրականությունից[9]:

Այս երկու կարծիքն էլ մնում են վարկածի սահմաններում, մինչ փաստն այն է, որ Դ և Ե դարերում Քառասնօրյա պահքն արդեն հաստատված և ընդունված իրողություն էր ողջ Տիեզերական Եկեղեցում: Սակայն Ե դարում հանդես են գալիս Քառասնօրյա պահեցողության

---

5 R. H. Connolly, Didascalia Apostolorum, Oxford, 1929, էջ 189:

6 Migne, Patrologia Graeca. X, 1277.

7 A. Baumstark, Liturgie Comparée, 208.

8 J. Daniélou, Le Symbolisme des Quarante Jours, La Maison Dieu, 31 (1932), 19.

9 A. McArthur, The Evolution of the Christian Year, London, 1953, 114; G. Dix, The Shape of the Liturgy, London, 1945, 354-355.

կիրառության մեծ զանազանություններ, որոնց մասին խոսում են Սոկրատեսն (մոտ 380–450) ու Սոզոմենոսը (Ե դար):

«Զատկին նախորդող պահքը, – գրում է Սոկրատեսը,– տարբեր տեղերում տարբեր ձևով է կատարվում: Հռոմում առանց ընդհատման երեք շաբաթ են պահում՝ բացի շաբաթ և Տերունական օրերից, մինչ Իլլիրիկիայում, Հունաստանում և Ալեքսանդրիայում Զատկից առաջ վեց շաբաթ են պահում, և այն կոչվում է Քառասնորդաց. և դեռ ոմանք պահել են սկսում տոնից յոթ շաբաթ առաջ»[10]:

Սոկրատեսի կրտսեր ժամանակակից Սոզոմենոսը կրկնում է նույն տեղեկությունը. «Զատկին նախորդող, այսպես կոչված, Քառասնորդացը երբ ժողովուրդը պահում է, ոմանք սկսում են վեց շաբաթ առաջ, ինչպես Իլլիրիկիան և Արևմուտքում, Լիբիայում, Եգիպտոսում ու Պաղեստինում բնակվող քրիստոնյաները, իսկ ուրիշներ՝ յոթ շաբաթ, ինչպես Կ. Պոլսի և իր շրջակայքի բնակիչները... Այս վեց կամ ավելի շաբաթների ընթացքում ոմանք պահում են երեք շաբաթ ընդմիջումներով, ոմանք՝ երեք ամբողջական շաբաթներ նախքան տոնը, և ոմանք (ինչպես մոնտանականները)՝ միայն երկու շաբաթ»[11]:

Պարզ է, որ այս տարբերություններն ինքնին արդյունք էին «քառասուն օրերի» հասկացության նկատմամբ զանազանվող ըմբռնումների: Արդյո՞ք դրանք ընդգրկում էին Ավագ Շաբաթը, որն, ինչպես մենք տեսանք, գոյություն ուներ նախքան քառասուն օրերի ի հայտ գալը. արդյո՞ք այդ քառասուն օրերի մեջ էին մտնում շաբաթ և կիրակի օրերը, որոնք ավանդությունն անվերապահ կերպով համարում էր ուտիքի օրեր:

Դ Դարի վերջին Երուսաղեմում, համաձայն հայտնի «Եթերիայի ուխտագնացության» (Ի Է 1), Պահքն ընդգրկում էր Ավագ Շաբաթը, սակայն բաց էր թողնում շաբաթ և կիրակի օրերը: Այսպիսով, Պահքը բաղկացած էր ութ շաբաթից, որոնցից յուրաքանչյուրն իր մեջ ներառնում էր հնգօրյա պահեցողություն, որով պահեցողության օրերը ճշգրիտ կերպով հավասարվում էին քառասուն օրվա: Ուրեմն Երուսաղեմում «Քառասնորդացը» հասկացվում էր ուղղակի ճշգրիտ քառասուն օրերի պահեցողության իմաստով:

Այս կիրառությունը Ս. Եպիփան Կիպրացին (315–403) ներմուծեց Կիպրոս, իսկ Ս. Հովհան Ոսկեբերանը (347–407)՝ Անտիոք (387–ին)[12]:

Սակայն Կ. Պոլսում, ինչպես նաև Եգիպտոսում և Արևմուտքում, «Քառասնորդացը» հիմնականում նշանակում էր նախապատրաստության մի շրջան, երբ պահեցողության օրեր էին շաբաթվա հինգ օրերը,

---

[10] Սոկրատես, Եկեղեցական Պատմություն, Ե 22:

[11] Սոզոմենոս, Եկեղեցական Պատմություն, Է 19:

[12] A. Schmemann, Great Lent, New-York, 1974, 136.

իսկ մյուս երկու օրերը (թեև մաս էին կազմում Քառասնորդացին) պահեցողությունից ազատ օրեր էին: Այս իրողության արտահայտությունն է համարվում այն երևույթը, որով Ս. Աթանասը իր 330-ի «Զատկական նամակում» խոսում է Քառասնորդացի «ժամանակի» և Ավագ Շաբաթվա «պահքի» մասին:

Ուստի Կ. Պոլսում «Քառասնորդացն» ընդգրկում էր շաբաթ և կիրակի օրերը, սակայն բացառում էր ոչ միայն Ավագ Շաբաթը, այլև Ղազարու Հարությունը և Մաղկազարդը: Մինչ Արևմուտքում և Եգիպտոսում Քառասնորդացը ընդգրկում էր նաև շաբաթ ու կիրակի օրերը և Ավագ Շաբաթը, որի պատճառով պահեցողության շրջանն ավելի կարճ էր ստացվում:

Այս տարբերություններն անկասկած պատճառ դարձան ուժեղ եկամարտությունների ու վեճերի, որոնք շարունակվեցին հաջորդ դարերի ընթացքում: Ծավալված վեճերի ու եկամարտությունների բովում էր ծնունդ առնելու Հայ Եկեղեցու ուրույն տեսակետը և մոտեցումը Մեծի Պահոց ինչպես ժամանակի, այնպես էլ ընթացքի մասին: Սա արդեն ավելի լուրջ քննության և ավելի ընդգրկուն ուսումնասիրության կարիք ունի, որն առայժմ դուրս է մեր նպատակից:

ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ԽԱՐՈՒՅԿԸ

«Եվ հուրը բորբոքելով՝ Նրա սիրո
հուրն ենք խնդրում...»:
/Ս. Գրիգոր Տաթևացի/

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հնավանդ հոգևոր բարեպաշտական արարողություններից է Տյառնընդառաջի տոնի նախօրեին, երեկոյան ժամերգությունից հետո, խարույկ վառելը:

Սույն ավանդույթը, ինչպես բացատրում են մեր Եկեղեցու հայրերը, հեթանոսական մի սովորություն է՝ կապված Հայոց դիցարանում կրակի, լույսի ու Արեգակի աստվածությունը մարմնավորող Միհր չաստծո հետ[1], որ, մեր Հավատո Հոր՝ Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից վերիմաստավորվելով և պատշաճեցվելով, կցվել է քրիստոնեական տոնին, այս պարագայում՝ «Քառասնօրեայ Գալստեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի Տաճարն»[2] տոնին: Սեավասիկ, հավանաբար այդ իսկ նկատի ունենալով, Հայոց Եկեղեցու «Տօնացոյց»-ի մեծ քարտեկարգիչ Սիմեոն Ա Երևանցի Կաթողիկոսը նշել է. «Հրի շուրջը պտտվելը խոտելի է, որը տգետների կողմից է ներմուծված»[3]: Սակայն միևնույն ժամանակ պետք է նշել, որ հայոց աստվածաբանական կուռ միտքն իր բացատրություններն է տվել Տյառնընդառաջի նախօրեին վառվող խարույկի կապակցությամբ:

Արդ, ստորև թարգմանաբար ներկայացնում ենք Հայոց Եկեղեցու հռամեծ վարդապետ Ս. Գրիգոր Տաթևացու բացատրությունները.

«Իսկ թե ինչո՞ւ ենք կրակ վառում:

Նախ՝ որովհետև [երբ] Տերը տաճարին մոտեցավ՝ դուռն ինքնիրեն բացվեց, մեծ ճայթում եղավ, և քաղաքը տիեզերքի օրինակով դղրդաց: Եվ բոլորը վառված լույսերով եկան տաճար՝ Տիրոջն ընդառաջ, և ասացին, «Տերն անցավ այս դռներով»: Ուստի այդ օրվա տոնն անվանվեց «Տեառնընդառաջ», «Տէրն ընդ այս», որն ապավաղելով ասում ենք՝ «Տէր ընդ էա»: Եվ մենք դրա համար նույն օրինակով՝ հուր ու ջահ վառած, Տիրոջ [տաճար] գալստյան նախատոնակն ենք կատարում:

Երկրորդ՝ հեթանոսները բոլոր արարվածներին էին պաշտում, առավելաբար երին, ինչպես պարսից ազգը: Այժմ էլ հյուսիսային կողմերում շատերն են կրակապաշտներ: [Ուստի] դրա համար մենք վառած հուրն ընծայում ենք ի պատիվ Աստծո, թե՝ «Դու ես ճշմարիտ Աստված, որ այժմ երևացիր», իսկ հուրն աստված չէ, այլ՝ Քո արարածը: Դրա համար Քեզ ծառայություն ենք բերում, ինչպես որ

---

[1] «Լոյս», 1905, էջ 150, 162-165: Նաև՝ «Ազգային տոներ», էջ 11:

[2] «Տօնացոյց նախապէս կարգնայ ու սահմանեալ սրբոյն Սահակայ Պարթևի Հայրապետին՝ Հայոց ըստ աւանդութեան՝ Հայաստանեայց Սրբոյ Եկեղեցւոյ: Եւ զկնի յոգնաջան՝ կարգաւորութեամբ ու աշխատասիրութեամբ Տեառն՝ Սիմէօնի սրբազան՝ Կաթուղիկոսին՝ յԵրկուս հատորս բաժանեալ», Էջմիածին՝ 1887, էջ 17:

[3] Նույն՝ տեղում, էջ 18:

եբրայեցի մանուկները՝ ծառերի ոստերն ընծայեցին ի պատիվ Քրիստոսի[4], որովհետև Նա է ճշմարիտ Աստված. նույնպես, և մենք հուրն ենք ընծայում: Եվ ինչպես որ [Անանիան ու իր ընկերները] երբ հրի մեջ ընկան, գովում ու օրհնում էին Աստծուն[5], այնպես՝ բոլոր արարածներին օրհնության էին հրավիրում՝ ջրին, հրին, ցրտին, տոթին ու մյուսներին[6]: Նույնպես և մենք խոսքով ու գործերով՝ վառված հուրը, ի պատիվ արարածների Արարչի, ընծայում ենք Քրիստոսին:

Երրորդ՝ որովհետև Քրիստոս իր գալստյամբ ասաց. «Ես եմ աշխարհի լույսը, ամեն ոք, որ ինձ հավատում է, խավարում չի մնա»[7]. նաև ասաց. «Երկրի վրա կրակ գցելու եկա, և որքա՞ն եմ կամենում, որ արդեն իսկ բորբոքված լինի»[8]: Դա Սուրբ Հոգին էր խորհրդանշում, որ հրեղեն լեզուներով առաքյալների վրա իջավ. նրանց մեղքերը մաքրեց ու միտքը լուսավորեց: Սրա համար ենք Քրիստոսին ընդառաջ ելնում ու լույս վառում, որովհետև Քրիստոս [իբրև] Լույս եկավ (այս) աշխարհ, մենք էլ Լույսին հավատացինք և Լուսո որդիներ դարձանք: Եվ հուրը բորբոքելով՝ Նրա սիրո հուրն ենք խնդրում, որպեսզի մաքրի մեր մեղքերի ժանգն ու աղտեղությունը և սրբելով պայծառացնի մեր միտքն ու հոգիները: Դրա համար (այդ) երեկո կրակ ենք վառում:

Չորրորդ՝ քանի որ Քրիստոսի հաջորդ ու վերջին գալուստը հրով է լինելու վախճանի ժամանակ, ինչպես ասում է մարգարեն՝ «մեր Աստված հայտնապես է գալու, և Նրա առաջ հուր է բորբոքվելու»[9]: Որովհետև առաջին գալուստը խոնարհությամբ ու ծածուկ էր, ինչպես [որ անծայն իջնում է] ցողը բրդի վրա[10], որպեսզի ով իր անձնիշխան կամքով կամենա, Քրիստոսին հավատա ու փրկվի: Իսկ վերջին գալուստը սրա պես չէ, այլ՝ հայտնապես ու տիեզերատես՝ Հայրական փառքով ու բոլոր հրեշտակները նրա հետ. «Ինչպես փայլակը, որ ելնում է արևելքից և երևում է մինչև արևմուտք»[11], և հուրը(ը) Նրա առջև կբորբոքվի, և Նրա շուրջն էլ սաստիկ մրրիկ [կլինի][12]: Մրրիկն ու մեգը՝ մեղավորներից ծածուկ ու անտես լինելն է խորհրդանշում, որովհետև մեղավորներն ու անհավատները չեն կարող Քրիստոսի Աստվածությունը տեսնել, քանի որ հուրը մատնանշում է սրբերի ու հավատացյալների պայծառ տեսությունը, որ հայտնապես տեսնում են Քրիստոս Աստծուն մարդացած, մարմնով երևացած, և մարդուն (այսինքն՝ Մարդացյալ Քրիստոսին-Ա. Կ.) որպես մարդկանց Արարիչ են տեսնում: Դարձյալ կրակը երկու հատկություն ունի: Եվ Քրիստոս հրով պիտի երևա, որպեսզի սրբերին լուսավորի, պսակի ու անստվեր լույսը մտցնի, իսկ մարդկանցից չարերին ու անհավատներին՝ սատանայի հետ հավիտենական հուրն ուղարկի ու տանջի: Ըստ այնմ՝ «անիծյալներ, հեռացրե՛ք ինձանից հավիտենական կրակը, որ պատրաստված է սատանայի և

---

4 Հմմտ. Մատթ. ԻԱ 8:
5 Դանիել. Գ 51:
6 Դանիել. Գ 61-79:
7 Հովհ. Ը 12, ԺԲ 46:
8 Ղուկ. ԺԲ 49:
9 Սաղմ. Թ 3:
10 Սաղմ. ՀԱ 6:
11 Մատթ. ԻԴ 27:
12 Սաղմ. Թ 3:

իր երեշտակների համար»[13]: Այս խորհրդով կրակ ու ջահ ենք վառում և Քրիստոսի գալուստը պատվում: Կրակը ծուխ ու այրում ունի. որենք աչքերի լացն ու մեղավորների տանջանք(ներ)ն են խորհրդանշում. իսկ լույսը պայծառության ու լուսավորելու [հատկություն] ունի. որ արդարների պայծառության խորհրդանիշն է. և Քրիստոս՝ որպես Լույս եկավ ու (այս) աշխարհում ծագեց[14]:

Սրանք են այդ օրը հուր և լույս վառելու պատճառները»[15]:

Վերջում ցանկանում ենք նշել. որ քրիստոնեականացված սույն ավանդույթը կրկին չպետք է վերածել հեթանոսական խոտելի արարողության՝ նախկին տնթույլատրելի սովորությունները վերականգնելով. այն է՝ խարույկի վրայից թռչել. շուրջը պտտվել. ծխից գուշակություններ անել են✝. քանի որ «եթե մեկը հեթանոսների սովորություններն ընդունի՝ [Քրիստոսին] խաչողների հետ կլինի (այսինքն՝ անիծյալ - Ա. Կ.)»[16]:

ՍՐԹՈՒՐ ԴՊԻՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ
Դ ԼՍԱՐԱՆԻ ՍՄՆ

---

13 Մատթ. Ի6 41:

14 Հովհ. ԺԲ 46:

15 Ս. Գրիգոր Տաթևացի, «Քարոզ Գալստեան՝ Տնաւն՝ քառասներնա ի տաճարն», «Գիրք քարոզութեան՝ որ կոչի Զմեռան՝ հատոր», Կ. Պոլիս, 1740, էջ 79-80:

✝ Նշենք. որ հույժ ցանկալի է. որ Տյառնընդառաջի նախօրեի խարույկը վառվի միայն՝ ու միայն՝ նկեղեցիների բակերում. քահանա հայրերի հսկողության՝ ներքո՝ վերոհիշյալ հեթանոսական՝ խոտելի սովորույթներից խուսափելու համար:

16 «Կանոնագիրք Հայոց»՝ «Կանոնք Բարսղի Կեսարացւոյ», կանոն՝ ՀԶ, հտ. Բ, էջ 119:

ԲԱԲԿԵՆ ՆԱՆՅԱՆ
Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանի Զ յատակի սան

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ԱՆՁԵՐԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Դավանաբանական այս կետը իր որոշակի եւ ուրույն տեղն է գրավում ընդհանուր դավանաբանության համակարգում: Անշուշտ այն իր բարդությամբ զիջում է Սուրբ Երրորդության եւ քրիստոսաբանական դոգմաներին. սակայն, այդուհանդերձ, կարեւոր է այնքանով, որ առանց դրա հստակ պատկերացման, առանց համապատասխան քննական վերլուծության, առանց հայրաբանական եւ ավելի ուշ շրջանների գրողների՝ խնդրո առարկայի առնչությամբ իրենց արտահայտած մտքերին ու մոտեցմանը ծանոթանալու, հնարավոր չէ մուտք գործել աստվածաբանական բոլոր այն հարցերի ոլորտները, որտեղ խոսքը, այսպես թե այնպես, վերաբերում է Սուրբ Երրորդությանը:

Իրապես, խորամուխ լինելով Հոր, Որդու եւ կամ Սուրբ Հոգու Անձերի շուրջ ծագած աստվածաբանական վեճերի մեջ, հաճախ նկատում ենք, որ դրանք ուղղակի կամ անուղղակի կերպով կապված են Երրորդության Անձերի հատկությունների հետ, էլ չենք նշում ոչ պակաս թվով այն դեպքերը, երբ բանավեճերի բուն պատճառը եղել է հենց քննվող այս հարցը:

Սույն հարցի ուսումնասիրությունը կարեւոր է նաեւ նրանով, որ ոչ բոլոր Եկեղեցիներն ունեն այս խնդրի նույնական աստվածաբանական ընկալումը: Խոսքը կաթոլիկ աստվածաբանական ավանդության մասին է, որը, հակառակ հռոմեադավան աստվածաբանների բազմահատոր ուսումնասիրությունների եւ աշխատությունների, այնուամենայնիվ հստակ կերպով չի սահմանազատում ու որոշակիացնում Հոր միհիշխանության ու միապետության [«единоначалие», «монархия», «monarchy»] դոգման Երրորդության անձերի դոգմայից, որի դեպքում տրամաբանորեն եւ մեխանիկորեն կբացառվեր, «Filioque»-ի տեսությունը[1], որը խորթ է հայ աստվածաբանական մտքին:

Հաշվի առնելով բոլոր այն բարդություններն ու դավանաբանական շեղումները, որոնք ի հայտ էին գալիս առանձնավորական հատկությունների շփոթության հետեւանքով, Եկեղեցու հայրերն ի սկզբանե իսկ որդեգրեցին խիստ դիրքորոշում թե՛ նման սայթաքումների եւ թե՛ սայթաքողների նկատմամբ: Երեւակայեցեք, թե ինչպիսին կլիներ Եկեղեցու վերաբերմունքը մեկի նկատմամբ, որը Հոր փոխարեն Սուրբ Հոգուն վերագրեր անսկիզբությունը եւ կամ Որդուն համարեր Հոր պատճառը եւ այլն:

Խնդրո առարկա հարցն ունեցել է երկար ու դժվարին պատմական զարգացում, բայց եւ հարկ է նկատել, որ առանձնավորական հատկությունների վարդապետությունը, որպես այդպիսին, իր գոյությունն առնում ու բխում է Սուրբ Երրորդության համագոյության վարդապետությունից: Սկզբնապես Եկեղեցու հայրերը այն անվանեցին ὑποστάσεων γνωριστικαὶ ἰδιότητες:

Անառարկելիորեն ընդունելով, որ Սուրբ Երրորդության երեք Անձերի՝ Հոր, Որդու եւ Սուրբ Հոգու միջեւ չկա ոչ մի էութենական տարբերություն, որը որեւիցե կերպով ազդեր նրանց վրա, միեւնույն ժամանակ դավանում ենք, որ գոյություն

[1] Протоиерей Михаил Помазанский, "ПРАВОСЛАВНОЕ ДОГМАТИЧЕСКОЕ БОГОСЛОВИЕ" [в сжатом изложении], Новосибирск, 1993, стр. 49.

ունեն առանձնավորական հատկություններ, որոնք տարբեր են միմյանցից եւ պատկանում են Սուրբ Երրորդության տարբեր Անձերին: Ընդհանրապես, էութենական մակարդակի վրա Երրորդության որեւէ Անձին տրվող մակդիրը լիիրավորեն կարող է տրվել նաեւ մնացյալ երկու Անձերին, քանզի այն, ինչ հատուկ է մեկի էությանը, հատուկ է նաեւ մյուսներին, քանի որ Նրանք նույն էությունն ունեն: Սակայն պետք է տարբերակել Սուրբ Երրորդությանը եւ նրա անդամներից յուրաքանչյուրին առանձին-առանձին տրվող ստորոգելիական [ատրիբուտական] մակդիրը, հատկություններին վերաբերող եզրերից: Այսպես, «**ճշմարտությունը**» հատուկ է Սուրբ Երրորդության երեք Անձերին2, ինչպես նաեւ մի շարք մակդիրներ, զորօրինակ՝ «**արդար**», «**գովեալ**», «**փառաւորեալ**», «**սուրբ**», «**ամենօրհնեալ**», «**բարերար**», «**հզոր**», «**հաւատոր**» եւ այլն:

Հատկություններն իրենց տեսակի մեջ բաժանվում են 2 խմբի.

Ա. էական հատկություններ τὰ οὐσιῶδη ἰδιώματα, proprietates essentiales

Սրանք եւս իրենց հերթին վերաբերում են եւ՝ Հորը, եւ՝ Որդուն, եւ՝ Սուրբ Հոգուն: Դրանք են՝

1. Անսահմանություն կամ ամենակատարություն,
2. Ինքնագոյություն,
3. Անկախություն,
4. Անպարագրելիություն ու ամենուրեքություն,
5. Հավիտենություն,
6. Անփոփոխելիություն,
7. Ամենակարողություն:

Բ. առանձնավորական հատկություններ τὰ προσωπικὰ ἰδιώματα, proprietates personales

Ա. Այսպիսով, Եկեղեցին սովորեցնում է, որ թեեւ Հոր, Որդու եւ Սուրբ Հոգու էությունը նույնն ու մեկն է, Հայրը միշտ Հայր է եւ ոչ երբեք Որդի կամ էլ Սուրբ Հոգի, Որդին միշտ Որդի է եւ ոչ երբեք Հայր կամ էլ Սուրբ Հոգի, եւ նմանապես Սուրբ Հոգին միշտ Սուրբ Հոգի է եւ ոչ թե Հայր կամ էլ Որդի[3]:

Բ. Հորը հատուկ է հայրությունը, Որդուն՝ որդիությունը, Սուրբ Հոգուն՝ ելողությունը: Սրանք եւս անշփոթելի են[4]:

Գ. Սուրբ Երրորդության Անձերի տարբերությունները չեն սահմանափակվում միայն վերոհիշյալներով եւ Նրանց աստվածային հայտնության բացահայտման հերթականությամբ, այլ առանձնավորական այն հատկություններով, որոնք բացառապես վերաբերում ու պատկանում են Երրորդության Անձերից կոնկրետ որեւէ մեկին, օրինակ՝ միայն Հորը, Որդուն կամ էլ Սուրբ Հոգուն:

Այս հարցի վրա առանձնակի ուշադրություն դարձվեց հատկապես 4-րդ դարում, երբ քրիստոնեական աստվածաբանության առջեւ ծառացել էր աստվածային միության ու տարբերության արտահայտման գերխնդիրը[5]: Այս ժամանա-

---

2 Տե՛ս «ԿՆԻՔ ՀԱՒԱՏՈՅ» [=Կ. Հ.], Ս. Էջմիածին, 1914, էջ 26. «Թէ Հայր եւ միայն ճշմարիտ Աստուած է, Միածինն եւ միայն ճշմարիտ ... եւ միայն Սուրբ Հոգին Աստուած ճշմարիտ»:

3 Տես «Ս. ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾԱՌՔ, ԹՈՒՂԹՔ ԵՒ ԸՆԴԴԻՄԱՍԱՏՈՒԹԻՒՆՔ», «Յաղագս մարմնատրութեան Որդւոյն եւ Սրբոյ Երրորդութեան», Վենետիկ, 1899, էջ 113. «Որպէս ոչ երբեք է Հայր Որդի, այսպէս ոչ եղիցի եւ Որդի Հայր եւ որպէս ոչ դադարէ Որդի՝ միայն գոյ Որդի, քանզի մոլորութիւն, ապա է միայն հւ մտաւ ածել զայս եւ ասել առ Որդւով եղբայր, կամ առ Հարբ եւ զՀոգւոյն անուն»:

4 Վարդան Այգեկցի, «ԳԻՐՔ ՀԱԱՏԱՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՄԱՏ ՀԱՒԱՏՈՅ», Երեւան, 1998, էջ 76-77. «զի որ ինչ Հայր եւ Որդւոյ է՝ Հոգւոյ է, բաց ի հայրութենէն եւ յորդիութենէն, եւ ամենայն որ ինչ Հոգւոյ եւ Հայր է՝ Որդւոյ է, բաց ի հայրութենէն եւ յելողութենէն եւ ամենայն որ ինչ Որդւոյ եւ Հոգւոյ է՝ Հայր է, բաց յորդիութենէն եւ յելողութենէն»:

5 В. Н. Лосский, ". ДОГМАТИЧЕСКОЕ БОГОСЛОВИЕ", Москва, 1991, стр. 212.

կաշրջանում ապրող եւ գործող Եկեղեցու նշանավոր հայր Գրիգոր Նյուսացին իր «Յերրորդութիւնն» ճառում գրում է. «**Զի կարգաւորապէս ցուցանի Սրբոյ Երրորդութեան բնութիւնն՝ ոչ խառնակեալ յիւրաքանչիւր գոյութեանց առանձնաբար երեւելոյ նոցա յատկութիւնն**»[6]: Իսկ Գրիգոր Աստվածաբանը իբրեւ պարտադիր հանգամանք նշում է, որ միաստվածությունը պահելով «**պարտ է**» այն եռադեմ խոստովանել, այսինքն՝ երեք գոյացությունները «**իւրաքանչիւրովք հանդերձ յատկութեամբն**»[7]: Առանձնավորական հատկություններին մասնավորաբար անդրադարձել են նաեւ Հայ Եկեղեցու հայրերը: Մամբրե Վերծանողը գրում է. «**Իսկ յատկութիւնն յիւրաքանչիւր յերեսս բաժանին եւ ի դէմս**[8]»: Խոսրովիկ Թարգմանիչը, խոսելով մեկ բնության ու աստվածության զորության խոստովանության մասին, ասում է. «**ոչ կասկածեմք**» մեկ բնության մեջ տարբերակել «**զառանձնաւորական յատկութիւնսն**»[9]: Նույն գաղափարն է արտահայտվում նաեւ Գրիգոր Նարեկացու անունով մեզ հասած դավանաբանական բնույթի մի գործում, ուր հեղինակը, անդրադառնալով Սուրբ Երրորդությանը, ասում է, որ Նրանում չկա ո՛չ առավելություն, ո՛չ նվազություն, այլ բոլորը համահավասար են, «**քաց յանձնաւորութեանցն յատկութեանց, եւ որ նոցին հետեւի**»[10]:

1. Միավասիկ հայր Աստծո առանձնավորական հատկությունները, որոնց համաձայն Նա ճանաչվում է որպես՝

ա. Անծին - ἀγέννητος, **ingenitus, non natus, нерожденный**[11]

բ. Անսկիզբ - ἄναρχος, **principii expers, principio carens, безначальный**[12]

---

6 Կ. Հ. էջ 24:

7 Նույն տեղում, էջ 38:

8 Տես՝ «ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ, ՄԱՄԲՐԷԻ ՎԵՐԾԱՆՈՂԻ ԵՒ ԴԱՎԹԻ ԱՆՀԱՂԹԻ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ», Վենետիկ, 1833, էջ 70, ճառ «ՎԱՍՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՂԱՋԱՐՈՒ ՅԱՒՈՒՐ ՇԱԲԱԹՈՒ»:

9 «ԽՈՍՐՈՎԻԿ ԹԱՐԳՄԱՆԻՉ», Վաղարշապատ, 1903, Գլուխ Ա, էջ 32:

10 Տես՝ «ՇԱՌՔ ԵՒ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՔ ՀԱՒԱՏՈՅ ԱՐԱՐԵԱԼ ՍՐԲՈՅ ՀԱՐՑ ՄԵՐՈՅՑ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՅ ԵՒ ՎԱՀՐԱՄԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ», յԵրուսաղէմ, 1856, էջ 5, «ՍՐԲՈՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՅՈՔՆԵՐՄՆԵԱՆ ՄԵԾԱՒՈՐԻ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՅ ՀԱՄԱՌՕՏԻՒՔ ԲԱՆ ԽՐԱՏՈՒ ՎԱՄՆ ՈՒՂԻՂ ՀԱՒԱՏՈՅ ԵՒ ՄԱՔՈՒՐ ՎԱՐՈՒՑ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ Ի ԽՆԴՐՈՅՆ ՆՈՐԻՆ ՀԱՐԱՁԱՏԻ ՎԱՐԴԱՆԱՅ ԴԻՒԱՆԱԳՊՐԻ»:

11 Տես Կնիք Հաւատոյ, **Հիպոլիտոս Բոստրացի**. «Բայց զի պայման գոյութեան նորա այլիւայլ է եւ այն չէ ծանկեալ յիմաստնոցն, այնու, զի Հայր *չծնեալ* եւ ծնաւղ է, եւ Որդի չծնաւղ եւ ծնունդ է, եւ Հոգի ո՛չ ծնաւղ եւ ո՛չ ծնունդ, այլ ելաւղ...», էջ 8: **Դամասոս եպիսկոպոս Հռովմայեցի**. «Հայր *անծին* եւ ծնաւղ զՈրդի, Որդի ծնունդ է եւ անծին, Հոգի ելաւղ է եւ դադարումն.ի Հորէ առ Որդի», էջ 25-26: **Գրիգոր Լուսաւորիչ**. «Այսպես եւ Հայր անծին իսկությամբ, անսկիզբ էությամբ...», էջ 21:

12 Տես Կնիք Հաւատոյ, **Գրիգոր Աստվածաբան**. «Իսկ զառանձնաւորութիւնքն Հաւր՝ *անսկզբնաւորութիւնն*, սկիզբն իմացեալ եւ ասացեալ, բայց սկիզբն իբրեւ պատճառ եւ զաղբեւր եւ զմշտնջենաւոր լոյսն», էջ 38-39: **Յովհան Մայրագոմեցի**. «Այսպէս հաւատամք Սուրբ Երրորդութիւնն, խոստովանելով զմիայն Հայր Աստուած՝ զինքնագոյն յէութեան, զէակն *անսկզբնաւոր*», էջ 55:

Այստեղ անհրաժեշտ է մասնավոր կերպով անդրադառնալ այն երեւույթին, որ շատ հաճախ հայրերի գործերում կարելի է հանդիպել «**անսկիզբ**» եզրը՝ գործածված Որդու առնչությամբ, որն առաջին հայացքից կարող է սխալ թվալ: Օրինակ՝ Եպիփան Կիպրացին, խոսելով Որդու մասին, օգտագործում է «**զանստեղծն**» եզրը [Կ. Հ. էջ 27], իսկ Պրոկոն իր թղթում, հաստատելով Քրիստոսի աստվածությունը, գրում է. «**Այլ Աստուած յԱստուծոյ. Քան մշտնջենաւորական, Որդին Միածին՝ անսկզբնական**» [Կ. Հ. էջ 108]: Սա, սակայն, ամենեւին չպետք է շփոթեցնի մեզ, քանի որ մշտապես պետք է հիշենք, որ այն, ինչ կատարվել է ու կատարվում է Սուրբ Երրորդության անքափանցելի սահմաններից ներս «**ի վեր է քան զամենայն միտս եւ զբանս**», այնպես որ մարդկային ոչ մի սպեկուլատիվ, եւ ոչ էլ դեդուկտիվ մտածողություն ի վիճակի չէ ընկալելու այդ անճառելի խորհուրդները: Հետեւաբար մեր հասկացած սկիզբը ոչ մի կապ չունի աստվածային սկզբի հետ:

գ. Անպատճառ-ἀναίτιος, non causa, non habens causam, безвиновный[13]

Հայր Աստծուն՝ Որդու եւ Սուրբ Հոգու համեմատական հարաբերությամբ անվանում են՝

ա. Սկիզբ - ἀρχή, principium, начало

բ. Պատճառ –aviti, ə, causa, вина[14]

Հորը՝ Որդու հանդեպ ունեցած Իր միակ ու անփոխարինելի հարաբերությունից անվանում են՝

ա. Հայր - *Πατήρ*, Pater, Отец

իսկ Սուրբ Հոգու հանդեպ ունեցած Իր հարաբերությունից՝

բ. Բխող - Προβολεύς, Изволитель, Отрыгатель[15]

2. Որդի Աստծո առանձնավորական հատկությունն է.

ա. Ծնելությունը - γέννησις, generatio, рождепиость[16]

3. Սուրբ Հոգի Աստծո առանձնավորական հատկությունն է.

ա. Բխողություն = Ելողություն[17] - ἐκπορευσις, ἐκπόρευμα, processio, исхождение[18]

Եկեղեցու հայրերը, քաջատեղյակ լինելով այդ իրողությանը, միեւնույն ժամանակ աշխատել են ներկայացնել այն նախադրյալը, որի հիման վրա նրանք օգտագործել են այդ եզրը եւ կամ էլ լուսաբանել, թե իրենք առհասարակ ի՞նչ են հասկանում տվյալ եզրը կոնկրետ համատեքստում գործածելով։ Եպիփան Կիպրացին, իբրեւ աքսիոմային դրույթ, հաստատում է, որ Որդին «**ոչ սկսեալն ի յելն**»։ Գրիգոր Աստվածաբանը Հոր անսկզբության կողքին չի համարձակվում խոսել Որդու անսկիզբ լինելու մասին։ Որդին «**ոչ անսկիզբն, վասն զի ի Հաւրէ**», սակայն նա իր պարտքն է համարում նշելու, որ եթե սկիզբն ու անսկիզբությունը դիտվում են ժամանակի տեսանկյունից, ապա շարունակելն արդեն անիմաստ է, որովհետեւ Որդին՝ ժամանակի արարիչը լինելով, դուրս է եւ ենթակա չէ ժամանակին։

Այս հարցի լուծման բավականին հետաքրքիր տարբերակ է առաջարկում Եզնիկ Կողբացին։ Նրա աստվածաբանական համակարգում եթե Հայրը «**անսկիզբ**» ու «**արարիչ**» է, ապա Որդին ու Սուրբ Հոգին «**անսկզբնակից**» ու «**արարչակից**»-ներ են։

Անսկիզբությանը վերաբերող այս հանգամանքը ամբողջովին գործում է նաեւ անպատճառության պարագային։

13 Տես Կ. Հ. **Գրիգոր Նյուսացի**. «Առանձին է Հայր՝ ոչ ի պատճառէ գոլ». էջ 24-25: **Եզնիկ Կողբացի**. «Մի Աստուած խոստովանիմք՝ յանդիմանութիւն բազմանուն չասուածոցն, ինքնակայ, *անպատճառ*, պարգական... », էջ 51:

14 Հայրն ինքը, անպատճառ լինելով, միեւնույն ժամանակ պատճառ է, ինչպես եւ անսկիզբ լինելով սկիզբ է Որդու եւ Սուրբ Հոգու համար։ Այսպիսով, Հայրն է Որդու եւ Սուրբ Հոգու գոյության պատճառը, իսկ Որդին ու Սուրբ Հոգին պատճառից «**անժամանակաբար եւ առանց պատճառի**» [«ՆԵՐՍԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԹՈՒՂԹԸ ՄԱՆՎԵԼ ԿՈՄՆԵՆՈՍԻՆ», «էջմիածին» Բ, 1969, էջ 42]: Հայրն է միակ պատճառը, գրում է Կոստանդին կաթողիկոսը Հեթում թագավորին ուղված իր թղթում «**միոյն ծնողեամբ եւ միոյն ելողութեամբ**» [«ԳԻՐՔ ԹՂԹՈՑ» [= Գ. Թ.], Թիֆլիս, 1901, էջ 504]:

15 "ИСПОВЕДАНИЕ ХРИСТИАНСКОЙ ВЕРЫ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ", Иосиф архиепископ Аргутинский-Долгорукий,Санкт-Петербург, 1799, стр. 28.

16 Անանիա Նարեկացի, «ԳԻՐ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ», Վաղարշապատ, 1892, էջ 6. «Հաւատամք ...եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, Որդին Աստուծոյ՝ *ծնեալ* եւ ոչ արարեալ»: Պարույր Մուրադյան, «ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՀԻՆ ՎՐԱՅԵՐԵՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ», Երեւան, 1982, «ԲԱՆ ՍՈՒՐԲ ՀԻՊՈՂԻՏԵՍԻ՝ ՎԱՄՆ ՀԱՎԱՏՈ», «1.2.Հավատում ենք ու խոստովանում ... Որդուն՝ *ծնված* լուսո Հորից»: «Հաւատամք զԲանն Աստուած անեղ *ծնեալ* ի Հօրէ նախքան զհաւիտեանս». «ՄԱՇՏՈՑ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ», Անթիլիաս, 1958, էջ 32:

17 «ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹՔ ՍՐԲՈՅՆ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ», Յերուսաղէմ, 1871, էջ 184. «Հաւատամք ի Սուրբ Հոգին՝ որ զամենայն քննէ եւ զխորս Աստուծոյ, որ բղխէ առ ի Հօրէ... »: «ՇԱՇՏՈՑ», Վաղարշապատ, 1872, «ԱՂՕԹՔ ՍՐԲՈՅՆ ՅՕՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԱՍԱՑԵԱԼ Ի ՍՈՒՐԲ ԵՐԵՐՈՐԴՈՒԹԻՒՆՆ», էջ 461. «Որ եսդ Տէր զօրութեանց Աստուած ճշմարիտ աղբիւր լուսոյ եւ կենաց *բղխեալ* անքննաբար ի Հօրէ»: Տես Գ. Թ. էջ 191, **Արրահամ կաթողիկոս**. «Հաւատամ ...եւ ի Սուրբ Հոգին, արարիչ եւ

* * *

Սակայն, հակառակ Եկեղեցու աստվածաբանական ավանդության՝ քննարկվող խնդրի հստակ ըմբռնմանը, հայրաբանական եւ ավելի ուշ շրջանների դավանաբանական գործերը քննելիս, բախվում ենք բավականին հակասական թվացող մի երեւույթի, այն է՝ Եկեղեցու հայրերը հաճախ առանց անհրաժեշտ թծախնդրության են վերաբերվում առանձնավորական հատկություններն արտահայտող եզրերի հետ: Անշուշտ, գործը չի հասնում ենթամեականության, բայց առաջանում է մի խնդիր, որը մեկնաբանության կարիք է զգում:

Վերոհիշյալ հիմնահարցի պատճառները երկուսն են.

Ա. Եզրերի նմանօրինակ «շփոթում» նկատվում է նաեւ Աստվածաշունչ մատյանում: Այն Հորը երբեմն Հոգի է անվանում. «**Հոգի է Աստուած**» [Յովհ. Դ 24]. Որդուն Հայր է կոչում. «**Զի մանուկ ծնաւ մեզ, որդի տուաւ մեզ, որոյ իշխանութիւն ելս եղեւ ի վերայ ուսոց իւրոց, եւ անուն կոչեցաւ նմա Հրեշտակ մեծի խորհրդոյ, Սքանչելի, Խորհրդակից, Աստուած Հզօր, Իշխան, Հայր հանդերձելոյ աշխարհի**» [Եսայի Թ 6]: Երբեմն Որդուն Սուրբ Հոգուց ծնված է համարում. «**քանզի որ ի նմայն ծնեալ է ի Հոգւոյն Սրբոյ է**» [Մատթ. Ա 21]: Ինչպես նաեւ բխում եզրն են օգտագործում Որդու առնչությամբ. «**Բղխեսցէ սիրտ իմ զպատգամս [Քան] զոր բարիս**» [Սաղմ. Դ 2], իսկ Հոգուն՝ Միածին է կոչում. «**Զի ամենեցուն ճարտարապետն ուսոյց ինձ իմաստութիւն: Զի գոյ ի նմա Հոգի մտաւոր, սուրբ, միածին**» [Իմաստ. Է 21-22]: Սա բնավ շփոթություն կամ այլայլություն չի ենթադրում՝ եզրակացնել տալով, թե Հայրը երբեմն Որդի է լինում, Որդին՝ Սուրբ Հոգի, Սուրբ Հոգին էլ՝ Հայր, եւ հակառակը. «**մերժիր այսպիսի կարծիքները**», քանի որ թեեւ Սուրբ Երրորդությունը մեկ բնություն եւ էություն ունի, սակայն Նրա «**յուրաքանչյուր անձնավորության ներհատուկն անշարժական եւ անշփոթ է**»[19]:

Բ. Եւ երկրորդ պատճառն այն է, որ տվյալ եկեղեցական հայրերը իրենց աշխատություններում երբ որ մասնակիորեն անդրադառնում են առանձնավորական հատկություններին, ամենայն ճշգրտությամբ են կիրառում խնդրո առարկա եզրերը: Եվ միայն սրանից հետո, կանխավ համոզված լինելով այդ հարցի շուրջ ընթերցողի նախնական պատկերացում ունենալու մասին, Եկեղեցու հայրերը դիմում են, այսպես կոչված, «**եզրաբանական ազատությանը**»:

Միայն այս ենթահողի վրա կարելի է հասկանալ Ներսես Լամբրոնացուն, որն իր տարբեր գործերում հստակ եւ որոշյալ կերպով Սուրբ Հոգու առանձնավորական հատկությունը՝ բխումը ներկայացնելով հանդերձ, հանգանակի մեկնության մեջ գրում է. «**Եթէ յառաջ խաղալ եւ եթէ բղխել եւ եթէ ելանել ոչ ասիցէ, ի ճշմարտութենէն ոչ սխալէ**»:

Այսպես, աստվածաբանական պրակտիկայում Հորից Որդու առաջանալը արտահայտվում է հետեւյալ եզրերով՝ **προβολή, proletio, processio, derivatio, ἀποῤῥοία, signatura**, ինչպես նաեւ **προπηδᾶν, ἐκλάμπειν, ἀναλάμπειν** բայերով: Իսկ Սուրբ Հոգու առնչությամբ ընդհանրապես տրվել են հետեւյալ եզրերը՝ **πρόοδος, προβολή, προβλεμα** եւ **προσελθεῖν, προϊέναι** բայերը:

կենդանացուցանող եւ նորոգիչ, ոչ ծնունդ, այլ *նորոգութիւն*». նույն տեղում, էջ 324. **Ստեփանոս Սյունեցի**. «Խոստովանիմք ... զՀոգին Սուրբ,*նորոգութիւն* ի Հայրէ»:

18 Архимандрит Макарий, " ПРАВОСЛАВНОЕ ДОГМАТИЧЕСКОЕ БОГОСЛОВИЕ", Санкт-Петербург, 1850, том I, стр. 331-333.

19 Տե՛ս Գրիգոր Տաթեւացի. «ՈՍԿԵՓՈՐԻԿ», Երեւան, 1995, էջ 235-238:

ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ԴԸ ՍԱԼԻ
(1567-1622)

ՈՒՂԵՑՈՒՅՑ ԲԱՐԵՊԱՇՏ ԿՅԱՆՔԻ

ՄԱՍ Դ*

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՆ ՈՒ ԱՂՈԹՔԸ ՈՐՊԵՍ ԱՍՏՑՈՒՆ ՄԵՐՁԵՆԱԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

ԳԼՈՒԽ ԺԱ
Տագնապի մասին

Տագնապալից վիճակը այնպիսի փորձություն է, որի շնորհիվ և որի միջոցով գրոհում են բազմաթիվ այլ փորձություններ ևս: Տրտմությունը հոգու նեղություն է՝ իր կամքից անկախ պատահած չարիքի հետևանքով: Այն կարող է լինել արտաքին, ինչպես աղքատությունը, հիվանդությունը, արհամարհանքը, և ներքին, ինչպես անգիտությունը, չորությունը, նողկանքը, գայթակղությունը: Իրեն տհաճություն պատճառող չարի ներգործությանը ենթարկվող անձը համակվում է տրտմությամբ: Նա շուտափույթ միջոցներ է ձեռնարկում՝ ազատվելու չարից: Դա բնական է. յուրաքանչյուրն էլ ձգտում է հեռացնել իրենից այն, ինչ չարիք է ներկայացնում իր համար: Եթե անձը ղեկավարվում է Աստծու սիրով, ապա վարվում է խոնարհությամբ, հանդարտությամբ, համբերությամբ և հեզությամբ՝ հույսը դնելով ավելի Աստծու գթասրտության, քան սեփական ուժերի, ջանքերի, գիտելիքների վրա, իսկ եթե դրդիչ հանգամանքը ոչ թե Աստծու սերն է, այլ ինքնասիրությունը, ապա նա շտապում է և ոգևորությամբ որոնում չարը հեռացնող նորանոր միջոցներ, կարծես թե արդյունքն ավելի շատ իրենից է կախված, քան՝ Աստծուց:

Եթե անձը շուտով չի հասնում ուզածին, համակվում է սաստիկ տագնապով և անհամբերությամբ: Չարիքը չի վերանում, ընդհակառակը՝ նրա իշխանությունն էլ ավելի է ամրանում, քանի որ չափից դուրս տրտմելուց և վհատվելուց հոգին կորցնում է իր ուժն ու արիությունը, և չարիքը թվում է անհաղթահարելի:

Այսպիսով տեսնում ենք, որ, ինքնըստինքյան, օրինավոր տրտմությունը տագնապ է ծնում: Վերջինս ծայրաստիճան խորացնում է տրտմությունը, ինչը

---

* Սկիզբը տե՛ս «Էջմիածին» ամսագրի 1998 թ. Դ, Ե, Զ, Է, Ժ-ԺԱ և 1999 թ. Ա համարներում:

չափազանց վտանգավոր է: Մեղքից հետո, այն հոգուն սպառնացող ամենամեծ չարիքն է: Ինչպես պետությունն է թուլանում ներքին խռովություններից ու խառնակություններից և անկարող դառնում դիմադրելու թշնամուն, այնպես էլ մեր խռովահույզ և տագնապած սիրտն ի վիճակի չի լինում՝ պահպանելու ձեռք բերած առաքինությունները և ուժ չի գտնում դիմակայելու փորձություններին, ինչի հետևանքով էլ թշնամին հնարավորություն է ստանում, ինչպես ասում են, ձուկ որսալ պղտոր ջրում:

Տագնապալից վիճակն առաջանում է տառապանք պատճառող չարից ազատվելու, հուսացած բարիքն ստանալու անսահման ցանկությունից: Այնուամենայնիվ, ոչինչ այդպես չի կրկնապատկում չարի ուժը և հեռացնում բարին, ինչպես շտապողականությունն ու տագնապը: Թռչնակը խճճվում է ցանցում, որովհետև սկսում է խուճապահար նետվել այս ու այն կողմ: Եթե ուզում ես հասնել որևէ նպատակի կամ ազատվել ինչ-որ չարիքից, ամենից առաջ խաղաղեցրու միտքդ, թող որ քո դատողությունները և կամքը գրավեն իրենց տեղերը, նոր միայն, առանց շտապելու, համապատասխան միջոցներ ընտրիր նպատակիդ հասնելու համար, առանց հուզմունքի և շփոթվածության, այլապես կփչացնես ամբողջ գործը և կհայտնվես է՛լ ավելի դժվարին վիճակում:

«Հոգիս ամեն ժամ իմ ձեռքում է,- բացականչում է Դավիթ թագավորը,- և ես քո օրենքը չմոռացա» (Սղմ. 118. 109): Օրը մի քանի անգամ քննիր ինքդ քեզ, մանավանդ առավոտյան և երեկոյան, քո ձեռքո՞ւմ է արդյոք հոգիդ, թե նրան տիրացել է որևէ կիրք կամ տագնապ և հափշտակել քեզանից: Տիրապետո՞ւմ ես դու քո սրտին, թե այն գտնվում է որևէ սաստիկ կլանող զգացմունքի ազդեցության ներքո՞ ոչ օրինավոր սիրո, ատելության, նախանձի, վախի, բուռն ցանկության: Եթե այն մոլորվել է, ամենից առաջ գտիր և կանգնեցրու Աստծու առջև: Քո զգացմունքներն ու ցանկությունները ենթարկիր Նրա Աստվածային կամքին: Ով վախենում է որևէ թանկագին բան կորցնելուց, աշխատում է այն ձեռքից բաց չթողնել: Ուրեմն մենք էլ պիտի ասենք սաղմոսերգուի նման. «Հոգին իմ ենթակա էր պատահականությունների, դրա համար ես միշտ պահում եմ այն իմ ձեռքում և այդպիսով չեմ մոռանում օրենքը Քո»:

Թույլ մի տուր ցանկություններդ անհանգստացնեն քեզ, այլապես սրտումդ խառնաշփոթ և անբարեկարգություն կառաջանա: Երբ զգում ես, որ անհանգստության ալիք է բարձրանում, հանձնիր քեզ Աստծուն և որոշիր ոչ մի բան չձեռնարկել ցանկությունդ իրականացնելու համար, մինչև իսպառ չանցնի տագնապը: Եթե գործը հրատապ է, այս դեպքում էլ ջանա որքան հնարավոր է հանդարտորեն զսպել ցանկությունդ, հետո միայն հետևիր առավել՝ բանականության, քան՝ ցանկությանդ:

Եթե կարող ես, պատմիր քո տագնապների մասին հոգևոր առաջնորդիդ կամ հավատարիմ ընկերոջդ և մի կասկածիր, որ օգնություն կստանաս, վիշտը կիսելն արդեն թեթևություն է բերում, այն ամենալավ դեղամիջոցն է:

ԳԼՈՒԽ ԺԲ

Տրտմության մասին

«Տրտմությունը, ըստ Աստծու ուզածի, ապաշխարություն է առաջ բերում փրկության համար, իսկ աշխարհի տրտմությունը մահ է առաջ բերում» (Բ ԿՈՐՆ. 7. 10): Տրտմությունը կարող է լինել լավ ու վատ՝ կախված ներգործության եղանակից: Բարի ազդեցությունն ի հայտ է գալիս երկու կերպ՝ ողորմածության և ապաշխարության, վատը՝ վեց՝ ծուլության, տագնապի, վրդովմունքի, խանդի, նախանձի, անհամբերության:

Տխրությունն սպանեց շատերին (Սիր. 30. 25): Այդ աղբյուրից միայն երկու բարի առվակ են հոսում, իսկ մնացած վեցը՝ վատն են:

Թշնամին տրտմությունն օգտագործում է՝ փորձությունները սաստկացնելու համար: Չարագործներին փորձում է ներշնչել գոհունակություն՝ գործած մեղքերից, բարիներին հիասթափություն՝ իրենց բարի գործերում: Չէ՞ որ այլ կերպ չի կարելի ներքաշել չար գործերի մեջ, եթե չհրամցվի այն հաճելի կերպով և հեռացնել բարի գործերից, եթե չներկայացվի անախորժ կերպով:

Հակառակորդին ուրախացնում է տխրությունն ու մելամաղձոտությունը, որովհետև ինքն այդպիսին է և այդպիսին էլ մնալու է հավերժ: Նա ուզում է, որ բոլորը նմանվեն իրեն: Վատ տրտմությունը քայքայում է հոգին, առաջացնում անհիմն վախ, շեղում աղոթքից, տկարացնում և ճնշում միտքը, զրկում արիությունից ու վճռականությունից, ջլատում ուժերը, խիստ ձմռան նման ոչնչացնում երկրի գեղեցկությունը և անշարժության մատնում ողջ կենդանությունը: Այն սպառում է հոգու բոլոր հյութերը, դարձնում անընդունակ ու անգործունյա: Բարեկա՛մս, եթե երբևէ համակվես այդ վատ տրտմությամբ, դիմիր աղոթքին (Հակ. 5. 13), որը մեծագույն միջոցն է տրտմության դեմ, ընդ որում, պետք է ընտրել աստվածային սերն ու ողորմածությունն արտահայտող աղոթքներ:

Դիմադրիր տրտմությանը, մի՛ դադարիր գործելուց, որքան էլ անտարբեր ու տխուր լինես: Քեզ բարի գործերից հեռացնելու միտում ունեցող թշնամին, տեսնելով, որ չես թողնում բարի գործերդ, այլ անում ես ինքդ քեզ հարկադրելով, դադարում է քեզ տրտմեցնել և արածդ է՛լ ավելի մեծ արժեք է ձեռք բերում: Երգիր Սաղմոս, հոգևոր երգեր, նրանք հաճախ ստիպում են նենգավորին վերջ տալ իր բռնած գործին: Զբաղվիր զանազան այլ գործերով՝ հոգին մաքրելու և ջերմացնելու համար, քանի որ տրտմությունը ցրտաշունչ և չար մոլուցք է: Ջանասիրաբար կատարիր գործերդ, թեկուզև առանց հաճույքի: Կրծքիդ սեղմիր Խաչը, հառիր հայացքդ երկնքի՝ վստահության և սիրո արտահայտությամբ. «Ո՞վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրուց» (Հռ. 8. 35): Ավելի հաճախ հաղորդվիր Սուրբ Մարմնին ու Արյանը, այն ամրացնում է մարդու սիրտը (Սղմ. 103. 15) և զվարթացնում հոգին: Պատմիր քո վշտերի մասին հոգևոր առաջնորդին ու ընկերներիդ: Եւ, վերջապես, հանձնիր քեզ Աստծուն՝ վիշտդ կրելու հոժարությամբ, և մի կասկածիր, որ, սիրտդ քննելուց հետո, Աստված կուղարկի քեզ Իր օգնությունը:

ԳԼՈՒԽ ԺԳ
Հոգևոր մխիթարությունների մասին

Այս աշխարհում ամեն ինչ փոփոխական է. իրար են հաջորդում գիշերն ու ցերեկը, տարվա չորս եղանակները, ոչ մի օրը նախորդին չի կրկնում: Մարդու կյանքի օրերն ու ժամերը նույնպես միանման չեն անցնում՝ մերթ ուրախ, մերթ վախով համակված, մերթ հույսով լի, մերթ վշտի ու ցավի մեջ:

Որքան էլ դրսում, թե՛ անձնական կյանքում ամեն բան անընդհատ ենթարկվի փոփոխության, մեր սիրտը մշտապես պիտի ձգտի հաստատված մնալ Աստծու մեջ: Ինչպիսին էլ լինի մեր հոգեվիճակը՝ քնքուշ, խաղաղ, վշտաբեկ, տագնապած, փորձության մեջ, հանգիստ, լուսավոր, խավար, ցամաք, գորովագութ, միևնույն է, մեր սրտի, մտքի, կամքի կողմնացույցը պետք է անպայման ուղղված լինի մեր Արարչին, մեր Փրկչին, միակ և բարձրագույն Բարիքին: «Եթե ապրում ենք, Տիրոջ համար ենք ապրում, և եթե մեռնում ենք, Տիրոջ համար ենք մեռնում» (Հռ. 14. 8),- ասում է առաքյալը:

«Ո՞վ պիտի մեզ բաժանի Քրիստոսի սիրուց» (Հռ. 8. 35-39): Այո՛, ո՛չ վիշտը, ո՛չ տագնապը, ո՛չ մահը, ո՛չ կյանքը, ո՛չ ներկա նեղությունները, ո՛չ գալիք փորձությունների ահը, ո՛չ նենգավորի խորամանկությունները, ո՛չ սփոփանքի առատությունը, ո՛չ տառապանքի խորությունը, ո՛չ խանդաղատանքը, ո՛չ անտարբերությունը երբեք չեն բաժանի մեզ այս սիրուց, որի հիմքը Հիսուս Քրիստոս է:

Մշտապես փոփոխվող վիճակներում և հանգամանքներում, Աստծու սիրուց չբաժանվելու վճռականությունը նպաստում է մեր հոգու հավասարակշռությունը և կայունությունը պահպանելուն: Բացի այս ընդհանուր գաղափարներից, անհրաժեշտ են և մասնավոր ցուցումներ: Բարեպաշտությունը քնքշանքի, խանդաղատանքի, հուզումների, արցունքների ու հառաչանքների, հաճելի զգացողությունների համադրում չէ ամենևին: Ո՛չ, սիրելի՛ բարեկամս, այդ ամենը համազոր չէ բարեպաշտությանը: Քիչ չեն բազմապիսի մխիթարություններ և քնքուշ զգացումներ վերապրող, բայց ախտավոր հակումներով մարդիկ, ովքեր չունեն ո՛չ ճշմարիտ սեր առ Աստված, ո՛չ էլ ճշմարիտ բարեպաշտություն: Երբեմն թշնամին զվարճանալու նպատակով բորբոքում է մեր երևակայությունը: Ոմանք եկեղեցում, խաչյալ Փրկչին նայելով, հուզվում և արտասուք են հեղում, բայց նրանց արցունքները շատ շուտ են ցամաքում՝ շոգ ամառվա անձրևաջրի պես: Հուզմունքից և խանդաղատանքից բխող արցունքները չեն թափանցում արատավոր սրտից ներս և օգուտ չեն տալիս: Այդ խեղճ մարդիկ չեն համաձայնվի հանուն Քրիստոսի հրաժարվել գոնե մեկ վատ սովորությունից, զրկվել իրենց կյանքի որևէ հարմարավետությունից, բաժանվել անարդարացի վաստակած հարստությունից: Հաճախ այդ սրտառուչ զեղումները ոչ թե աստվածպաշտության դրսևորում են, այլ թշնամու խորամանկություն, քանի որ նրանք ամենևին չեն փնտրում ճշմարիտ բարեպաշտություն և բավականին գոհ

են իրենցից: Այս մարդիկ, թեև լալիս են խաչյալ Փրկչի տառապանքների և մահվան համար, բայց իրենց սրտերը Նրան հանձնել չեն ուզում: Աստված չի կարող փոխել նրանց հետաքրքրությունները՝ հրապույրները, մանր կապվածությունները, որոնք համեղ ուտեստների պես ավելի ցանկալի են, քան երկնային երանությունները: Աստվածպաշտությունը չի կարող հիմնվել հեղհեղուկ, սենտիմենտալ ապրումների վրա, որ բնորոշ են անկայուն խառնվածքներին՝ տպավորվող ու չափազանց զգայուն ամեն տեսակի փոփոխությունների նկատմամբ: Սակայն այդ նուրբ զգացմունքները կարող են և օգտակար ու բարի լինել, որովհետև ջերմություն են հաղորդում հոգուն, խթանում միտքը՝ աշխույժ ու զվարթ տրամադրություն ստեղծում, ինչը նպաստում է մեր գործերը հաճույքով կատարելուն: Դավիթ թագավորը բացականչեց. «Որքան քաղցր են քո խոսքերը իմ քիմքին, ավելի քաղցր, քան մեղրն իմ բերանին» (Սղմ. 118. 103): Աստծու ծառաների վկայությամբ, երկնային մխիթարությունները մեծապես գերազանցում են աշխարհիկ հաճույքներին: Նրանք կանխաճաշակումն են երկնային երանությունների:

Ալեքսանդր Մեծը, բաց ծովում նավարկելիս, քամու բերած ծաղիկների բուրմունքով հեռվից ճանաչեց Արաբիան: Նա և նրա ուղեկիցները սրտապնդված շարունակեցին ճանապարհը: Այսպես և մենք, ժամանակավոր կյանքի ծովում Աստծուց պարգևներ ենք ստանում, որոնք հաղորդում են մեզ կանխազգացումը երկնային հայրենիքի, որին սպասում ենք կարոտով:

Բնականաբար, քո մեջ հարց է ծագում՝ ինչպե՞ս տարբերել Աստծու ուղարկած ազնիվ զգայական ուրախությունները նրանցից, որ բխում են մեր իսկ բնությունից կամ էլ թշնամուց և անօգուտ են ու նույնիսկ վտանգավոր:

Մենք կարող ենք ճանաչել պտուղներից (Մտթ. 7. 16): Մեր սրտերը կարելի է նմանեցնել ծառերի, զգացմունքները և կրքերը՝ ծյուղերի, իսկ գործերն ու արարքները՝ պտուղների: Եթե մեր զգացմունքներից, քնքշանքից, մխիթարություններից դառնում ենք ավելի խոնարհ, համբերատար, կարեկցող, գթասիրտ, գիջող, մեծերին հնազանդվող, ապրում ավելի պարզ կյանքով, եթե դրանք օգնում են հաջողությամբ պայքարելու սեփական վատ հակումների դեմ, անշուշտ, Աստծուց են: Բայց եթե մարդը դառնում է կտրուկ, ինքնասածի, հպարտ, անհոգի և իրեն սուրբ է համարում ու անտեսում ուրիշների խրատները, անշուշտ, նրա զգացմունքները կեղծ են ու վտանգավոր:

Նման մխիթարությունների առկայությունն ամենևին չի նշանակում, որ կարող ենք մեզ բարի համարել: Բարիքի լիությունից մարդը բարի չի դառնում: Ավելի լավ է մտածել այսպես. որքա՞ն բարի է Աստված իրեն փնտրող հոգու հանդեպ (Հմմ. Սղմ. 72. 1-28): Գնահատել է պետք ոչ այնքան աստվածային պարգևները, որքան դրանց աղբիւրը՝ Աստծու սերը: Չէ՞ որ մենք պարգևներ չենք փնտրում, այլ փրկող Աստծուն:

Միշտ պատրաստ լինենք ասելու. «Ուր էլ լինես, Տեր, Գողգոթայում թե Թաբոր լեռան վրա, խաչին գամված թե փառավորված, լավ է մեզ Քեզ հետ միասին լինելը» (Մտթ. 17. 4):

Մխիթարությունների առատության դեպքում խորհրդակցիր հոգևոր առաջնորդիդ հետ՝ ինչպես չափավորել, հավասարակշռել զգացմունքներդ: Ասված է. «Երբ մեղր գտնես, որդյակ, վերցրու այնքան, որքան անհրաժեշտ է քեզ» (Առակ. 25. 16):

ԳԼՈՒԽ ԺԴ

Հոգու ցամաքություն և անպտղաբերություն

Մխիթարություններով լեցուն հրաշալի ժամանակը մշտատև չէ: Գալու է և այն պահը, երբ հոգիդ թվալու է անապատ, անպտուղ երկիր, ուր հնարավոր չէ գտնել դեպի Աստված տանող արահետ անգամ, շնորհի մի կաթիլ նույնիսկ՝ ոռոգելու այն (Սղմ. 62. 3):

Ավա՜ղ, նման կացության մեջ գտնվող անձը արժանի է խոր կարեկցանքի, մանավանդ, եթե հիվանդությունը սուր բնույթ է կրում: Այդ դեպքում հոգին Դավթի պես հեծկլտոցով արտասվում է օր ու գիշեր: Իսկ թշնամին, որպեսզի էլ ավելի խորացնի նրա հուսահատությունը, ծիծաղում է նրա վրա. Քո Աստվածն ո՞ւր է (Սղմ. 41. 4): Ո՞ր ճանապարհներին կգտնես Նրան: Ո՞վ է վերադարձնելու Նրա շնորհառատության բերկրանքը: Ուրեմն, ինչպե՞ս վարվել նման դրության մեջ գտնվելիս:

Ուշադրությամբ քննիր՝ ո՞րն է տրտմությանդ պատճառը: Հաճախ հոգևոր ցամաքությունն ու անպտղությունը լինում են մեր մեղավորության հետևանքով: Ինչպես մայրն է արգելում երեխային քաղցրավենիք ուտել, եթե այն վնասում է նրան, այնպես էլ Աստված զրկում է մխիթարությունից, եթե անձը մեծամտանում է դրանից կամ տարվում այլևայլ սին զգացմունքներով: «Լավ է, որ Դու խոնարհ դարձրիր ինձ» (Սղմ. 118. 67-71): Այդ տեղի է ունենում, երբ մենք ծուլությունից աստվածային սիրուն արժանի պտուղներ չենք բերում: Իսրայելացիները կարող էին հավաքել մանանան մինչև արևի դուրս գալը, որովհետև տաքությունից այն հալվում էր (Ելք 16. 21): Երբեմն մենք, ինչպես հարսնացուն Երգ Երգոցում, (5. 2-6) կլանվում ենք երկրային զգայական մխիթարություններով և հաճույքներով: Փեսան բախում է դուռը, հրավիրում մեզ, մինչդեռ մենք սակարկում ենք, ափսոսում թողնել մեր երկրային գործերը և ունայն հաճույքները: Ճարահատյալ նա հեռանում է, մենք մնում ենք նույն տեղում: Երբ նորից ցանկություն արթնանա գտնելու Նրան, ստիպված կլինենք երկար որոնել: Իհարկե, մենք արժանի ենք դրան, քանի որ հավատարիմ չեղանք Նրա սիրուն, աշխարհիկ գործերը նախընտրելով՝ հրաժարվեցինք հետևել Նրան. մենք ունենք եգիպտոսի ալյուրը, ինչների՞ս է պետք երկնային մանանան: Մեղուներին չեն հրապուրում արհեստական բուրմունքները, նույնպես և Սուրբ Հոգու բուրմունքը անհամատեղելի է այս աշխարհի կեղծ հաճույքներին: Քո հոգում երկվություն է առաջանում և ամենևին զարմանալի չէ՝ Սուրբ Հոգին, որին դու ստում ես, զրկում է քեզ Իր մխիթարություններից:

Դու հագեցած ես աշխարհիկ վայելքներով, մի՞թե զարմանալի է, որ հոգևոր մխիթարությունները քեզ չեն գոհացնում: «Քաղցածներին լիացրեց բարիքներով և մեծահարուստներին ձեռնունայն արձակեց» (Ղուկ. 1. 53): Աշխարհի վայելքներով լիացածը անհաղորդ է հոգևորին: Պահպանե՞լ ես արդյոք եղած մխիթարությունների պտուղները: Եթե պահպանել ես՝ կստանաս նորերը, որովհետև ով ունի, նրան պիտի տրվի և ունեցածը պիտի ավելացվի, իսկ ով իր մեղքով կորցրել է ստացածը, նրանից ունեցածն էլ պիտի վերցվի (Մտթ. 25. 29), և նա զրկվելու է այն ամենից, ինչ պատրաստված էր իր համար: Անձրևը կենդանություն է տալիս կանաչ բույսերին, բայց ոչնչացնում արդեն չորացածները: Ահա թե ինչու մենք կորցնում ենք բարեպաշտության մխիթարությունը և ընկնում հոգևոր ցամաքության և անպտղության մեջ: Քննենք մեր խիղճը, և բացառված չէ, որ հայտնաբերվեն նման թերացումներ: Բայց հիշի՛ր, բարեկա՛մս, այդ քննությունը պետք է կատարել առանց խուճապի և ավելորդ հետաքրքրասիրության: Գոհացիր Աստծուց, եթե լրջորեն քննելուց հետո պատճառը քո մեջ գտնես: Երբ պատճառը հայտնի է, չարը կիսով չափ ոչնչացված է: Եթե քո մեջ չգտնես որևէ բան, ինչով պայմանավորված լինի այդ ցամաքությունը, այլևս մի պրպտիր, առանց հետագա վերլուծության, ամենայն պարզությամբ խոնարհվիր Աստծու առաջ՝ գիտակցելով սեփական աղքատությունդ և ոչնչությունդ: Ինչ եմ ես առանց Քեզ, ով Տեր, չոր ու ճաքճքած հող միայն, որը ծարավի է երկնքից թափվող անձրևի, այնինչ քամին ցրում է ամպերը և փոշու վերածում հողը:

Աղաղակիր Աստծուն, ուրախություն խնդրիր Նրանից. «Տուր ինձ ցնծությունը Քո փրկության» (Աղմ. 50. 14), «հեռացրու ինձնից այս բաժակը» (Մտթ. 26. 39, Ղուկ. 22. 42), «սաստիր հոգիս ցամաքեցնող քամուն, ուղարկիր մխիթարական հովը, որ փչի իմ պարտեզի մեջ» (Երգ 4. 16) և տարածի ծաղիկների բույրը: Գնա խոստովանության, բաց արա սիրտդ Աստծու առաջ, թող երևան գան հոգուդ բոլոր ելևէջները: Հեզությամբ և խոնարհությամբ ընդունիր բոլոր հոգևոր խորհուրդները: Աստված սիրում է հնազանդությունը, այլոց՝ մանավանդ հոգևոր առաջնորդների խորհուրդներին անսալը: Այս միջոցներին դիմելուց հետո, նման իրավիճակում ոչինչ այնքան օգտակար չէ, որքան համբերությունը և խաղաղությամբ ավարտին սպասելը: Ես ոչ թե ասում եմ, թե պետք չէ ձգտել ազատագրման, այլ պետք է հույսը դնել Աստծու ողորմածությանը և չցուցաբերել շտապողականություն ու անհամբերություն: Ասա. «Ով Աստված, եթե կարելի է, հեռացրու ինձանից այս բաժակը» (Մտթ. 26. 39, Ղուկ. 22. 42): Տեսնելով պատրաստակամության այս դրսևորումը, Աստված կմխիթարի մեզ իր ողորմածություններով, ինչպես օրհնեց Աբրահամին, երբ տեսավ սիրելի որդուն զոհելու հոժարությունը: Ասենք. «Տերը տվեց ինձ մխիթարություն, Տերն էլ ետ առավ: Թող օրհնյալ լինի Տիրոջ անունը» (Հոբ. 1. 21): Կարևորն այն է, որ չկորցնենք արիությունը, համբերատար սպասենք մխիթարությունների վերադարձին, միևնույն ժամանակ, շարունակելով մեր բարեպաշտ ընթացքը, հետամուտ լինենք բարի գործերին: Քո հնարավորությունների սահմաններում բազմապատ-

կիր բարի գործերդ: Աստված ընդունում է և մեր «ցամաքած» սրտի ընծաները, եթե տեսնում է, որ մենք անվերապահորեն որոշել ենք սիրել Նրան:

Հաճախ պատահում է, որ հոգևոր մխիթարություններ վայելող անձը մոռացության է մատնում բարի գործերը և, հակառակը, նրանցից զրկվելուց հետո, առավել ուշադրություն դարձնում բարեպաշտական լուրջ գործերին և հմտանում այնպիսի բարձր առաքինություններում, ինչպիսիք են համբերությունը, խոնարհությունը, անձնուրացությունը, ինքնասիրության հաղթահարումը: Ոմանք, մանավանդ կանայք, կարծում են, որ Աստված ավելի քիչ է հավանում, երբ ծառայում ենք Իրեն առանց խանդավառության և բուռն զգացմունքների: Իրականում պատկերն այլ է: Այն գործերը, որոնք արթնացնում են ջերմ զգացմունքներ, հաճելի են մեզ, իսկ երբ չեն արթնացնում, ավելի արժեքավոր են Աստծու առջև:

Այո՛, սիրելի՛ բարեկամս, ցամաքած, բեկված սրտով մենք ավելի շուտ ենք մղվում Աստծուն ծառայելուն և շատ ավելի գորավոր ու մնայուն արդյունքների հասնում, քան հուզառատությունն է:

Դժվար չէ ծառայել թագաժառանգին խաղաղության պայմաններում, երբ քեզ հասու են պալատական կյանքի բոլոր վայելքները, բայց փորձիր ծառայել տագնապի, հալածանքների ժամանակ, պատերազմական դժվարին պայմաններում:

Հայտնի Սրբերի վկայությամբ, Աստծու մոտ ավելի մեծ արժեք է ձեռք բերում այն աղոթքը, որն արվում է ներքին հարկադրությամբ, երբ հաղթահարվում է սրտի ցամաքությունն ու դիմադրությունը:

Նույնը կարելի է ասել և բոլոր բարի գործերի վերաբերյալ: Որքան շատ են թե՛ ներքին, թե՛ արտաքին խոչընդոտները, այնքան ավելի գնահատելի է արած գործը: Որքան քիչ ենք անձնապես շահագրգռված տվյալ առաքինի գործում, այնքան ավելի վառ է լուսարձակում Աստծու սերը նրանում:

ԳԼՈՒԽ ԺԵ

Ասվածի հիմնավորումն ու բացատրությունը՝ օրինակներով

«Սովորական իրողություն է, որ համարյա բոլորը, ովքեր սկսում են ծառայել Աստծուն, պատկերացում չունեն հոգևոր կյանքի փոփոխականության մասին: Երբ հավատացյալն այլևս անմիջականորեն չի զգում այն բերկրանքը, որն օգնում է ընթանալ Աստծու ճանապարհով, ուժասպառ է լինում, մատնվում տրտմության և վհատության: Այս հանգամանքը բացատրվում է հետևյալ կերպ. մարդու էությունն այնպիսին է, որ ի վիճակի չէ երկարատև մնալ առանց երկրային կամ երկնային մխիթարության: Վեհ հոգիները հեշտությամբ հրաժարվում են զգայական մխիթարություններից՝ հանուն հոգևոր մխիթարության, բայց երբ զրկվում են ոչ միայն մարմնավոր, այլև հոգևոր մխիթարություններից, քանի դեռ վարժված չեն համբերությամբ սպասելու ճշմարիտ արեգակի վերադարձին,

իրենք իրենց ո՛չ երկրի վրա են զգում, ո՛չ երկնքում և խորասուզվում են անվերջանալի գիշերվա մեջ: Ինչպես կրծքի երեխան է տագնապում և լալիս մոր կուրծքը կորցնելիս, այնպես էլ նրանք կարոտից հանգիստ չեն գտնում: Այդպես պատահեց և Ջեֆրի Պերոնացու հետ, երբ նոր էր անցել Աստծուն ծառայելուն: Հենց որ մնաց առանց մխիթարության, հոգևոր խավարի մեջ, նորից դարձավ դեպի իր աշխարհիկ ընկերները ու հարազատները և ենթարկվեց ծանր փորձությունների: Եղբայրներից մեկը հարցրեց նրան. «Ինչո՞ւ ես այդքան տխուր ու մռայլ»: «Ես այլևս երբեք ուրախ չեմ լինի»,- պատասխանեց Ջեֆրին: Ստահոգված եղբայրն այդ մասին պատմեց իրենց ընդհանուր հոգևոր հորը, որը, հասկանալով վտանգը, մտավ մոտակա եկեղեցին՝ աղոթելու նրա համար: Նույն ժամանակ Ջեֆրին վշտաբեկ քնած էր քարի վրա: Քիչ հետո երկուսն էլ ոտքի ելան՝ մեկը՝ աղոթքից, մյուսը՝ քնից, այնպիսի ուրախ ու հանգիստ տրամադրությամբ, որ նրա մտերիմը, այդ հանկարծակի փոփոխությունից ապշած, հիշեցրեց երեկվա ասածը: «Իսկ հիմա ես համոզված եմ, որ այլևս երբեք տրտում չեմ լինի».- պատասխանեց նա:

Այս պատմության վերաբերյալ ուզում եմ ասել հետևյալը: Սկզբնական շրջանում Աստված հոգևոր ուրախություններ է տալիս, որպեսզի մարդու ուշադրությունը շեղի երկրային վայելքներից և մղի դեպի հոգևոր սերը: Հետագայում Աստված երբեմն զրկում է այդ մխիթարություններից՝ մեզ փորձությունների և գայթակղությունների ենթարկելով՝ աստվածպաշտության մեջ հաստատելու նպատակով:

Ինչպե՞ս է փոթորկվում այն հոգին, որը ցամաքել է և դեռ չգիտի, որ պետք է համբերությամբ հաղթահարի և այդ: Մենք երբեք չպիտի կորցնենք արիությունը, ինչպես Ջեֆրին: Գիշերվա խավարում պիտի սպասենք լույսի բացվելուն և բարենպաստ պայմաններում չկարծենք, որ երբեք տրտում չենք լինելու: Իմաստունի խոսքով, երջանկության օրերին պետք է հիշել դժբախտության մասին (Սիրաք 11. 27): Պետք չէ կորցնել հույսը դժվարին պարագաներում և պետք է զգուշանալ հաջողությունների ժամանակ: Թե՛ այս, թե՛ այն դեպքում միշտ պետք է համակերպվել:

Լավ միջոց է տառապանքների մասին պատմել հոգևոր բարեկամին, ով ընդունակ է օգնել քեզ: Ամբողջացնելով մեր միտքը՝ ասենք, որ բոլոր իրավիճակներում Աստծու և մեր փրկության թշնամու նկատառումները հակադիր են: Աստված առաջնորդում է մեզ սրտի կատարյալ մաքրության, Աստծուն ծառայելու համար սեփական շահերից լիակատար հրաժարման և ամբողջական անձնուրացության, իսկ նենգավորը ձգտում է նույն հանգամանքներն օգտագործել ի վնաս մեզ՝ մեր արիությունը խաթարելու, զգայական վայելքների մղելու, այնպիսի իրավիճակներ ստեղծելու, որպեսզի մենք ծանծրացնենք եւ մեզ, եւ մեր շրջապատին՝ նպատակ ունենալով պարսավել և արժեզրկել աստվածպաշտությունը: Իմ խորհուրդներին հետևելը կօգնի քեզ անցնել վշտերի և նեղությունների միջով և հաստատվել կատարելություն տանող ճանապարհին:

Ուզում եմ ավելացնել ևս մի քանի խոսք: Երբեմն հուսահատությունը, նողկանքը և անտարբերությունը հետևանք են անառողջ վիճակի, գերհոգնածության, ֆիզիկական տկարության, ինչն ազդում է հոգեկանի վրա, որովհետև նրանք սերտ կապի մեջ են: Այս վիճակում հարկավոր է փորձել որևէ բարի գործ կատարել, որպեսզի, ինչպես հարսը երգ երգոցում, կարելի լինի ասել. «Ես քնած եմ, բայց իմ սիրտն արթուն է» (5. 2): Միևնույն ժամանակ անհրաժեշտ է մարմնին տալ օրինավոր հանգիստ և թեթևացում: Սբ. Ֆրանցիսկոսը սովորեցնում էր, որ պետք է չափավորել ծանրաբեռնվածությունը՝ հոգու նկրտումները չխափանելու համար: Ֆրանցիսկոս Ասսիզեցու* կյանքում եղել է մի շրջան, երբ ընկղմվել է խորը մելամաղձության մեջ, որը վերագրել է իր անկարգապահությանը: Նա այլևս ընդունակ չէր զրուցել աշակերտների հետ, բայց առանց նրանց ավելի վատ էր զգում: Նա սպառել էր իր ուժերը ժուժկալությամբ և մարմնավոր ճգնություններով, և աղոթքն այլևս չէր օգնում: Այդ վիճակը տևեց երկու տարի: Նրան թվում էր, թե Աստված լքել է իրեն: Ծանր փորձությանը խոնարհությամբ դիմանալուց հետո, Փրկիչը նորից երանավետ խաղաղություն պարգևեց նրան: Այս մասին պատմեցինք, որպեսզի տեղյակ լինես, որ Աստծու մեծ ծառաները նույնպես ենթարկվել են զանազան տարուբերումների, և ամենևին պետք չէ հուսահատվել ու զարմանալ, երբ նույնը պատահում է նաև մեզ:

(Շարունակելի)

Ռուսերենից թարգմանեց
ԱՐՓԻՆԵ ՊԱՊԱՅԱՆԸ

---

* Ֆրանցիսկոս Ասսիզացի (1181-1226) - Ֆրանցիսկյան միաբանության հիմնադիր: Սերում էր հարուստ ընտանիքից: Քսան տարեկան հասակում հրաժարվեց իր ժառանգությունից և հիմնեց «մուրացկանների» միաբանությունը, որը հաստատվեց Ինոկենտի Գ Պապի կողմից: Սրբադասվեց իր մահից երկու տարի անց:

ՀԵՅԵՐԳԻՏՍԵԿԱՆ

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ 1700-ԱՄՅԱԿԻՆ

ՊԻՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՕՐԵՐԻՆ

Նախ՝ երկու խոսք ընդհանրապես եպիսկոպոսական Աթոռի, վիճակի կամ, ժամանակակից անվանակոչությամբ, հոգևոր թեմի մասին:

Թեմը որևէ աշխարհագրական-ազգագրական շրջանի, երկրամասի կամ երկրի, աշխարհագրական գոտու կամ աշխարհամասի միևնույն դավանությանը կամ Եկեղեցուն պատկանող կրոնական համայնքների միավորումն է մեկ ընդհանուր հոգևոր տեսչության ներքո: Նրա առաջնորդը եպիսկոպոսն է: Թեմական կամ նրա առժամանակյա տեղական պաշտոնը վերապահվում է միայն կուսակրոն հոգևորականին՝ արքեպիսկոպոս, եպիսկոպոս և վարդապետ՝ վերջինիս համար պայմանով, որ նա որոշ ժամանակ անց ձեռնադրվի եպիսկոպոս:

Թեմերի սահմաններն անփոփոխ չեն, անհրաժեշտության դեպքում նրանք կարող են վերանայվել՝ բաժանվել երկու և ավելի անկախ թեմերի, ինչպես նաև միավորվել հարևան թեմերի հետ կամ ընդհանրապես լուծարվել:

Թեմի նվազագույն օղակը կամ միավորը ծխականը կամ ծուխն է, որոնց կամավոր համախմբումից ձևավորվում են եկեղեցական-կրոնական համայնքները: Վերջինները կարող են ընդգրկել ինչպես առանձին բնակավայրերի, այնպես էլ որևէ գյուղի կամ քաղաքի մեկ կամ մի քանի թաղերի ծխերն ու ծխականներին: Կրոնական-եկեղեցական համայնքների հոգևոր հովիվները ծխատեր կամ ծիսակատար քահանաներն են: Ցուրաքանչյուր համայնք, սովորաբար, հիմնում է իր եկեղեցին, ուր կատարվում են կրոնական և ծիսական արարողություններ ու խորհուրդներ՝ Պատարագ, Ժամերգություն, Մկրտություն, Պսակ և այլն:

Հայոց ամենահեղինակավոր բառարանները («Նոր բառգիրք հայկազեան լեզուի», «Առձեռն բառարան») «թեմ» բառը բացատրում են

որպես «վիճակ եպիսկոպոսի, գաւառ՝ անկեալ ընդ իշխանութեամբ եպիսկոպոսութեան»՝ համապատասխան վկայություններ բերելով 12-րդ և հետագա դարերի մատենագիրներ Մատթեոս Ուռհայեցու, Վարդան Վարդապետի (Արևելցի), Ստեփաննոս Օրբելյանի և Զաքարիա Ծործորեցու երկերից: Աչքաթող է արված Կոստանդին Ա Բարձրաբերդցու «Սահմանք կանոնականք»-ը (1243 թ.), ուր իր բուն նշանակությամբ երեք անգամ օգտագործված է «թեմ» բառը («Արժանաւորքն միայն և գիտունքն առցեն զաստիճան եպիսկոպոսութեան՝ մեծաւ քննութեամբ և վկայութեամբ և թեմին կամակցութեամբ... հասակաւ մի՛ պակաս քան զերեսուն ամն», «Օտար յաշխարհէ եպիսկոպոս կամ վարդապետ, կամ երէց կամ գերոյ տէր առանց թեմի եպիսկոպոսին մի՛ շրջեսցին... այլ նորա հրամանաւ», «Երկիցս անգամ շրջեսցի եպիսկոպոսն ի տարւոջն յիւր թեմն...»)[1]: Հ. Աճառյանի «Արմատական բառարան»-ը ևս նույնն է հավաստում՝ ավելացնելով, թե այս փոխառյալ բառը (հունարենից) հայերենի միջոցով անցել է վրացիներին և հարևան ուրիշ ժողովուրդների: «Թեմ»-ը, այսպիսով, համեմատաբար նոր փոխառություն է՝ կատարված Կիլիկյան շրջանում, և նշանակում է «եպիսկոպոսի առաջնորդական վիճակ կամ գավառ»: Հայոց մատենագրության մեջ, ավելի հին շրջանում, այդ նույն նշանակությամբ օգտագործվել է «վիճակ» բազմիմաստ բառը՝ դրա տակ հասկացվելով «նահանգ, թեմ», «եկեղեցական պաշտոն, իշխանության տեղ»: 10-րդ դարի պատմիչ Ուխտանեսն էլ թեմի փոխարեն օգտագործում է «եպիսկոպոսաց Աթոռ» եզրույթը՝ եպիսկոպոսներին անվանելով «աթոռակալք, տեսուչք և առաջնորդք իւրաքանչիւր գաւառս ի փառս Աստուծոյ» (Ա, հ):

Արդի եկեղեցական ընկալումով՝ թեմը կամ եպիսկոպոսական Աթոռը հայ եկեղեցական համայնքների միավորումն է, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու վարչական մարմիններից մեկը, ազգային Եկեղեցու հովվական համայնքների միավորմամբ հաստատված կազմակերպություն՝ աշխարհագրական որոշակի շրջանի մեջ: Թեմի, վիճակի կամ եպիսկոպոսական Աթոռի իշխանության գլուխը եպիսկոպոսն է՝ որպես թեմական առաջնորդ:

Սովորաբար, թեմերն ունեն միասնական կառուցվածք՝ իրենց կարգադիր ու տնօրեն մարմինը, որը թեմական պատգամավորական ժողովն է: Վերջինս ընտրում է Թեմական խորհուրդ, որը տվյալ թեմի գործադիր մարմինն է և առաջնորդի խորհրդատուն: Թեմական առաջնորդներին ընտրում են թեմական պատգամավորական ժողովները, բայց նրանք պաշտոնի են կոչվում (կամ արձակվում) Ամենայն Հայոց Կաթողիկոսի կարգադրությամբ ու հաստատումից հետո: Ամեն թեմ կազմում է իր ներքին կանոնադրությունը, որն իրավական ուժ է ստանում Ամենայն Հայոց Կաթողիկոսի վավերացումից հետո: Այդ կանո-

---

[1] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Ե., 1961, գլուխ ԽԳ, հոդվածներ Բ, Թ, ԺԲ:

նադրությունները պետք է համապատասխանեն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու սահմանադրության տրամադրություններին և ոգուն:

Հայաստանյայց Եկեղեցու բարձրագույն հոգևոր պետերի որոշումներն ու վճիռները գործադրողները նախ և առաջ թեմական առաջնորդներն են, իսկ, այնուհետև, վերջիններիս հսկողությամբ, եկեղեցական-կրոնական համայնքների հովիվները. երեցներ ու քահանաներ, արեղաներ ու վարդապետներ, դպիրներ ու սարկավագներ, թեմական կառույցների մեջ պաշտոնավարող անձինք: Թեմական առաջնորդներն Ամենայն Հայոց Կաթողիկոսի լիազորն ու ներկայացուցիչներն են իրենց գործունեության սահմաններում:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նվիրապետական կառույցի մեջ առաջ եկած փոփոխությունների հետևանքով և ժամանակների ու հանգամանքների թելադրանքով, առանձին թեմեր կամ եպիսկոպոսական Աթոռներ կարող են ընդարձակվել և ձեռք բերել նոր իրավունքներ և ինքնուրույնություն, դառնալ միտրոպոլիտություն, պատրիարքություն կամ մասնավոր կաթողիկոսություն, ինչպես նաև, աստիճանաբար կորցնելով երբեմնի հեղինակությունը, իրավունքներն ու իշխանությունը, իջնել սովորական թեմերի շարքը կամ առմիշտ հեռանալ պատմության ասպարեզից. ազգային Եկեղեցու անցյալը երկու իրողության համար էլ ընձեռում է ուսանելի օրինակներ:

Հայաստանյայց Եկեղեցու առաջին եպիսկոպոսներին կամ թեմական առաջնորդներին սկզբներում նշանակում էր Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ելնելով երկրի զանազան գավառներում քրիստոնեության տարածման և Եկեղեցու իշխանության ամրապնդման շահերից: Հետագայում արդեն թեմականների ընտրությունը կատարվում էր Կաթողիկոսի և տվյալ ազգագրական-աշխարհագրական շրջանի փաստական տիրոջ ու իշխանավորի, նախարարի կամ նախարարական տան փոխադարձ համաձայնությամբ: Ռուսական կայսրության տիրապետության շրջանում թեմականների նշանակումը վերապահված էր կայսեր իրավասությանը՝ հարկավ, համապատասխան թեկնածուի կամ թեկնածուների ներկայացմամբ:

Ե՛վ հնում, և՛ նոր ժամանակներում հայտնի են ոչ քիչ դեպքեր, երբ իրար հետ միացվել են երկու և ավելի թեմեր, կամ մի քանի թեմերի հոգևոր տեսչությունը վստահվել է մեկ եպիսկոպոսի կամ թեմական առաջնորդի, կամ էլ՝ մեկ առանձին թեմում միաժամանակ առաջնորդություն են արել երկու եպիսկոպոսներ: Չենք խոսում արդեն նոր թեմերի ստեղծման կամ հների լուծարման մասին, որ հետևանք է նույն դավանության կրոնական համայնքների վերացմանը կամ կազմակերպմանը՝ միանգամայն նոր շրջաններում և աշխարհագրական գոտիներում: Թեմերի ստեղծման նպատակն ու խնդիրները նույնն են մնացել և՛ հնում, և՛ այժմ. հետևել տվյալ տարածքի եկեղեցական-կրոնական համայնքների ծխականների կամ հավատացյալների շրջանում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դավանաբանական

սկզբունքների անշեղ պահպանությանը, քրիստոնեական բարոյական ոգու ամրապնդմանը, ազգային Եկեղեցու շահերից բխող բարեսիրական, կրթական և այլ ձեռնարկումների հաջող իրականացմանը:

Հայաստանում առաջին քրիստոնյա համայնքները ձևավորվել են Թադեոս Առաքյալի քարոզության օրերին, Հիսուս Քրիստոսի մահվանից շատ չանցած, և Նրա ձեռքով էլ հիմնադրվել է առաջին եպիսկոպոսական Աթոռն Արտազում, հետագայում հռչակված Թադեի վանքում: Քրիստոնեության լույսի այս առաջին ջահակիրը նահատակի պսակ է ընդունում շուրջ 50 թ.:

Հաջորդը Բարդուղիմեոս Առաքյալն է, որի քարոզությունն ավարտվում է 68 թ., դարձյալ նահատակությամբ: Նրանց գործի շարունակողներն արդեն իրենց աշակերտներն էին, որոնց մեծ մասը նույնպես ուսուցիչ-առաքյալների ճակատագրին է արժանանում: Օրինակ՝ Զաքարիան նահատակվել է 76 թ., Զեմենտոսը վախճանվել է 81 թ.՝ եպիսկոպոսական Աթոռը 4 տարի կառավարելուց հետո, Ատրներսեհը նահատակվել է 97 թ.՝ 15 տարի կառավարելուց հետո, Մուշեն վախճանվել է 128 թ.՝ 30 տարի կառավարելուց հետո, Շահենը՝ 154 թ., 25 տարի կառավարելուց հետո, Շավարշը՝ շուրջ 175 թ.՝ 20 տարի կառավարելուց հետո, Ղևոնդիոսը նահատակվել է 193 թ.՝ 17 տարի կառավարելուց հետո[2]: Նրան հաջորդած եպիսկոպոսների անունները արդեն պատմական ժամանակագրությունները չեն պահպանել, անվիճելի է միայն Գրիգոր Լուսավորչին նախորդած վերջին եպիսկոպոսի անունը՝ Մեհրուժան, որը գահակալել է 230-260 թթ. միջև, և որը ծանոթ է արտաքին աղբյուրներից (Եւսեբիոս Կեսարացի, Պատմութիւն եկեղեցւոյ, Թ, ը):

Ավանդական կարգով այս բոլոր եպիսկոպոսների աթոռանիստը Արտազն էր, և դա ընդունում է Հայոց Եկեղեցու պատմությանը քաջատեղյակ Մաղաքիա արքեպս. Օրմանյանը: Նորագույն հետազոտողները, սակայն, փոքր-ինչ խախտում են այդ տեսակետը և Արտազի փոխարեն եպիսկոպոսական աթոռանիստ համարում Աշտիշատի վանքը[3]: Ովքե՞ր են գահակալել Մեհրուժան եպիսկոպոսից հետո Հայաստանում, պատմությունը լռում է, մինչև որ ասպարեզ է իջնում Ս. Գրիգոր Լուսավորիչը՝ վերստեղծելով նվիրապետական նոր կարգ, կառուցելով վանքեր ու եկեղեցիներ և ձեռնադրելով յուրաքանչյուր երկրամասի ու նահարարական տան համար առանձին անկախ եպիսկոպոս:

Ագաթանգեղոսի և նրա նախնական խմբագրությունից օգտված հեղինակների վկայությունների համաձայն, Հայաստանյայց Առաքե-

---

2 Այս եպիսկոպոսների ժամանակագրական ցուցակը տե՛ս Մաղաքիա արքեպս. Օրմանյան, Հայոց Եկեղեցին, Ե տիպ, հրատարակեց Դ. Ե., Անթիլիաս, 1952, էջ 197-198:

3 Հ. Պողոս Անանյան, Քրիստոնեության հետքեր Հայաստանի մեջ Ս. Գրիգոր Լուսավորչի քարոզությանն առաջ, Վենետիկ - Ս. Ղազար, 1979, էջ 14-19:

լական Եկեղեցու ազգային-պետական կարգերի և թեմական բաժանման բուն պատկերն ուրվագծվում է քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու առաջին տարիներից: Եկեղեցու սպասավորները, վերևից ներքև, բաժանվում էին հինգ կարգի՝ Կաթողիկոս[4], Եպիսկոպոս, Երեց, Սարկավագ, Անագանոս կամ Ընթերցող (Գրակարդաց)[5], իսկ թեմական կառույցը, Սամուել Կամրջաձորեցու հավաստմամբ, որին վկայակոչել է 13-րդ դարի պատմիչ Ստեփաննոս Օրբելյանը, բավական համեստ էր, ընդամենը 36 Աթոռ, որոնք, իրենց հերթին բաժանվելով տասնութական երկու խմբի, եկեղեցական ժողովների ժամանակ նստում էին Հայոց Կաթողիկոսի աջ և ձախ կողմերում: Աջից առաջին գահը Հարքա եպիսկոպոսինն էր, ձախից առաջինը՝ Բասենն: Հայտնի

---

4 Պատմությանը հավատարիմ լինելու համար հարկ է նշել, որ քրիստոնեության առաջին դարերում «Կաթողիկոս» անվանումն անսովոր էր Հայոց Եկեղեցու վեհապետների համար: Օրինակ՝ Սահակ Պարթևը և նրա հաջորդ Հովսեփ Հողոցմեցին իրենց կոչում էին պարզապես եպիսկոպոս՝ «Սահակ Հայոց Եպիսկոպոս», «Յովսէփ Եպիսկոպոս» (Խորենացի, Եղիշե): Կաթողիկոս կոչումն ընդհանրական է դառնում 6-րդ դարից սկսած, որին զուգահեռ օգտագործվում է եպիսկոպոսապետ կոչումը: Օրինակ՝ «Ի Մեծաց Հայոց ի Բաբգէնայ ի Հայոց Եպիսկոպոսապետէ», «Բաբգէն Հայոց Եպիսկոպոսապետ», «Բաբգէն Հայոց Կաթողիկոս» (506), «Ներսէս Կաթուղիկոս Հայոց Մեծաց» (551), «Ներսէս Հայոց Կաթուղիկոս» (555), «Յովհաննէս Հայոց Կաթուղիկոս» (565), «Մովսէս Հայոց Կաթողիկոս» (600), «Աբրահամ Հայոց Կաթուղիկոս» (607), «Կոմիտաս Մամիկոնէից Եպիսկոպոս, որ յաջորդեցայ ի կաթուղիկոսութիւն Հայոց Մեծաց» (615), «Յովհաննէս Հայոց Կաթուղիկոս» (Օձնեցի, 726), «Խաչիկ Կաթուղիկոս Հայոց Մեծաց» (986), «Տէր Գէորգ Հայոց վերադիտող» (շուրջ 1070 թ.) և այլն: Հայոց Կաթողիկոսների իշխանությունը տարածվում է Մեծ Հայքի ողջ տարածքում, Աղվանքում, իսկ մինչև 7-րդ դարը՝ նաև Վրաց և Աբխազաց թագավորություններում: Կիլիկյան շրջանում Հայոց վեհապետի կոչումներն ավելի բազմազան են դառնում, ըստ որում՝ առաջին անգամ օգտագործվում է նաև «Կաթողիկոս Ամենայն Հայոց» տիտղոսը (Կոստանդին Ա Բարձրաբերդցու Ընդհանրական թղթի և Կանոնների նախաբաններում, 1247, տե՛ս Գիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, գլուխ ԽԲ, ԽԳ): Բերենք մի քանի օրինակ. «Կաթողիկոս Հայոց» (Ներսես Օնորհալի), «Կաթողիկոս Հայոց Մեծաց» (Գրիգոր Տղա, 1170-ական թթ.), «Կաթողիկոս Ամենայն Հայաստանեայց» (Մխիթար Ա Արտազցի, 1964), «Եպիսկոպոսապետ Մեծաց Հայոց (Հայոց Մեծաց)» (Թեոդորոս Բ Կիլիկեցի, 1990 և Հակոբ Գ, 1409), «Կաթողիկոս Վաղարշապատու» (Կոստանդին Ե, 1490) և այլն: Հայրապետական Աթոռն Էջմիածնում վերահաստատվելուց որոշ ժամանակ անց, «Կաթողիկոս Ամենայն Հայոց» կոչումն Էջմիածնի գահակալների համար դառնում է ավանդական: Համենայնդեպս 17-րդ դարի 50-ական թթ., Փիլիպպոս Աղբակեցու օրերից, այն պարտադիր է դառնում բոլոր Կաթողիկոսների համար (վկայությունները տե՛ս «Գիրք թղթոց», Բ հրատ., Երևան, 1994, էջ 148, 149, 155, 157, 172, 181, 199, 201, 206, 210, 221, 298, 311, 393, 412, 492, 550, 580, 624:- Մ. Մսերեանց, Պատմութիւն Նաթողիկոսաց Էջմիածնի, Մոսկուա, 1876, էջ 291-296):

5 Տե՛ս «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909, էջ 448, պարբ. 856 (այսուհետև կրճատ՝ Ագաթանգեղոս):

է այնուհետև, որ Սյունյաց եպիսկոպոսը զբաղեցնում էր աջակողմյան յոթերորդ գահը[6]: Ուխտանեսի Պատմության մեջ հիշատակված են այդ եպիսկոպոսություններից կամ թեմերից 30-ի անունները, որոնք, ըստ ավանդության, հենց Գրիգոր Լուսավորչի կարգած եթե ոչ 36, ապա գեթ 25 թեմերի անուններն են: Ահա՛ Ուխտանեսի ցանկը.

1. Հարքա եպիսկոպոս կամ թեմ
2. Ոստանի
3. Տայոց
4. Մարդաղո
5. Արշամունյաց
6. Արծրունյաց
7. Սյունյաց
8. Ռշտունյաց
9. Մոկաց
10. Ամատունյաց
11. Բասենո
12. Մամիկոնեից
13. Բագրևանդա
14. Խորխորունյաց
15. Վանանդա
16. Ապահունյաց
17. Արշարունյաց
18. Գնունյաց
19. Գողթան
20. Գարդմանա
21. Ակեռ
22. Բաժունյաց
23. Երուտակաց
24. Ասորյաց
25. Անձևացյաց
26. Պալունյաց
27. Մեհունյաց
28. Ելո
29. Ջարևհանից
30. Մյուս Ասորյաց[7]:

Հիշյալ թեմերից 12-ի (թե՞ 13-ի) համար Գրիգոր Լուսավորիչը եպիսկոպոս է ձեռնադրել նախկին քրմերի զավակներին, որոնց անունները պահպանվել են Ագաթանգեղոսի Պատմության մեզ հասած խմբագրության մեջ, սակայն, ցավոք, այդ 12-ից միայն երկուսի մասին կա հիշատակություն, թե ո՞ր թեմերն են գլխավորել: Ըստ այդմ՝ առաջինը Աղբիանոսյան քրմական նշանավոր տան ներկայացուցիչն էր կամ Աղբիանոս եպիսկոպոսը, որը վերակացուն էր Մերձեփրատյան գավառների կամ Եփրատական կողմանց (նա միաժամանակ հիշվում

---

6 Ս. Օրբելյանի Պատմության համեմատական քննագիրը տակավին չի պատրաստված ու հրատարակված: Այդ երկը, ըստ տարբեր ձեռագրերի, որոնք միմյանց նկատմամբ ունեն նկատելի այլընթերցումներ, լույս է տեսել երկու անգամ՝ առաջինը Փարիզում, 1859 թ. (երկու գրքով), Կարապետ վարդապետ Շահնազարյանցի աշխատասիրությամբ, որ վերատպվել է նաև 1910 թ., Թիֆլիսում (մեր օգտագործածը), և երկրորդը՝ Մոսկվայում, 1861 թ., Մ. Էմինի աշխատասիրությամբ: Առաջինը խորագրված է «Պատմութիւն Նահանգի Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», (այսուհետև՝ ԿՇ-ի հրատ. և էջը), երկրորդը՝ «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական» (այսուհետև՝ Մ. Էմինի հրատ. և էջը): Տե՛ս համապատասխանաբար էջ 25 և էջ 16: Թե Սամուել Կամրջաձորեցու որ երկն է նկատի ունեցել Ստեփաննոս Օրբելյանը, մեզ չհաջողվեց պարզել:

7 Տե՛ս Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, հատուած Առաջին, Վաղարշապատ, 1871, էջ 100:

է Բագրևանդի եպիսկոպոս): Ժամանակ անց Աղբիանոսը կարգվում է նաև արքայական քանակի եպիսկոպոս[8], որը, ճիշտ որ, կարիք ուներ հեղինակավոր հոգևորականի խնամքին ու տեսչությանը: Հետևելով պատմական ավանդներին, կարծում ենք, հարկ է նաև այժմյան հայոց քանակի համար կարգել հատուկ հոգևոր տեսուչ կամ եպիսկոպոս: Ուրեմն՝ մեկ եպիսկոպոսի իշխանության տակ կար երեք Աթոռ կամ վիճակ: Երբեմնի քրմերի գավակներից էր նաև Եվտաղիոսը, որը Բասենի կողմերի թեմական առաջնորդ է կարգվել[9]:

Թեպետև մնացած տասը եպիսկոպոսներն Ագաթանգեղոսի հայերեն խմբագրության մեջ հիշվում են միայն իրենց անուններով, բայց ոչ կառավարած թեմերով, սակայն տվյալ հարցի պատասխանը տալիս են Ագաթանգեղոսի հունական և արաբական խմբագրությունները, որոնք հիշատակում են քրմական դասից ծագող եպիսկոպոսների և՛ անունները, և՛ թեմերը[10]: Ըստ այդմ՝ Բասոսը Կոտայքի (կամ էլ Տայքի գավառներից մեկի՝ Կողի) եպիսկոպոսն էր[11], Մովսեսը՝ Եկեղյաց

---

8 Տե՛ս Ագաթանգեղոս, էջ 441-442, պրբ. 845-846: Ն. Մառ, Մկրտութիւն Հայոց, Վրաց, Աբխազաց և Ալանաց ի Սրբոյն Գրիգորէ, թարգմ.՝ Հուսիկ արքեպիսկոպոս (Մովսիսյան), Վաղարշապատ, 1911, էջ 71:

9 Տե՛ս Ագաթանգեղոս, էջ 441-442, պրբ. 845:

10 Ագաթանգեղոսի Պատմության արաբական խմբագրությունը ռուսերեն թարգմանությամբ հրատարակել է Ն. Մառը (տե՛ս ծան. 5-ում հիշված աշխատությունը, մասնավորապես դրա հայերեն թարգմանության էջ 71-72), իսկ հունարեն համառոտ ու ընդարձակ խմբագրության տարբերակները լույս են տեսել և՛ անցյալում (հրատ. Պաուլ դը Լագարդի, Գյոտինգեն, 1887), և՛ 1946 թ. ու հետագա տարիներին (հրատ. Ժերար Գարիտի): Հունական խմբագրությունից օգտվել ենք բանասեր Գոհար Մուրադյանի աջակցությամբ, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը: Կա նաև հունարեն ընդարձակ տարբերակի հայերեն թարգմանությունը (Հ. Բարթիկյանի և Ա. Տեր-Ղևոնդյանի աշխատասիրությամբ), որ տպագրվել է «Էջմիածին» հանդեսի 1966 թ. համարներում:

11 Կոտայքի եպիսկոպոսական Աթոռի գոյությունը խիստ կասկածելի է: Սկզբնաղբյուրում, որ հունական Ագաթանգեղոսն է, ամենայն հավանականությամբ, այդ տեղանունն աղավաղված է: Արաբական թարգմանության մեջ առկա է դարձյալ աղավաղված արտահայտություն. «Եւ յղեաց զԲաս՝ յեպիսկոպոս Բիկուղաց» (Ն. Մառ, նշված աշխատ., էջ 71): Ն. Ադոնցը փորձել է կռահել աղավաղված բառը՝ «Բիկուղացը» վերծանելով Կող, որ Տայքի գավառներից մեկն էր, և համապատասխան եպիսկոպոսական Աթոռն էլ նույնացրել Վանանդի հետ, որ անհավանական է (տե՛ս Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, С. Петербург, 1908, с. 328, прим. 3), քանի որ Վանանդը հունական Ագաթանգեղոսի մեջ հանդես է գալիս միացյալ թեմով՝ Վանանդա, Աբեղենից և Գաբեղենից, որի առաջնորդ էր նշանակված Տիրիկեսը: Նշենք նաև, որ մեր բանասիրական թափառումների ընթացքում, 5-րդ և հաջորդ դարերին վերաբերող աղբյուրներում, չենք հանդիպել ո՛չ Կոտայքի որևէ թեմական առաջնորդի կամ եպիսկոպոսի, ո՛չ էլ Այրարատյան նահանգի Կոտից գավառում հիմնված եպիսկոպոսական Աթոռի կամ վիճակի: Բասոս եպիսկոպոսի կառավարած թեմի անունն, այսպիսով, մնում է չպարզված, չենք

գավառի ու Դերջանի, Եվսեբիոսը՝ Դարանաղի, Հովհաննեսը՝ Կարնո, Աղբիոսը՝ Տարոնի և Տայոց (արաբականում՝ Տայքի փոխարեն Բասուն, որ վերծանում են Բզնունյաց)[12], Խաբիբա-Ագապեսը՝ Սպերքի (Ասպետական կամ Բագրատունյաց նախարարության), Արտիթեոսը՝ Խոռխորունյաց կամ Մաղխազների, Արսուկեսը՝ Շիրակի, Անտիոքեսը՝ Կորդվաց, Տիրիկեսը՝ Վանանդա, Աբեղենից և Գաբեղենից (արաբականը՝ Ատրպատականի), Կյուրակոսը՝ Արշամունյաց: Սրանցից Աղբիոսին հիշում ու բնութագրում են միայն հունարեն և արաբերեն Ագաթանգեղոսները, որ առիթ է տալիս որոշ տարակուսանքի. նրա բնութագիրը շատ նման է Աղբիանոսին:

Հայր Պողոս Անանյանն անընդունելի է համարում այս տասներեք եպիսկոպոսների՝ քրմական դասից սերած լինելու պարագան, և, Աղբիանոսից բացի, մնացած տասներկուսին դիտում նախալուսավորչյան հայ քրիստոնյաների միջավայրից դուրս եկած եկեղեցականներ, որոնք Տրդատ Մեծի թագավորության առաջին շրջանում, քրիստոնյաների դեմ հարուցված անլուր հալածանքների պատճառով, լքել էին Հայաստանը և ապաստան որոնել հարևան հռոմեական նահանգներում ու հիմա, Գրիգոր Լուսավորչի հետ, Կեսարիայից վերադառնում էին Հայրենիք: Նշվում է այնուհետև, որ Ագաթանգեղոսն այլափոխել է պատմական ճշմարտությունը՝ Հայաստանում նախալուսավորչյան քրիստոնեության գոյությունն անտեսելու նպատակով[13]:

Հայագետի գլխավոր կռվանն այդ եպիսկոպոսների անունների հունական ձևն է, որը խիստ տկար է նման լուրջ հիմնավորման համար: Մինչդեռ հայտնի է, որ հայ իրականության մեջ, ավանդական կարգով, հոգևոր աստիճան ստացող անձանց ավազանի անունները փոխում էին: Ներկա դեպքում նույնն է կատարվել վերոհիշյալների անունների հետ:

Քրմական դասի նահանջը քրիստոնեության առջև և քրմական տոհմերից սերած վերոհիշյալ տասներեք անձանց եպիսկոպոսական ձեռնադրությունն ու հարուստ վիճակների վստահելը կարևորագույն իրադարձություն էր հայոց հոգևոր ու քաղաքական կյանքում, Գրիգոր Լուսավորչի հեռատես քաղաքականության շոշափելի արդյունքներից մեկը, շուրջ երկուս ու կես հարյուրամյակի ընթացքում նախալուսավորչյան քրիստոնյա հովիվների նախապատրաստած մտավոր հեղաշրջման վառ արտահայտությունը: Այս պայմաններում ճիշտ որ անապացույց լեգենդ է հայոց հեթանոս քաղաքակրթության և մեհենական

ասում նաև, որ Կոտայքը Հայաստանի արևելքում էր և մասը Արարատյան Հայրապետական թեմի, կողը՝ արևմուտքում:

12 Տարոնի և Տայքի միասնական եպիսկոպոսական Աթոռի հիշատակությունը թող տարօրինակ չթվա: Երկու աշխարհներում էլ բնակվում էին Մամիկոնյանները, ըստ որում՝ Տայքը նրանց բնօրրանն էր:

13 Հ. Պողոս Անանյան, նշված աշխատ., էջ 26-27:

գոի ու գրականության իսպառ ոչնչացումը Գրիգոր Լուսավորչի ու նրա գործակիցների ջանքերով և հայոց արքայի լայն աջակցությամբ:

Հին Հայաստանի նյութական մշակույթի և անգիր դպրության հուշարձանները հօգուտ դրա են վկայում. առաջին քրիստոնյաները երկյուղածությամբ պահպանեցին և չկործանեցին Գառնիի հեթանոսական տաճարը, չոչնչացրին Ուրարտական սեպագրերը և հունական ու արամեական արձանագրությունները: Ընդհակառակը, դրանք հյուրընկալվեցին նորակառույց եկեղեցիներում՝ դառնալով Ավագ խորանի վեմ-քարեր, ագուցվելով աղոթատների դրսի ու ներսի պատերին կամ զետեղվելով նոր կառուցվող սրբարանների հիմքերում: Ուրարտական կոթողներից շատերը ոչ միայն չտեղաշարժվեցին իրենց պատվանդաններից, այլև քրիստոնեացվեցին. նրանց վերին մասերում փորագրվեցին քառաթև խաչեր: Նման խաչքար-կոթողները եզակի չեն Հայաստան աշխարհում: Նոր եկեղեցիներից ու տաճարներից շատ-շատերը բարձրանում էին հեթանոսական մեհյանների տեղերում կամ նրանց ձևափոխումներն էին՝ կառուցվելով առավելապես փայտից: Այդպիսին էր, օրինակ, Էջմիածնի Մայր Տաճարը, որը կառուցված է հեթանոսական հիմնապատերի և կրակարանի վրա՝ վերակառուցման ժամանակ հոգալով դրանց պահպանության մասին: Քրիստոնեության շնորհիվ կորստից փրկվեցին գողթան երգերը և հայոց հին գուսանական արվեստը. Արևագալի երգերը նոր կյանք առան շարականների մեջ: Հեթանոս քաղաքակրթության քիչ թե շատ նշանակալից արտահայտությունները սրանք էին, և քրիստոնեությունը ոչ միայն դրանցից ոչ մեկը չի ոչնչացրել, այլև՝ պահպանել է: Հեթանոս Հայաստանի մտավոր թռիչքը ավելի բարձր չի ճախրել երբեք...

Հայոց իսկական քաղաքակրթությունն սկսվում է քրիստոնեության մուտքով՝ մասամբ, և ամբողջ վեհությամբ՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի ձեռքով հայերեն նշանագրերի հորինմամբ, հայագիր դպրոցի ու դպրության սկզբնավորմամբ[14]:

Չի կարելի անտեսել նաև այն անհերքելի ճշմարտությունը, որ քրմական միջավայրից դուրս եկած եպիսկոպոսներին վստահված Աթոռներն ու վիճակները Հայաստանի նախարարական հզոր տների տիրույթներն էին՝ փռված արևելքից արևմուտք և հյուսիսից հարավ. Եկեղյաց գավառից ու Դարանաղից մինչև Բարձր Հայք (Կարին), Տայք ու Սպերք, Բասենից ու Արշարունյաց գավառներից մինչև Բագրևանդ ու Ատրպատական, Շիրակից դեպի հարավ, Տարոն, Ծոփք ու Կորդվաց աշխարհ, Բագրատունյաց, Մամիկոնեից, Խոռխոռունյաց, Կամսարականների և այլոց պատկանող երկրամասերում՝ խնամքի տակ ունենալով նաև արքայական բանակը:

---

[14] Այս մասին տե՛ս նաև Գ. Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Բ, Ս. Էջմիածին, 1998, էջ 40-42, «Գրիգոր Լուսավորիչը գիրք այրե՞լ է» հոդվածը:

Քրմական միջավայրից դուրս եկած եպիսկոպոսների կողքին Գրիգոր Լուսավորիչն առաջնորդներ է նշանակում նաև Կեսարիայից իր հետ բերած կամ նոր ձեռնադրած ուրիշ եպիսկոպոսների՝ ուղարկելով նրանց նախ հարևան Վրաստան (Իրինարքոսին), Աբխազիա (Սոփրոնոսին) և Աղվանք (Թովմային), իսկ այնուհետև՝ Հայոց այլ գավառներ՝ **Մեծ Մոփք, Փոքր Մոփք, Հաշտիանք, Սյունիք, Արծն, Մոկաց** և **Մարդպետական** երկրներ: Ն. Ադոնցը վերջինների շարքում շատ վաղուց ավելացրել է նաև **Անգեղ տունը** և **Աղձնիքը**՝ մակաբերելով դրանք Ագաթանգեղոսի արաբական խմբագրության մեջ աղավաղված «յաշխարհն Գիլանաց, առ Աբխազս» արտահայտությունից[15]: Այս ուղղումն արդարացավ նույն հուշարձանի հունական ամբողջական խմբագրության գյուտով:

Մի վերապահություն այնուամենայնիվ պիտի անենք՝ կապված Սյունյաց եպիսկոպոսական Աթոռի հետ: Ազգային ավանդությունների համաձայն, Սյունիքում եպիսկոպոսական Աթոռ կար Գրիգոր Լուսավորչից շատ առաջ, ըստ որում՝ ինչպես հավաստում է Ստեփաննոս Օրբելյանը, Սյունյաց աշխարհի Գողթն գավառում առաջին եկեղեցին (Տեառնընդառաջ անունով) կառուցել է անձամբ Բարդողիմեոս Առաքյալը՝ նույն երկրամասի համար ձեռնադրելով առանձին եպիսկոպոս: Առաքյալի աշակերտներն էլ, իրենց հերթին, հիմնում են Ագուլիսի Թովմա Առաքյալի վանքը՝ և Գողթն գավառի Վանանդ գյուղի մատուռը: Սյունյաց Աթոռից Մուշե եպիսկոպոսը հետագայում ստանձնում է Արտազի եպիսկոպոսական Աթոռը[16]: Նշանակում է՝ Սյունիքին հատկացված եպիսկոպոսական Աթոռը նոր իրողություն չէր և քրիստոնեական քարոզչության հարուստ անցյալ ուներ:

Հնագույն աղբյուրների համաձայն, Գրիգոր Լուսավորիչը կարգավորել է նաև Այրարատյան Հայրապետական թեմը՝ հատուկ եպիսկոպոսներ նշանակելով **Վաղարշապատ, Արտաշատ** ու **Դվին** քաղաքներում և երեքին էլ ստորադասելով անձամբ իրեն՝ Կաթողիկոսին[17]: Մի քանի խոսք նաև այս կապակցությամբ. Այրարատը Հայաստան աշխարհի սիրտն է, Հայոց արքայի նստավայրը, առավելապես այս նահանգից են ընտրվել տերության գահանիստ քաղաքները: Անձամբ թագավորն իր ընտանիքով բնակվում էր մայրաքաղաքում, իսկ արքայական տան մյուս անդամները՝ նույն երկրամասի զանազան գավառներում, որոնք տարածված էին Արաքսի աջ ու ձախ ափերին և վերջինիս մեջ թափվող գետերի (Քասաղ, Հրազդան, Ազատ, Վեդի) երկայնքով ձգվող հովիտներում ու սարահարթերում: Ն. Ադոնցն արդեն վկայակոչված աշխատության մեջ տասնմեկ գավառ է հաշվում Այրարատ նահանգի մեջ. Արաքսից հյուսիս՝ Արագածոտն, Նիգ,

---

15 Տե՛ս Н. Адонц նշված աշխատությունը, էջ 328, ծան. 2:

16 Տե՛ս Ստեփաննոս Օրբելյան, Մ. Էմինի հրատ., գլուխ Ե:

17 Ագաթանգեղոսի հայերեն խմբագրությունը լռում է այս մասին, բայց այդ իրողությունը հաստատում են հունական և արաբական թարգմանությունները:

Վարաժնունի կամ Ծաղկունյաց ձոր, Մազազ, Կոտայք, Դվին, Ոստան, Ուրծ, Արաճ, Ծարուր և երկուսն էլ՝ Արաքսից հարավ, Կողբից դեպի Արարատյան լեռների բարձունքները ձգվող հովիտներում ու լեռնալանջերում՝ Ճակատք և Մասյացոտն[18]: Այս գավառներում, արքայական տան անդամներից բացի, բնակվում և ժառանգական տերեր էին նաև մեծ ու փոքր մի քանի նախարարություններ. Գնթունիները՝ Նիգ գավառում, Ամատունիները՝ Արագածոտնի հարավային մասում, իսկ Ուրծ, Արաճ և Վարաժնունի գավառների անունները արդեն մատնանշում են, թե որ նախարարություններին են վերաբերել դրանք:

Գրիգոր Լուսավորիչն իր կաթողիկոսության եթե ոչ առաջին, ապա հետագա տասնամյակներին եպիսկոպոսական Աթոռներ պետք է հիմնած լիներ մեր թվարկած նախարարական բոլոր տների համար, իսկ Այրարատյան նահանգի մնացած շրջանների համար, ուր բնակվում էին Արշակունյաց տնից սերված իշխանները՝ մի առանձին քորեպիսկոպոսություն: Այս Աթոռի պաշտոնական առաջնորդը նույնպես կաթողիկոսն ինքն էր, բայց գործնականում այն կառավարելու համար հավատարիմ հոգևորականներից մեկին նշանակում էր փոխանորդ, ավանդական մի սովորույթ, որ հարատևում է նաև այսօր[19]: Այսպիսով՝ Այրարատ նահանգում, իրականում, գոյություն ուներ եպիսկոպոսական առնվազն չորս Աթոռ՝ երեքը քաղաքների, իսկ մեկը՝ գյուղական վայրերի համար:

(Շարունակելի)

---

18 Տե՛ս Н. Адонц, նշված աշխատություն, էջ 902:

19 6-րդ դարի վերջերին Մովսես Կաթողիկոսը, օրինակ, վրաց հոգևորական կյուրոնին, որն իր հավատարիմ անձանցից էր, կարգում է «Վանայ երէց Կաթուղիկէին, այլև Քորեպիսկոպոս՝ տալով նմա զվիճակ գաւառն Այրարատեան», պատասխանատու պաշտոններ, որոնց իրավական հաստատումն Հայոց Կաթողիկոսն էր (Ուխտանէս Եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, հատուած Երկրորդ, էջ 4:

Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ԱՌԱՋԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ԸՍՏ ՊԵՎՏԻՆԳԵՐՅԱՆ ՔԱՐՏԵԶԻ

Պևտինգերյան քարտեզը (Tabula Peutingeriana), որը կազմվել է մ. թ. 4-րդ դարի 60-ական թվականներին հռոմեացի քարտեզագիր Կաստորիուսի կողմից, հանդիսանում է Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի առևտրատնտեսական կապերի պատմության համար անգնահատելի աղբյուր: Նրա վրա նշված են իր ժամանակաշրջանի համաշխարհային առևտրական ուղիները, քաղաքները և այլևայլ կայաններ՝ իրենց միջև եղած տարածություններով հանդերձ:

Սակայն, ինչպես ցույց է տալիս քարտեզի առավել հանգամանալից ուսումնասիրությունը, նրա նշանակությունը դրանով չի սահմանափակվել: Քարտեզի կազմման որոշ առանձնահատկություններ հիմք են տալիս կարծելու, որ այն կոչված էր ծառայելու ոչ միայն առևտրատնտեսական, այլ նաև կրոնա-մշակութային նպատակներին: Դա, մասնավորապես, հաստատվում է քարտեզի վրա մի շարք կայանների անվանումների մոտ երկու սրագագաթ աշտարակներով նշանի առկայությամբ: Չի կարելի ասել, որ այս հանգամանքը հետազոտողների ուշադրությունը չի գրավել: Բայց նրանք, ինչպես երևում է, չեն պարզել այդ նշանների բուն (իրական) նշանակությունը: Այսպես, Պևտինգերյան քարտեզի հրատարակիչ Կ. Միլլերը և ուսումնասիրողներից՝ Ց. Մարկվարտը ժամանակին կարծիք են հայտնել, որ նման նշաններով կայանները եղել են «նշանակալից քաղաքներ կամ զինվորական կայաններ»:

Այս խնդրին առնչվող փաստերի և, մասնավորապես, Հռոմեական (Բյուզանդական) կայսրության արևելյան նահանգների վարչա-եկեղեցական բաժանման վերլուծությունը մեզ թերում է այն եզրահանգման, որ երկու աշտարակներով նշանի առկայությունն իրականում հանդիսանում է եկեղեցական հաստատության խորհրդանիշ: Հետևաբար, կայանների անվանումների մոտ դրանց տեղադրումը ցույց է տալիս նրանցում կրոնական կենտրոնի առկայություն՝ անկախ նրանց մեծությունից և ռազմական նշանակությունից:

Ինչպես երևում է Պևտինգերյան քարտեզից, որն այժմ արդեն հայտնի իմաստով կարելի է համարել միաժամանակ նաև Հռոմեական

(Բյուզանդական) կայսրության եկեղեցական քարտեզ, կրոնական նշանակություն ունեցող կայաններ են եղել հենց Արևելքի, Ասիայի և Պոնտոսի (համապատասխանաբար՝ Անտիոք, Եփեսոս և Կեսարիա կենտրոններով) դիոցեզների (գլխավոր թեմերի) կենտրոնները: Սիրիայում այդպիսիք էին Ապամեան, Բերիան (այժմյան Հալեպը), Հիերոպոլը, Զևգման և այլն, Միջագետքում (Մեսոպոտամիա)՝ Եդեսիան, Ամիդը, Մծբինը, Ռաս-Էլ-Այնը (Ռեսսայինա), Սինգարան, Հատրան և այլն, Կապադովկիայում՝ Սեբաստիան, Կոմանան, Մելիտենեն, Սամոսատը և այլն, Մարաստանի քաղաքներում՝ Սելևկիայում, Կտեսիֆոնում (Տիգրոն), Էկբատանում և այլուր՝ սիրիացիների թեմերը և այլն:

Հայաստանում նման կայաններ են եղել այն ժամանակաշրջանի մայրաքաղաքներ Արտաշատը (Artaxata) և Տիգրանակերտը (Tigranocarten), Արտաշատ-Սատաղ ճանապարհին՝ Բագավանը (Ragauna, Bagauna), Chadas-ը և Andaga-ն, Արտաշատ-Տիգրանակերտ ճանապարհին՝ Saumbo: Արտաշատ-Sanora-Teleda-Անանուն կայան - Lazo-Sanora - Արտաշատ շրջանաձև ճանապարհին Հայաստանում գտնվում էին (չհաշված Արտաշատը) Sanora -ն և Lazo -ն (ըստ Անանուն Ռավեննացու՝ Jazo -ն), իսկ Վրաստանում՝ Teleda-ն (ըստ Անանուն Ռավեննացու՝ Telada) և Armastica -ն: Վրաստանում Արտաշատ-Սեբաստապոլիս ճանապարհի վրա՝ Caspiae -ն և Sebastopolis -ը:

Պևտինգերյան քարտեզի ուսումնասիրողների կողմից որոշվել են Արտաշատ-Սատաղ և Արտաշատ-Սեբաստապոլիս ճանապարհների ուղղությունները (երթուղիները): Արտաշատ-Տիգրանակերտ ճանապարհի երթուղին սխալ է որոշված, իսկ Արտաշատ- Sanora - Teleda -Անանուն կայան - Lazo -Արտաշատ ճանապարհի երթուղին ընդհանրապես որոշված չէ: Այնինչ, այդ ճանապարհների երթուղու որոշումը հեշտացնում է նրա վրա եղած կայանների, այդ թվում նաև՝ մեր կողմից ուսումնասիրվող (երկու աշտարակների նշանով կայանների), նույնացման ու տեղայնացման հնարավորությունը:

Saumbo-ի երկու աշտարակների նշանով կայանի նույնացման և տեղայնացման համար սկզբունքային նշանակություն է ունեցել Արտաշատ-Տիգրանակերտ ճանապարհի երթուղու ճշտումը: Բանն այն է, որ այս ճանապարհի հետազոտող Հ. Մանանդյանն ակնհայտ թյուրիմացությամբ ճանապարհի երթուղին Բագավանից տարել է Ապահունիք, Հարք և Տարոն գավառների միջով՝ ենթադրելով, որ Պևտինգերյան քարտեզի վրա կրկնվող Catispi, Sorue, Anteba և Nasabi կայանները «սխալմամբ արտագրվել են երկու անգամ»[1]: Իրականում

[1] Манандян Я. А. О торговле и городах Армении и городах Армении в связи с мировой торговлей древних времен. Ереван, 1954, стр. 144.

այդ կայանները հանդիսանում էին Արտաշատ-Էկբատան ճանապարհի մի մասը, «Մետաքսի Մեծ ճանապարհի» ճյուղերը: Այդ ուղղությամբ մեր կողմից կատարված քննությունը թույլ տվեց պարզել, որ Catispi -ն նույն ինքն Ուրցաձորում գտնվող Սակրաբերդ ամրոցն է (այժմյան Վեդի քաղաքից 9 կմ դեպի արևելք), որը ժամանակին հանդիսացել է Այրարատ նահանգի Ուրծ գավառի կենտրոնը:

Վերը նշված ճանապարհի հաջորդ կայանը՝ Sorue -ն, և՛ անվամբ, և՛ տեղադրմամբ համապատասխանում է Շարուրին:

Ինչ վերաբերվում է Anteba կայանին, ապա այն կարելի է նույնացնել հին Ազնաբերդ ամրոցին (այժմյան Նախիջևանի ԻՀ-ում):

Nasabi անվան տակ պետք է ենթադրել Նախիջևան քաղաքը, որը, ըստ Կլավդիոս Պտղոմեոսի «Ասիայի երրորդ քարտեզի», հայտնի է Naxuana անվամբ[2]:

Կայանների այս համախումբը, որն սկսվում էր Արտաշատից, քարտեզը կազմողի կողմից դուրս էր բերվել նրա վրա գտնվող ազատ տարածություն, որպեսզի նկարագրի մինչև Տիգրանակերտ ընկած հետագա ճանապարհը: Սակայն, զուտ տեխնիկական հանգամանքներով, համախմբի վերջավորությունը, ուր նշված է Catispi կայանը, հայտնվել է Բագավան կայանքի անմիջական հարևանությամբ, ինչը նրանց միջև օրգանական կապի տեսանելիություն է ստեղծել:

Այսպիսով, Պևտինգերյան քարտեզի վրա Nasabi-ից (Նախիջևան) հետո նշված է Saumbo-ն, այսինքն՝ Շամբը, որը, ըստ ավանդության, հանդիսացել է Բարդողիմեոս Առաքյալի հանգրվանատեղերից մեկը: Ժամանակի ընթացքում Շամբում (Շամբիձոր) կառուցվել է Սուրբ Ստեփաննոս Նախավկայի վանքը:

Ինչպես կարելի է դատել Շամբի անվանման մոտ երկու աշտարակների նշանի առկայությունից, այնտեղ արդեն մ. թ. 4-րդ դարում գոյություն ունեին որոշ եկեղեցական կառույցներ՝ կա՛մ դամբարան, կա՛մ աղոթատեղի, հնարավոր է նաև՝ փայտաշեն եկեղեցի: Համենայն դեպս, պատմական փաստաթղթերը վկայում են, որ Սահակ Պարթևը Շամբում հիմնել է թեմ և որպես սեփականություն նրան հանձնել հողային կալվածքները[3]:

Արտաշատ-Տիգրանակերտ ճանապարհին, բացի Շամբից, չի հիշատակվում (եթե չհաշվենք Տիգրանակերտը) երկու աշտարակների նշանով ոչ մի այլ կայան: Ճանապարհը Շամբից տանում էր դեպի Flegoana (վերջինս չի վերծանվում), այնուհետև՝ Dagreuana: Այդ կայանը համապատասխանում է Զարեհավանին՝ Զարեհավանյանների նախարարական տան կենտրոնին: Զարեհավանից հետո գալիս էր Molchia

---

[2] Мартиросян А. На Великом шелковом пути. Ереван, 1998, стр. 35-36.

[3] Ալիշան Ղ., Սիսական, էջ 518:

-ն, որը ենթադրաբար կարելի է նույնացնել Մեծ Աղբակի Օսի բնակավայրին: Այնտեղ էր գտնվում Արծրունյաց տոհմական դամբարանը: Դրան հաջորդում էր Vastauna-ն, այն է՝ Ոստանը: Ոստանից ճանապարհը Վանա լճի հարավային ափով (26 հռոմեական մղոն = մոտ 40 կմ) շարունակվում էր դեպի Datansana, այսինքն՝ Դատվան: Դրան հաջորդող կայանը Gilzanas-ն է, որը տեղորոշվում է Գզեխում (Գզեղք)՝ Աղձնիք նահանգի համանուն գավառի կենտրոնում: Հնում Դզեխը կրում էր ասուրա-բաբելոնական Gilzanu անվանումը: Այնուհետև ճանապարհը հասնում էր Cymiha-ին, այն է՝ Քղիմարին: Կլավդիոս Պտղոմեոսի «Ասիայի երրորդ քարտեզի» վրա այդ կայանը նշված է Cholimma[ra] անվամբ: Տիգրանակերտին նախորդող (30 հռոմեական մղոն = 45 կմ) կայանը եղել է Zanserio (Ra Zancerion)-ն: Դա Սանասնո ջուր (Zanse rio, Zance rion) գետն է:

Մ. թ. 4-րդ դարում Տիգրանակերտի կարևորությունը որոշվում է այն հանգամանքով, որ նա հանդիսանում էր Աղձնիք բդեշխության կենտրոնը: Պևտինգերյան քարտեզի տվյալները միաժամանակ վկայում են նաև Տիգրանակերտի կրոնական կենտրոն լինելու մասին:

Հայաստանում երկու աշտարակների նշանով կայաններ են եղել նաև Sanora-ն և Lazo-ն (Jazo)՝ Արտաշատ - Sanora - Teleda - Անանուն կայան - Lazo - Sanora - Արտաշատ ճանապարհին:

Sanora -ի նույնացումն ու տեղորոշումը ուղղակի կախվածության մեջ է գտնվել այդ ճանապարհի երթուղու ճիշտ ընտրությունից: Դա հաջողվեց իրականացնել Ց. Մարկվարտին[4]: Նա պարզեց Անանուն կայանի անվանումը, որը նույնացրեց Armastica-ին (Արմազի, Մծխեթ): Դրանով հնարավոր դարձավ Արտաշատից ճանապարհը տանել Սևանա լճի և Քուր գետի հովտի միջև ընկած տարածքով:

Ըստ Պևտինգերյան քարտեզի, Արտաշատի և Sanora -ի միջև ընկած է Geluina կայանը: Անանուն Ռավենացու մոտ Արտաշատի և Sanora -ի փոխարեն հիշատակվում են Gravete-ն ու Tegamia-ն: Սրանք համապատասխանաբար նույնացվում են Ջրվեժի և Geluina-ին: Ց. Մարկվարտն առաջարկեց Tegamia-ն և Geluina-ն կարդալ որպես Gelam-(ī)a:

Gelam-(ī)a անվանումը կապվում է առասպելական Գեղամի անվան հետ, որը բնակվում էր Սևանա լճի արևմտյան կողմում ընկած տարածքներում: Ավանդությունն ասում է, որ Գեղամը նույն ինքը Արա Գեղեցիկն է, և որ Շամիրամը փնտրում էր նրա դին Արամոնք (այժմյան տառադարձությամբ՝ Արամուս) բնակավայրում: Տրամաբանական է Արամոնքը նույնացնել Gelam-(ī)a-ին):

---

4 Markwart J. Skizzen historischen Topographie und Geschichte von Kaukasien. Das Itinerar von Artaxata nach Armastica auf der romischen Weltkarte. Wien, 1928.

Եթե դատենք Արամուսից մինչև Sanora ընկած տարածության չափով (24 հռոմեական մղոն= 36 կմ), ապա Sanora -ն պետք է որ գտնվելիս լիներ Հրազդան քաղաքի շրջակայքում, այսինքն՝ հին Կոտայք գավառի կենտրոնական մասերում:

Ենթադրում ենք, որ Հրազդանի շրջանում գտնվող Սոլակ գյուղը հենց վերը հիշատակված Sanora -ն է: Սրանում մասնավորապես համոզվում ենք՝ ելնելով այն տեղեկություններից, որ 7-րդ դարում Սոլակում Հովհան եպիսկոպոս Մայրավանեցին հիմնել է մի եկեղեցի, որը կոչվել է Մայրավանք («մայր» բառից): Հիմք կա կարծելու, և դա հաստատվում է Պևտինգերյան քարտեզի տվյալներով, որ 4-րդ դարում Սոլակում պետք է եկեղեցական կառույց լիներ: Հնարավոր է, որ հենց դա էլ պատճառ է հանդիսացել, որ Հովհան եպիսկոպոսն իր կառուցած եկեղեցին կոչի Մայրավանք: Համենայն դեպս, այդ անվանումը վկայում է, որ Սոլակի եկեղեցական շինությունը պատկանում էր Հայաստանում կպուցված առաջին եկեղեցիների թվին:

Sanora-ից Teleda ընկած ճանապարհի հատվածում նշվում են Lalla և Ugubre (ըստ Անանուն Ռավենացու՝ Usubri) կայանները: Ց. Մարկվարտը Lala -ն նույնացրել է Գուգարքում գտնվող Լալ ամրոցին՝ Աղստև գետի հովտում: Ugubre -ն նույնացման չի ենթարկվում:

Teleda-ն (Telada) համապատասխանում է Թելավի քաղաքին: Այս քաղաքի անվան կողքին երկու աշտարակներով նշանի առկայությունը վկայում է այն մասին, որ մ. թ. 4-րդ դարում Թելավը եղել է կրոնական կենտրոն:

Թելավին հաջորդող Philado կայանի անվանումը դժվար է վերծանել:

Philado-ին հաջորդում է Անանուն կայանը՝ Արմազին, Մցխեթը: Մցխեթը, որ մինչև մ. թ. 5-րդ դարը հանդիսանում էր արևելյան Վրաստանի՝ Քարթլիի (Իբերիա) մայրաքաղաքը, 6-րդ դարում դարձավ վրաց Կաթողիկոսի նստավայր: Պևտինգերյան քարտեզի տվյալները վկայում են, որ Մցխեթը կրոնական կենտրոն է եղել դեռևս 4-րդ դարում:

Պևտինգերյան քարտեզի վրա Մցխեթից հետո նշված են ևս մի քանի կայաններ՝ առանց անվանումների և նրանց միջև եղած հեռավորությունների ցուցումների: Սակայն, ի տարբերություն Պևտինգերյան քարտեզի, Անանուն Ռավենացու մոտ, ճանապարհի տվյալ հատվածում, նշված են Sazala, Camia, Gareas, Belalus, Aguilleam, Tarsambaram, Axara portum, Cipropolim կայանները: Բայց սրանք ևս չունեն հեռավորության ցուցումներ:

Սրանցից հաջողվել է նույնացման ենթարկել Sazala -ն (Ջելեթ), որն Անանիա Շիրակացու մոտ Վիրքի շրջաններից մեկն է: Belalus կայանը ենթադրաբար կարելի է նույնացնել Բոլնիսին: Ինչ վերաբե-

րում է Axara portum -ին, ապա այն, անկասկած, Ախթալայի կիրճն է (Ախթալայի լեռնանցք):

Անանուն Ռավեննացու մոտ նշված կայաններն ընկած են երկու աշտարակների նշանով Մցխեթ և Lazo (Jazo) քաղաքների միջև: Lazo-ն ոչ այլ ինչ է, եթե ոչ Օձունը (Օձուն), որը հնուց եղել է Գուգարք նահանգի Տաշիր գավառի կենտրոնը: Գրավոր աղբյուրներում Օձունն առաջին անգամ հիշատակվում է՝ սկսած 8-րդ դարից, սակայն հնագետներն Օձունում գտնվող գմբեթավոր բազիլիկ եկեղեցիներից մեկը վերագրում են 6-րդ դարին: Այս եկեղեցուց 10 կմ հյուսիս-արևելք գտնվող կոթող-դամբարանը թվագրվում է 5-6-րդ դդ.: Օձունից 15 կմ հարավ-արևելք գտնվում է Հոռոմայրի եկեղեցին: Այն պատմական փաստաթղթերում հիշատակվում է 7-րդ դարից: Կարելի է ենթադրել, որ այս եկեղեցիներից մեկը հանդիսանում է Հայաստանում կառուցված առաջին քրիստոնեական հաստատություններից մեկը: Մենք նախապատվությունը տալիս ենք Հոռոմայրին: Ինչպես և Sanora-ի (Մայրավանք) դեպքում, այստեղ ևս տեղին է հիմնվել այս եկեղեցու անվան մեջ «մայր» արմատի վրա:

Օձունը Sanora -ից բաժանում էին Satara (Ra Cacara), այն է՝ Քասաղ (Ապարան) և Bustica, հավանաբար՝ Փարպի կայանները:

Պնտինգերյան քարտեզի վրա, ինչպես նաև Անանուն Ռավեննացու մոտ, Sanora -ից հետո նշված են Geluina -ն և Artaxata -ն:

Այսպիսով, Պնտինգերյան քարտեզի տվյալները, որոնք արտացոլում են քրիստոնեական աշխարհում եկեղեցիների հիմնադրման սկզբնական փուլի իրադարձությունները, թույլ են տալիս լրացուցիչ լույս սփռել նաև Հայաստանում կառուցված առաջին եկեղեցիների պատմության վրա: Այս պարագայում դրանք համահունչ են Ագաթանգեղոսի տված տեղեկություններին, թե Հայաստանի տարբեր նահանգներում և, մասնավորապես Կոտայքում ու Գուգարքում, Գրիգոր Լուսավորիչը հիմնել է թեմեր և եպիսկոպոսություններ:

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ՆՈՐ ԷՋԵՐ ՆՈՐԱՎԱՆՔԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Նորավանքի եպիսկոպոսական Աթոռի պատմությունն ընդգրկում է իրադարձություններով և մշակութային իրագործումներով հարուստ ու հետաքրքրական մի ժամանակահատված: Նորավանքի Աթոռի հաստատմանը, գործունեությանն ու միտրոպոլիտական շրջանին հանգամանորեն անդրադարձել է Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանը *(«Էջեր Սյունյաց Աթոռի պատմությունից», Ս. Էջմիածին, 1995)*: Հայոց միջնադարյան եպիսկոպոսական Աթոռների մեջ Նորավանքի եպիսկոպոսարանն ունեցել է մի յուրահատկություն, այն է՝ բուն աթոռանիստ վայրից բացի ևս երկու վանքերի՝ Արատեսի և Վերին Նորավանքի ներգրավումը եպիսկոպոսարանի միասնական համակարգի մեջ: Նորավանքի գլխավորությամբ ձևավորված եպիսկոպոսարանի «եռավանք» համակարգը առանձին քննության չի արժանացել, ուստի փորձենք առկա նյութերի ու սկզբնաղբյուրների օգնությամբ ներկայացնել այն:

ԱՐԱՏԵՍԸ՝ ՆՈՐԱՎԱՆՔԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ՆՍՏԱՎԱՅՐ

Ինչպես հայտնի է, Նորավանքն առավելագույն ծաղկման հասավ հենց Ստեփանոս Օրբելյանի շրջանում, երբ նա 1287 թ. Կիլիկիայից Հայաստան վերադարձավ միտրոպոլիտական աստիճան ստացած և իր իշխանության տակ առավ Տաթևի ու Նորավանքի Աթոռները: Ինքը՝ Օրբելյանը, բնակվում էր Նորավանքում և հենց այստեղ էլ՝ 1297 թվականին ավարտել է իր «Պատմությունը»: Ստեփանոս Օրբելյանի նախաձեռնությամբ էր, որ Նորավանքի եպիսկոպոսարանին կցվեց Եղեգիսից հյուսիս-արևելք գտնվող բարձրադիր Արատեսի վանքը՝ որպես եպիսկոպոսների ամառային նստոց: Այս մասին Օրբելյանը պարզորոշ գրել է իր Սյունյաց նահանգի պատմության մեջ: Նա մասնավորապես ասում է. «Քանի որ Նորավանքի տեղը տոթ էր, և եպիսկոպոսներն ու սպասավորները ամառ ժամանակ չէին կարողա-

նում այնտեղ ապրել, որոշեցինք (օգտագործել) Արատեսի վանքը, որը Եղեգիսից վերև է: Վանքն իր բոլոր շինություններով և հոգեբաժին տրված կալվածքներով, գյուղն իր շրջակա բոլոր սահմաններով հանձնեցինք Սուրբ Նորավանքին, որ սրա միաբաններն այն սերնդե սերունդ տնօրինեն, վայելեն, բայց տեղը շեն և եկեղեցին լուսավոր պահելու համար ամենայն ջանադրությամբ պիտի հոգ տանեն, ինչպես մեր տան նկատմամբ է տարվում...»: Այնուհետև Քարկոփի նվիրատվության մասին նշելով ավելացնում է. «և այսուհետև մինչև հավիտյան նրանք պիտի լինեն Նորավանքի սուրբ եկեղեցու սեփականությունը: Այստեղի պաշտոնյաներն էլ ժառանգորդ դառնալով այդ վանքերը շեն և եկեղեցիները՝ լուսավոր պահելը չպիտի անտեսեն, այլ ամենայն ջանադրությամբ դրանց նկատմամբ հոգ պիտի տանեն, ինչպես սեփական տան նկատմամբ» *(Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 383)*:

Արատեսը Օրբելյանն իր պատմության մեջ հիշատակում է ևս երկու անգամ, նախ Վայոց ձորի, ապա և իր տիրապետության տակ գտնվող վանքերը թվարկելիս, մեկ անգամ էլ հիշատակում է վանքամերձ Արատենք գյուղը *(Ստեփանոս Օրբելյան, էջ 282, 375, 396)*:

Արատեսի վանքի՝ Նորավանքի եպիսկոպոսարանի ամառային նստոց դարձնելու Օրբելյանի որոշման մասին արձանագրված է նաև Արատեսում: Այստեղ միտրոպոլիտն ունի երկու արձանագրություն: Առաջինի թվականը եղծված է, սակայն բովանդակությունը միանգամայն հստակ է: Օրբելյանը գրում է. «...ծանեալ, զի բազում ժամանակաց ժառանգութիւն էր լեալ այս եկեղեցիս Նորավանից Սուրբ ուխտին, հաստատեցի և ես զԱրատէս, որ մեր սեփական հայրենիք էր՝ իր ամեն սահմանաւք, գեղով եւ հայրենիք հաստատ՝ ժառանգութիւն եւ հայրենիք սուրբ եւ գերափառ դամբարանին մեր Նորավանից» *(Դիվան հայ վիմագրության, պր. 3, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 125)*:

Երկրորդ արձանագրությունը նվիրատվական է՝ գրված 1301 թվականին: Այստեղ Օրբելյանը սահմանում է իր «սեփական վիճակ» հանդիսացող Գեղարքունյաց մի քանի գյուղերի պատկանելությունը Արատեսին, միաժամանակ, իր որոշումը խախտողներին սպառնալով, ավելացնում է. «Այլ վասն այս սահմանեցաք, որ տեղս մեր նստագահ է» *(Դիվան հայ վիմագրության, էջ 126)*:

Այսպիսով Ստեփանոս Օրբելյանի թողած թե՛ մատենագրական, թե՛ վիմագիր վկայությունները հաստատում են, որ հենց նրա տնօրինությամբ Արատեսը դարձել է Նորավանքի եպիսկոպոսարանի ամառային նստոց՝ «նստագահ», ինչպես ինքն է գրում արձանագրության մեջ: Այդ տեղի է ունեցել մինչև 1297 թվականը, որովհետև Օրբելյանն

այդ մասին նշում է իր պատմության մեջ, որի շարադրանքն ավարտել է այդ թվականին:

Արատեսում գրված ԺԴ դարի երկու ձեռագիր է հայտնի: Մեկն ընդօրինակել է Խաչատուր Երզնկացին 1303 թ., Ստեփանոս Օրբելյանի պատվերով, «...ընդ հովանեաւ սուրբ մենաստանիս՝ մականուն կոչեցեալ Արատես», իսկ մյուսը՝ Պողոս վարդապետը՝ 1310 թ.՝ «ի վանս, որ յորջորջի յԱրատես» *(ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 17, 66)*:

ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԸ՝ ՎԵՐԻՆ ՆՈՐԱՎԱՆՔԻ ՀՈՎԱՆԱՎՈՐ

Երկրորդ վանքը, որ անմիջականորեն առնչվել է Նորավանքի եպիսկոպոսարանին, Վերին Նորավանքն է: Այս վանքի տեղորոշումը դեռևս հստակ չէ: Թեև կատարվել են ենթադրություններ, սակայն այն նույնացվել է Շատիկի վանքի կամ Արատեսի հետ: Հիշյալ վերագրումները մեզ անհամոզիչ են թվում, որովհետև թվարկված վանքերը սկզբնաղբյուրներում ամենուրեք հիշվում են որպես առանձին միավորներ, և դրանք նույնացնելու որևէ ծանրակշիռ հիմք չկա: Նախ փորձենք պարզել Նորավանք-Վերին Նորավանք առնչությունները:

Քանի որ Վերին Նորավանքի տեղն անորոշ է, և ցավոք զրկված ենք նրա վիմագրական նյութից, ստիպված ենք ապավինել հիմնականում մատենագրական և մասնավորապես ձեռագրերի հիշատակարանների տեղեկություններին:

Ինչպես կարելի է ենթադրել Ստեփանոս Օրբելյանի վկայությունից, սկզբնապես այս վանքն էլ եպիսկոպոսանիստ Նորավանքի նման հենց Նորավանք է կոչվել: Պատմիչը, թվարկելով Վայոց ձորի վանքերը, գրում է. «...Նորավանքը, որը հետո դարձավ եպիսկոպոսարան, մյուս Նորավանքը, ճաղաց քարը...» *(Ստեփանոս Օրբելյան, էջ 282)*: Իմիջիայլոց գավառի վանքերի թվարկման վերջնամասում Օրբելյանը հիշատակում է նաև Արատեսի վանքը, որը փաստորեն բացառում է Վերին Նորավանքի ու Արատեսի նույնացումը (ավելացնենք, որ Արատեսի բազմաթիվ վիմագրերում և այստեղ գրված հիշատակարաններում վանքը այլ անունով չի կոչվում, այստեղ չեն հիշատակվում նաև Վերին Նորավանքի նշանավոր վարդապետները):

Այսպիսով Օրբելյանի ժամանակ Վերին Նորավանքն ավելի շատ հենց Նորավանք անունով էր հայտնի, դրա համար էլ նա այդպես է նշել վանքի անունը: Բայց հենց Օրբելյանի օրոք եպիսկոպոսանիստ վայրի հոչակն այնքան մեծացավ, որ հավանաբար հենց դրա պատճառով անհրաժեշտություն առաջացավ «մյուս» Նորավանքի անվանը լրացուցիչ որոշիչ ավելացնել: «Վերին» զուտ աշխարհագրական մակ-

դիրն էլ դարձավ այդ որոշիչը: Վերին Նորավանքը հավանորեն Նորավանքից ավելի բարձրադիր է:

«Վերին Նորավանք» տեղանունն առաջին անգամ հիշվում է 1302 թվականին մի ուշագրավ հիշատակարանում, ուր ասվում է այն մասին, թե Սյունյաց միտրոպոլիտ Հովհաննես Օրբելը եկել է Վերին Նորավանք, «առ վարդապետն Դաւիթ եւ Արքայ», որոնք «ի սատար սուրբ ուխտի» խնդրել են ժողովուրդ: Միտրոպոլիտը գրում է, որ տվել է չորս գյուղ՝ Անկեղի, Եղիան, Եղիկանց ձոր և Վաղցան «ի սեպհական ժողովուրդ եւ թեմ, որ զամենայն հաս եւ զիրաւունք սոքա սոցա տացին» *(ԺԴ, 8)*: Հրամանագրի բնույթ ունեցող այս գրությունն ավարտվում է նույն ոճով՝ «Գրեցաւ ի Թուականիս Հայոց ՉԾԱ (1302) առաջի Սուրբ Սիոնիս եւ վարթայպետիս Դաւթի: Հաստատ է գիրս կամաւն Աստուծոյ» *(ԺԴ, 8)*:

Ո՞վ է Վերին Նորավանքի Դավիթ վարդապետը, ում խնդրանքին սիրահոժար ընդառաջելով, Սյունյաց միտրոպոլիտը վանքին չորս գյուղ է հատկացնում՝ որպես «սեպհական ժողովուրդ եւ թեմ»: Այս հարցին պատասխանելուց առաջ պիտի մի փոքր անդրադարձ կատարենք հիշյալ ժամանակաշրջանում Վայոց ձորում տիրող վարչա-քաղաքական և ուսումնա-կրթական իրավիճակին: Խոսքը երկու իշխանական տների՝ Խաղբակյանների (Պռոշյաններ) ու նրանց տիրույթում հաստատված Գլաձորի համալսարանի և Օրբելյանների ու նրանց անմիջական հովանավորության տակ գտնվող Վերին Նորավանքի վարդապետարանի մասին է:

Ձնայած Ստեփանոս Օրբելյանի պատմության, ինչպես նաև Գլաձորում, Վերին Նորավանքում և Վայոց ձորի այլ վանքերում հիշյալ շրջանում գրված բազմաթիվ հիշատակարանների առկայությանը, այս երկու իշխանատների ու կրթարանների փոխհարաբերությունների հարցն այնքան էլ պարզորոշ չի ուրվագծվում և մնում են մի շարք անորոշ հանգամանքներ:

Վարչա-քաղաքական կացության առնչությամբ պետք է ասել, որ, Զաքարյանների կողմից Սյունիքի ազատագրումից ի վեր, Խաղբակյանների ու Օրբելյանների միջև առկա էր մրցակցությունը: Խաղբակյաններն անգամ փորձում են առանձին եպիսկոպոսական Աթոռ հիմնել: Պռոշ Խաղբակյան իշխանը Հովհաննես անունով հոգևորականին ուղարկում է Կոստանդին Բարձրբերդցու մոտ, որն այնտեղ եպիսկոպոս է ձեռնադրվում, հաստատվում Երնջակում և աշխատում առանձին թեմ ստեղծել: Սակայն Տարսայիճ Օրբելյանի կարգադրությամբ Նորավանքի առաջնորդ Սարգիս եպիսկոպոսն ու Տաթևից Հովհաննես եպիսկոպոսը մեկնում են Կիլիկիա և, 1267 թ. Հակոբ Ա Կլայեցի Կաթողիկոսից կարգադրություն ստանալով, վերադառնում ու լուծարում են ինքնակոչ Աթոռը:

Մեզ հետաքրքրող ժամանակամիջոցում Սյունյաց երկրամասի ընդհանուր տերը Օրբելյաններն էին, նրանց տոհմն էր տնօրինում նաև միտրոպոլիտական Աթոռը, իսկ Խաղբակյաններն իշխում էին Վայոց ձորի մի մասում, տարածքներ ունեին նաև այլ գավառներում, մասնավորապես՝ Կոտայքում: Երկու իշխանատների նստավայրերը գտնվում էին Վայոց ձորում, շատ մոտ. Օրբելյաններինը՝ Եղեգիսում, Խաղբակյաններինը՝ Սրկողունքում: Հայոց վարդապետարանի ուսուցչապետ Ներսես Մշեցին երբ ապահով կացարան էր փնտրում իր դպրոցի համար, դիմում է Խաղբակյաններին և, նրանց հավանությունն ստանալով, 1282 թ. Քաջբերունիքից փոխադրվում է Վայոց ձորի Աղբերց վանք: Այն շուտով ստանում է երկրորդ անուն՝ Գլաձոր, որով և հայտնի է առավելաբար: Քանի որ Ներսես Մշեցու (մահացել է 1284 թ.) գլխավորած դպրոցն էր Հայոց վարդապետարանը՝ բարձրագույն հոգևոր դպրոցը, հենց այստեղ են ուսանում նաև Օրբելյան տան հոգևորական իշխանազունները, որոնցից առաջինը հենց պատմիչ Ստեփանոս Օրբելյանն էր: Նա քահանա էր ձեռնադրվել Նորավանքում 1280 թ. իսկ 1282-ից աշակերտում է Ներսես Մշեցուն՝ «ի կրթարանի աստուածեղէն տառից»: Օրբելյանն իր պատմության մեջ Գլաձորին միայն այս երեք բառն է հատկացրել, այն դեպքում երբ համալսարանի շրջանավարտներն այն սովորաբար հորջորջում են «երկրորդ Աթենք» և փառաբանում այլ մեծարական խոսքերով:

Այսպիսով ԺԳ դարի վերջին Խաղբակյաններն էին հովանավորում Գլաձորը, և Օրբելյանները պիտի ունենային մի հակակշիռ, որն էլ, մեր կարծիքով, դարձավ Վերին Նորավանքն իր դպրոցով ու գրչատնով: Սակայն չպետք է կարծել, թե այս մրցակցությունն ընթանում էր բացահայտ պայքարի ձևերով: Ընդհակառակը, Գլաձորն ու Վերին Նորավանքը գործակցել են, սաներից ոմանք սովորել են և՛ Գլաձորում, և՛ Վերին Նորավանքում:

Որոշ ժամանակ անց Օրբելյաններն ստանձնեցին նաև Գլաձորի հովանավորությունը: Իսկ Եսայի Նչեցու մահից հետո, 1337 թ., նոր ռաբունապետ Տիրատուր Կիլիկեցին համալսարանը տեղափոխում է Հերմոնի վանք, որը Օրբելյանների տիրույթում էր: Սակայն թե՛ դրանից առաջ, թե՛ հետո Վերին Նորավանքը մնաց որպես Սյունյաց եպիսկոպոսարանի և Օրբելյանների հովանավորությունը վայելող կենտրոն: Այն փաստորեն հանդիսացել է Նորավանքի եպիսկոպոսարանի կրթա-մշակութային կենտրոնն իր դպրոցով ու գրչատնով:

ԴԱՎԻԹ ՎԱՐԴԱՊԵՏԸ՝ ՎԵՐԻՆ ՆՈՐԱՎԱՆՔԻ ԱՌԱՋՆՈՐԴ

Այժմ վերադառնանք Դավիթ վարդապետին, որն, ինչպես տեսանք, 1302 թ. դիմում է Սյունյաց միտրոպոլիտ Հովհաննես

Օրբելյան և Վերին Նորավանքի համար, որպես «սեպհական ժողովուրդ եւ թեմ», չորս գյուղ ստանում: Հավանորեն հենց նա է 1295 թ. Գրիգոր Անավարզեցուն ուղղված Ստեփանոս Օրբելյանի կազմած նամակի տակ ստորագրող նշանավոր վարդապետը: Գլաձորի ռաբունապետ Եսայի Նչեցին և Դավիթ վարդապետը ստորագրել են հաջորդաբար՝ հետևյալ ձևակերպումներով.

«Ես՝ Եսայի, կրսեր բանասիրաց եւ յետին վարժապետ, իմով աշակերտօքս համախոհ եմ եւ միաբան եմ այսմ գրոյ...

Ես՝ Դաւիթ, նուաստոգի քարոզ բանի եւ վարդապետ Հայաստանս եկեղեցւոյ, համախոհ եւ միաբան եմ այսմ ուղղադաւան թղթոյս որ ունի ճշմարտիւ զսուրբ հարցն աւանդութիւնն...» *(Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Տփղիս, 1910, էջ 462):*

Բնական է, որ Եսային ու Դավիթն այստեղ նույն դպրոցը չեն ներկայացնում, այլ առանձին հաստատություններ, ընդ որում Դավիթն անվանվում է «վարդապետ Հայաստանի եկեղեցու»:

1307 թ., Սսի ժողովից հետո, այունեցիները մի թուղթ էլ ուղարկել են Կոստանդին Կեսարացի Կաթողիկոսին, որի տակ ստորագրել են. «...եպիսկոպոսքս Սիւնեաց՝ Տէր Յովհաննէս եւ Տէր Ստեփանոս եւ վարդապետքս Դաւիթ եւ Եսայի այլ ամենայն վարդապետօքս եւ վանօրէօքս» *(Հ. Տաշեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Վենետիկ, 1895, էջ 180):*

Ս. Արևշատյանը և Ա. Մաթևոսյանը Գլաձորին նվիրված գրքի «Համալսարանի սաները և նրանց դպրոցները» բաժնում գրում են. «ՎԵՐԻՆ ՆՈՐԱՎԱՆՔԻ ԴՊՐՈՑ, Դավիթ ռաբունապետը Օրբելյանների եպիսկոպոսանիստ Նորավանքի առաջնորդն ու տեղի դպրոցի ռաբունապետն էր: Առաջին անգամ հիշվում է Անավարզեցու դեմ համախոսականի տակ ստորագրողների մեջ. «Ես՝ Դաւիթ նուաստ ոգի քարոզ բանի եւ վարդապետ Հայաստանա եկեղեցւոյ...» ձևով: Որպես ռաբունապետ աշխատում էր նաև Գլաձորում, բայց Նորավանքի ռաբունիների կողմից հիշվում էր Նչեցուց առաջ, կամ ավելի պատվավոր ածական-կոչումներով. այսպես՝ «ի վարժապետութիւն մեծիս Եսայեայ եւ եռամեծին Դաւթայ» կամ «քաջ հռետորաց Հայոց... Դաւթի եւ Եսայեայ»: Դավիթը, որպես Օրբելյանների հոգևոր կենտրոնի առաջնորդ ու ռաբունապետ և Գլաձորի ռաբունապետ, «եռամեծ» կոչվելու իրավունք ուներ: Մահացել է 1329 թվականից առաջ և թաղվել Նորավանքում: Նրան փոխարինում է Գլաձորի սան Կյուրիոնը» *(Ս. Արևշատյան, Ա. Մաթևոսյան, Գլաձորի համալսարանը միջնադարյան Հայաստանի լուսավորության կենտրոն, Երևան, 1984, էջ 42):* Այստեղ նշված Նորավանքը պետք է հասկանալ որպես Վերին Նորավանք, որովհետև Դավիթն այստեղ է առաջնորդ եղել և մահից հետո այստեղ էլ թաղվել է, ինչպես վկայում են հիշատակարանները:

Ժամանակագրական կարգով ներկայացնենք Վերին Նորավանքում գրված ձեռագրերի հիշատակարանները, ինչպես և Գլաձորի այն հիշատակարանները, որոնցում հիշվում է Դավիթը:

1312 թ. Բեներ կրոնավորը Ավետարան է ընդօրինակել «ի գաւառիս յԵղեգեաց, ի վանս, որ Վերի Նորավանս կոչի, ընդ հովանեաւ Սուրբ Սիոնիս եւ Մաւրս Լուսոյ, առաջնորդութեան սուրբ ռաբունապետիս Դաւթի եւ եղբաւրորդոյ իւր Կարապետի» (ԺԴ, 90):

Նույն թվականին Դավիթն ստացել է Ներսես Լամբրոնացու Սաղմոսաց մեկնությունը՝ «Զստացող աստուածապատում երգարանիս զԴաւիթ ռաբունապետն յիշեսջիք» (ԺԴ, 85): Հիշատակարանում նշվում է Տարսայիճ Օրբելյանի դստեր՝ Ասփայի մահը:

1318 թ. Մատթեն քահանայի գրած հիշատակարանը հատվածաբար է պահպանվել, բայց այնտեղ կարդացվում է տեղանունն ու ռաբունապետի անունը. «... ի տեղիս... Նորավանս, ընդ հովանեաւ...: Երջանիկ ռաբունապետ Դաւթի» (ԺԴ, 150):

Փաստորեն Դավիթը Վերին Նորավանքում հիշվում է 1302, 1312, 1318 թվականներին: Իսկ ինչպե՞ս է նա հիշատակվում Գլաձորում:

1309 թ. Տիրատուր Կիլիկեցին գրում է. «Գրեցաւ սուրբ Աւետարանս... ի դպրատունս, որ կոչի Գալիձոր, ի վարժապետութեան մեծիս Եսայեայ եւ եռամեծին Դաւթայ...» (ԺԴ, 60): Հարկ է նշել, որ այդ թվականից առաջ և հետո Գլաձորում գրված տասնյակ հիշատակարաններում Դավթի անունը չի հիշվում, իսկ այստեղ միանգամից կոչվում է «եռամեծ», «մեծ» Եսայի ռաբունապետի կողքին:

1321 թ. Գլաձորում Կյուրիոն գրչի գրած հիշատակարանում նախ նշվում են Կիլիկիայում գահակալող թագավորն ու կաթողիկոսը, ապա Օրբելյան տնից սերող Սյունյաց զույգ եպիսկոպոսները, որից հետո Բուրթել Օրբելյանը և Ամիր Հասան Խաղբակյանը և վերջապես՝ «ի վարժապետութեան սուրբ եւ բազմերջանիկ հոետորաց Հայոց՝ երկուց ամոլաց ճշմարիտ հաւատոյ մերոց՝ Դաւթի եւ Եսայեա, ի հոչակաւոր եւ սուրբ մենաստան համալսարանիս Գլաձորոյ, ընդ հովանեաւ Սուրբ Ստեփանոսի եւ աստուածընկալ վերասացեալ դպրապետացս» (ԺԴ, 166):

Նախորդ հիշատակարանի պես, այստեղ ևս զարմանալի է թվում Դավթի գերակա դիրքը, այն դեպքում, երբ նախորդ ու հետագա տարիներին Գլաձորում գրված տասնյակ հիշատակարաններում նրա անունն ընդհանրապես չի նշվում: Լ. Խաչերյանը Դավթի մասին գրում է, թե նա հանդիսացել է «համալսարանի ռեկտոր Եսայի Նչեցուց հետո երկրորդ դեմքը» (Լ. Խաչերյան, Գլաձորի համալսարանը, Երևան, 1973, էջ 150): Բայց այդ որտե՞ղ է երկրորդ դեմքի անունն առաջին դեմքի անունից առաջ գրվում, կամ ինչո՞ւ ենք Դավթի անվան

Գլաձորում հանդիպում ընդամենը երկու անգամ՝ 1309 և 1321 թվականներին:

Մեր կարծիքով պատճառն այն է, որ Դավիթը մշտապես Գլաձորում չի եղել: Նա գլխավորել է Սյունյաց եպիսկոպոսարանի և Օրբելյանների հովանավորած Վերին Նորավանքի դպրոցը և ժամանակ առ ժամանակ այցելել Գլաձոր, ուր նրան ընդունել են մեծարանքով, ըստ պատշաճի, և վերը նշված երկու հիշատակարաններն էլ դրա վկայությունն են:

Հարկ է նշել, որ Գլաձորը վայելում էր նաև Օրբելյանների հովանավորությունը: Դրա վառ վկայությունն է 1323 թվականին, հենց Եսայի Նչեցու ձեռքով, Ներսես Մշեցու հիշատակին ստացած Ավետարանում գրված հիշատակարանը, ուր, գովերգելով Օրբելյան Բուրթել իշխանին, նրա կնոջն ու որդիներին, ավելացնում է. «ի ձեռն որոց հոլով շինութիւն և խաղաղութիւն գործեցաւ մեզ եւ ամենայն եկեղեցաց Քրիստոսի... եւ մեք մեր աշակերտաւք բազում եւ անթիւ գութս բարեաց գտաք ի սոցանէ, որ զաւտարութիւնս մեր ժողովեցին, եւ ընկալան զմեզ ոչ իբրև զաւտար, այլ իբրեւ յինքեանց հարազատ ծնեալ մանկունս, գթով եւ սիրով զմեր ստահակութիւնս ընկալան» *(ԺԴ, 182-183)*: Նչեցին այնուհետև հիշատակում է Սյունյաց երկու եպիսկոպոսներին՝ Հովհաննես Օրբելին և Ստեփանոս Տարսայիճին, ակնարկում, որ ուսանել են Գլաձորում և երախտագիտությամբ նշում նրանց կողմից ստացած աջակցությունը *(ԺԴ, 183, տե՛ս նաև Մխիթար Երզնկացու 1314 թ. հիշատակարանը՝ ԺԴ, 104)*:

Այսպիսով, Դավիթը, լինելով Օրբելյանների դպրոցի ռաբունապետը, դասախոսելու կամ այլ առիթով Գլաձոր այցելելու ժամանակ առանձնակի պատվով է ընդունվել այստեղ, և հնարավոր է, որ նման այցելությունների միջոցին, թերևս հենց Եսայի Նչեցու ցուցումով, Գլաձորի գրչատանն ավարտված մատյանների հիշատակարաններում Դավթի անունը նշվել է հատուկ մեծարանքով:

Դավիթ վարդապետի մահվան ստույգ թվականը հայտնի չէ, բայց գերեզմանը Վերին Նորավանքում է եղել: Դավթին հաջորդել է Գլաձորի շրջանավարտ Կյուրիոնը: Նրա պատվերով 1329 թ. Ստեփանոս գրչի ձեռքով Վերին Նորավանքում ընդօրինակված Մեկնությունների գրքում պահպանված հիշատակարանում Կյուրիոնը կոչվում է նաև «սպասաւոր սուրբ գերեզմանի ռաբունապետին Դաւթի»: Հիշատակարանի առավել տեղեկաշատ հատվածը հետևյալն է. «Հրամանաւ եւ արդեամբք սուրբ ռաբունապետին Կիրիոնի, առաջնորդի մեծ մենաստանիս Վերին Նորավանք կոչեցելոյ, ընդ հովանեաւ Մօրս Լուսոյ եւ Սրբոյ Սիոնի... արեւելեաց, ի գաւառիս որ կոչի Ձոր Վայոյ ի տերութեան տեղոյս եւ գաւառիս մեծահաւատ իշխանաց իշխանի պարոն Պուրթելի... եւ ի դիտապետութեան սուրբ եւ

արհիական գլխոյ տէր Ստեփանոսի, ի վարժապետութեան տանս արեւելեաց մեծարանաշնորհ հռետորի Եսաեայ, հօր եւ ուսուցչի վերասացեալ առնս Աստծոյ սուրբ ռաբունապետիս Կիրիոնի, սպասաւորի սուրբ գերեզմանի ռաբունապետին Դաւթի» *(Ն. Պողարեան, Մայր Ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Բ, Երուսաղեմ, 1967, էջ 316)*:

ՁԵՌԱԳՐԵՐ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ ՎԵՐԻՆ ՆՈՐԱՎԱՔԻՑ

Կյուրիոնը 1339 թ. ձեռագիր է գրել «ի մենաստանիս Վերին Նորավանս կոչեցելոյ, ընդ հովանեաւ Մորս Լուսոյ եւ Սուրբ Սիոնիս» *(ԺԴ, 257)*: 1341 թ. Վերին Նորավանքում Հովհաննու Ավետարանի մեկնություն է ընդօրինակել Ղուկաս քահանան. «Ղուկաս սոսկ անուամբ քահանայ եւ աշակերտ բանի ի մենաստանս Նորավանս կոչեցեալ, ընդ հովանեաւ Սուրբ Սիոնի, առ ոտն սմին (Կիւրիոն) երջանիկ ռաբունապետի» *(Սմբատ Տեր-Ավետիսյան, Ձեռագիրք Նախավկայի վանաց Դարաշամբի, թիվ 115)*:

Վերին Նորավանքի մասին հետաքրքրական տեղեկություն է պահպանվել 1360 թ. Երուսաղեմում գրված մի «Մաշտոցի» հիշատակարանում: Այստեղ պատմվում է այն մասին, որ Վերին Նորավանքում Կյուրիոն ռաբունապետի մոտ կրթված Սարգիս վարդապետը Սյունյաց Ստեփանոս Սուլթանշահ արքեպիսկոպոսի ընկերակցությամբ (Ստեփանոս Սուլթանշահի անվան ամենավաղ հիշատակությունն է) եկել է Կիլիկիա, այստեղ Մեսրոպ Ա (1359–1372) Կաթողիկոսի ձեռամբ եպիսկոպոս ձեռնադրվել, ապա ուխտի մեկնել Երուսաղեմ, ուր և ստացել է այդ մատյանը: Մեզ առավել հետաքրքրողը Վերին Նորավանքի հիշատակման ձևն է. «...տէր Սարգիս, սնեալ եւ վարժեալ յարեւելս ի մայրն իմաստից եւ յերկրորդ յԱթէն ի Վայոյ ձորն, ի հռչակաւոր եւ յաստուածաբնակ վանսն ի Սուրբ Սիոն Վերին Նորավանս, յառաջնորդութեանն մեծին ռաբունոյն Կիւրիոնին» *(Ն. Պողարեան, Մայր Ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Է, Երուսաղեմ, 1974, էջ 218)*: Ինչպես հայտնի է, «մայր իմաստից, երկրորդ Աթենք» է կոչվել Գլաձորը: Սարգսի ուսումնառության վանքերը հիշատակվում են հոգնակի թվով «վանսն», որից կարող ենք եզրակացնել, թե նա ուսանել է ե՛ւ Գլաձորում, ե՛ւ Վերին Նորավանքում: Բայց քանի որ միայն Վերին Նորավանքի ու նրա առաջնորդի անունն է տալիս, հավանական է, որ հենց այստեղ է վարդապետական ձեռնադրություն ստացել: Այս հիշատակարանից հետո Կյուրիոնի անվանն այլևս չենք հանդիպում:

Վերին Նորավանքից հայտնի հաջորդ մի քանի ձեռագրերը ԺԵ դարից են: Համառոտակի թվարկենք.

1456 թ. երեց Մաթեոս գրիչը Տոնական է ընդօրինակել «ի Վերի Նորավանս» (Մատենադարան, թիվ 993): Մեծ տոհմի զավակ էր Մաթեոսը, հիշում է հորը՝ «ըզմեծն Սուլդան», հորեղբորը՝ «զիկիթ աղայն», մորը՝ «զպարոն Թուխթէնի», որոնց անունների հիշատակման ձևից երևում է գրչի պատկանելությունը բարձր դասին: Բացի այդ, նա հիշատակում է իր հոգևոր եղբայրներին՝ Իգնատիոս վանականին և «բանիբուն փիլիսոփա և անհաս ընկարող» Եսայուն *(ԺԵ դարի հիշատակարաններ, մասն Բ, Երևան, 1958, էջ 65)*: 1473 թ. Մաթեոսը «ութսունամեայ գոլով» մի Գանձարան է ընդօրինակել Եղեգիսում՝ «Գրեցաւ գիրքս յԵղեգիս... ի վայելումն հարազատացն իմ վանականաց կրօնաւորաց՝ Իգնատիոսին, Եսայուն Նաղաշի...» *(ԺԵ, Բ, 347)*:

1470 թ. Օհաննես քահանան հիշատակարան է գրել «ի վանս որ կոչի Վերի Նորավանս», նշում է «Մաշտոցի» գրիչ Հովհաննեսին, որը գրել է «ի վանս որ Մեղուս կոչի, ընդ հովանեաւ Լուսոյ Մայր Սուրբ Աստուածածնին, առաջնորդութեան տեառն Արիստակէսի» *(ԺԵ, Բ, 64-66)*:

1476 թ. Պողոս վարդապետն իր ընդօրինակած Ավետարանում հետևյալ տեղեկաշատ հիշատակարանն է թողել. «Եղեւ գրչագրութիւն սորայ ի գաւառիս Վայոց ձոր, որ է Եղեգեաց, սուրբ եւ ի հռչակաւոր մենաստանիս Վերի Նորավանս կոչեցեալ... որ ճշմարիտ հար եւ նման է վերին Երուսաղէմին, ընդ հովանեաւ Սուրբ Սիովնի, որ մայր ամենայն եկեղեցեաց եւ Լուսոյ Մօր Սուրբ Աստուածածնին, եւ սուրբ նշանացս, բազմահոյլ եւ բազմաժողով եւ սուրբ վարդապետաց նահատակաց Դաւիթ եւ Առաքալ...» *(ԺԵ, Բ, 399)*: Վերջին հատվածը համեմատելի է 1302 թ. հիշատակարանի «առ վարդապետն Դաւիթ եւ Արքայ» ձևակերպումին (որոնց մոտ էր եկել Հովհաննես Օրբելը): Արդյո՞ք Դավթի գործընկերը, ում անունն այլ աղբյուրներում չի հանդիպում, այս հիշատակարաններից մեկում չի շփոթված, մանավանդ, որ «Արքան» հոգևորականների շրջանում եզակի անուն է: Կամ եթե Առաքելն ու Արքան նույն մարդն է, արդյո՞ք երկրորդ անունը վարդապետի մականունը չէ: Արքա անվան «Առքայ» ձևն է պահպանվել Աշտարակի 1280 թվականի մի արձանագրության մեջ *(Ս. Սաղումյան, Աշտարակ, Երևան, 1998, էջ 181)*:

Պողոս վարդապետը հիշատակարանի շարունակության մեջ նշում է, որ գրել է «Առ ոտս քաջ եւ արի ռաբունապետիս Դաւիթ վերակոչելոյ՝ խիստ ճգնազգեստ եւ առաքինի Ճ (100) – ամեա ճգնելով, եւ ուսուցչին իմոյ եւ հոգեւոր զիս անարժանս վերստին ծնաւղի Սարգիս արի եւ քաջ ռաբունապետին նայ եւ առաջնորդի սուրբ ուխտիս, որ

բազում հոգաբարձութեամբ խնամող է վանիցս Շատիկ միայնակեցի» *(ԺԵ, Բ, 399)*: Փաստորեն Վերին Նորավանքի առաջնորդը եղել է նաև Շատիկ վանքի հոգաբարձուն:

1484 թ. Գրիգոր աբեղան Հովհաննես աբեղայի պատվերով Ավետարան է ընդօրինակել «ի երկնահանգէտ եւ մեծահռչակ սուրբ ուխտիս Վերի Նորավանս» *(ԺԵ դարի հիշատակարաններ, կազմեց՝ Լ. Խաչիկյան, մասն Գ, Երևան, 1967, էջ 57)*:

1490 թ. Աբրահամ գրիչը Անանիա աբեղայի պատվերով ընդօրինակել է Շարակնոց, «ի վանս որ կոչի Վերի Նորավանս, ի սուրբ մենաստանիս, ի դուրս Սուրբ Սիովնիս եւ Սուրբ Աստուածածնիս, եւ Սուրբ Գրիգորիս եւ այլ սրբութեանց... եւ դամբարանաց սուրբ վարժապետաց... եւ յարհեպիսկոպոսութեան մերոյս նահանգի տէր Եղիշէի՝ յազգէ Բուրթէլանց...» *(ԺԵ, Գ, 147)*:

1495 թ. Գրիգոր աբեղան «աստուածաբան և քաջ ոաբունապետ» Աբրահամի պատվերով Ավետարան է ընդօրինակել (Մատենադարան, թիվ 5303) «ի երկրիս Վայոյ ձորոյ, ի գաւառս Եղեգիս եւ սուրբ ուխտիս որ կոչի Վերի Նորավանս, ընդ հովանեաւ Սուրբ Սիովնիս եւ Սուրբ Աստուածածնիս...» *(ԺԵ, Գ, 214)*:

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՈՒՂԵՆՇՈՒՄ ՎԵՐԻՆ ՆՈՐԱՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Ժամանակին Գլաձորն ու Վերին Նորավանքը գրեթե համազոր ուսումնական կենտրոններ են եղել, բայց Աղբերց վանք Գլաձորը շատ շուտ է հեռացել պատմական ասպարեզից: Ճիշտ է, համալսարանի գոյությունը շարունակվել է (Հերմոն, Որոտնավանք, Տաթև), սակայն բուն վանքը անշքացել է և Եսայի Նչեցուց հետո, փաստորեն, այլևս չի հիշատակվում: Այլ է Վերին Նորավանքի պարագան, ուր, ինչպես տեսանք, բազմաթիվ մատյաններ են գրվել նաև ավելի ուշ շրջանում: Սակայն Վերին Նորավանքն էլ տեղորոշման հարցում առայժմ Աղբերց վանքի բախտակիցն է: Այդ հարցը կարող է լուծվել Վայոց ձորի համեմատաբար քիչ հետազոտված վանքերի հետագա ուսումնասիրությամբ:

Իսկ մինչ այդ, վկայաբերենք Մոմիկի մի արժեքավոր հիշատակարանի պարունակած տեղեկությունները, որոնք գուցե օգտակար լինեն Վերին Նորավանքը որոնող մասնագետներին:

1331 թ. հիշատակարանում Մոմիկը պատմում է, որ Հովհաննես Օրբելու պատվերով եպիսկոպոսանիստ Նորավանքում՝ «ի հրեշտակերամ մենաստանիս Նորավանից, ի դամբարանի մեծ եւ պատուաւոր իշխանացն Սմբատայ եւ Տարսայիճին», 1307 թ. սկսել է մի

Ավետարանի գրչություն, բայց չի կարողացել ավարտել տեսողության կորստի պատճառով: Գործն ավարտել են Մոմիկի գործընկերները՝ «Յոհանէս գրիչ զթերին ելից. եւ Թորոս՝ զոսկենկարսն»: Ձեռագիրը գրվել է «յաղագս փրկութեան հոգւոյ եւ մարմնոյ եւ յարեւշատութիւն եւ պահպանութիւն մեծ եւ քաջազաւր իշխանաց իշխանին Բիւրթէլին»: Մոմիկի հիշատակարանում փառաբանվում են նաև Բուրթելի կինը՝ «արքայաշուք դշխոյափառն» Վախախը, որդիներ Բեշքենն ու Իվանեն: Որոշ ժամանակ անց Մոմիկի տեսողությունը վերականգնվում է, և նոր եպիսկոպոս Ստեփանոս Տարսայիճը նրան հանձնարարում է գրել ձեռագրի հիշատակարանը, միաժամանակ մատյանը կազմել է տալիս: Հենց կազմելու վայրի մասին հիշատակության մեջ է, որ նշվում է «մյուս» Նորավանքը, միաժամանակ հայտնվում է այստեղ Բուրթելի կառուցած նորաշեն եկեղեցու մասին: Մոմիկը գրում է. «Յուսովն որ առ Յիսուս զկնի սակաւ ամաց լոյս աչաց իմոց դարձաւ առ իս ի թուիս ՃՁ (1331), եւ զյիշատակարանս արարի եւ գրեցի հրամանաւ տէր Տարսայիճին մականուն, տէր Ստեփանոսի որդւոյ Ջալալին: Որ հրամանաւ եւ արդեամբք մեծ պարոնին Բիւրթէլին յայսմ ամի զարդարեաց զԱւետարանս ոսկով եւ արծաթով ի մայրաքաղաքիս յԵղեգիս՝ ի Նորավանս, զոր իւրով ի նոր շինեալ եկեղեցի կատարեաց՝ յանուն սրբուհւոյ Աստուածածնին եւ սրբոյն Նիկողայոսի եւ Քրիստափորոյ սրբոյ» *(Հ. Քիւրտեան, Դարձեալ Թորոս Տարոնացի, «Բազմավէպ», 1947, 9-10, էջ 216-217)*:

Այստեղ հիշված Նորավանքը երբեմն նույնացվել է եպիսկոպոսանիստ Նորավանքի, իսկ Ս. Աստվածածինը՝ Բուրթելաշեն դամբարան եկեղեցու հետ, որն ընդունելի չէ, թեկուզ միայն այն պատճառով, որ այդ վանքը շատ հեռու է Եղեգիսից (Բուրթելաշենը կառուցվել է 1339-ին և այլն): Մոմիկը գտնվում էր եպիսկոպոսանիստ Նորավանքում, այստեղ էլ գրել է հիշատակարանը, իսկ ձեռագիրը ոսկով և արծաթով զարդարվել, այսինքն՝ կազմվել է այլ տեղում «ի մայրաքաղաքիս յԵղեգիս՝ ի Նորավանս»: Այստեղ կարող է երկու ենթադրություն լինել. կա՛մ խոսքը Վերին Նորավանքի մասին է, կա՛մ Մոմիկը «Նորավանք» ասելով նկատի ունի նոր կառուցված վանք: Բայց առաջին տարբերակն ավելի հավանական է թվում, որովհետև, ինչպես ստորև կտեսնենք, այլ աղբյուրների վկայություններ ևս հավաստում են Վերին Նորավանքի՝ Եղեգիս քաղաքին շատ մոտ գտնվելը: Բացի այդ, ձեռագիրը կազմելու չէին ուղարկի նորաշեն մի եկեղեցի, այլ այնպիսի տեղ, ուր կար մասնագիտացած գրչատուն: Ինչ վերաբերում է «Վերին» բառի բացակայությանը, ապա, ինչպես տեսանք, Մոմիկի ավագ ժամանակակիցը՝ Ստեփանոս Օրբելյանը, վանքը կոչում է «մյուս» Նորավանք:

Շատ կարևոր է Եղեգիսի Նորավանքում, Բուրթելի հանձնարարությամբ, Ստեփանոս Տարսայիճի 1331-ին ավարտած Նորաշեն եկեղեցու մասին վկայությունը: Մեր կարծիքով այն կարող է նույնանալ, այսպես կոչված, «Զորաց» տաճարի հետ: Այն գտնվում է Եղեգիսի հյուսիս-արևելյան ծայրամասում, բարձրադիր ու գեղատեսիլ վայրում, Ս. Աստվածածին անունն է կրում և արևելյան պատին ունի երեք արձանագրություն: Կենտրոնական լուսամուտի շուրջ գրված է. «**Տէր Աստուած Յիսուս Քրիստոս աւգնէ Բիրթելին, Բէշքէին եւ Իվանէի**» *(Դիվան հայ վիմագրության, էջ 108)*: Պատի խորշերի կամարաձև կիսաշրջաններին ևս արձանագրություններ կան: Մեկում ասվում է՝ «Ես Տէր Ստեփանոս, որդի Ջալալին, թոռն մեծի Տարսաիճին հիմնարկեալ շինեցի եկեղեցիս յանուն սրբուհոյ Աստուածածնայ...», մյուս արձանագրությունը հողմահարված է, ընթեռնելի է միայն այսքանը՝ «...յիշատակի եւ նվիրանի ուղերձ մեծ Էլիկումի, Բիրթել անուն քաջ...» *(Դիվան հայ վիմագրության, էջ 108)*: Վիմագրական այս տվյալները միանգամայն համահունչ են Մոմիկի հիշատակարանի տեղեկություններին, ուստի կարող ենք ասել, որ հիշատակագրի խոսքը հենց այս եկեղեցու մասին է: Ինչ վերաբերում է եկեղեցու անվանը, ապա Մոմիկի նշածը՝ «եկեղեցի կատարեաց՝ յանուն սրբուհւոյ Աստուածածնին եւ սրբոյն Նիկողայոսի եւ Քրիստափորոյ սրբոյ», ամենայն հավանականությամբ վերաբերում է եռախորան այս եկեղեցու խորաններին. կենտրոնականն ու գլխավորը կոչվել է Ս. Աստվածածին, իսկ կողայինները՝ Ս. Նիկողայոս և Ս. Քրիստափոր: Եկեղեցիների խորանների առանձին անուն ունենալը սովորական երևույթ է եղել, իսկ որ Բուրթելի միջոցով Ստեփանոս Տարսայիճի կառուցածը հենց մեկ եկեղեցի էր, երևում է նույն հիշատակարանից՝ «ի նոր շինեալ եկեղեցի կատարեաց»:

Այսպիսով, կարծում ենք, որ Մոմիկի նշած Նորավանքը Եղեգիսի ծայրամասում գտնվող «Զորաց» եկեղեցու մոտերքում է, ուր և 1331 թ. շքեղորեն կազմվել է նրա սկսած, Հովհաննես գրչի ու Թորոս Տարոնացու ավարտած ձեռագիրը: Կազմարարության տեղի ընտրությունը պատահական չէր, բարձրարվեստ, ոսկեզօծ կազմեր պատրաստվում էին խոշոր գրչատներում, իսկ Վերին Նորավանքի գրչատունը հենց այդպիսին էր:

Վերին Նորավանքի ու Եղեգիսի մերձավորությունն է ակնարկվում Մաթեոս գրչի վերը նշված 1456 և 1473 թթ. հիշատակարաններում, ինչպես և 1658 թ. մի հիշատակարում, ուր ասվում է, որ ձեռագիրը նորոգվել է «ի յերկիրս Վայոց ձորոյ, ի գեղաքաղաքիս յԵղեգիս, ի նահանգիս Շատիկոյ, Նորավանից սուրբ անապատիս» *(Վ. Հակոբյան, ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ, Երևան, 1984, էջ 819)*:

Վերին Նորավանքը բարձրահայաց ու գեղեցիկ դիրք է ունեցել, ինչպես կարելի է ենթադրել Պողոս վարդապետի 1476 թ. հիշատակարանի բնութագրումից՝ «Վերի Նորավանս... որ ճշմարիտ հար եւ նման է վերին Երուսաղէմին»:

ԵՊԻՍԿՈՊՈՍԱՆԻՍՏ ՆՈՐԱՎԱՆՔԸ ՆԱԵՎ «ՃԳՆՈՂԱԿԱՆ ՀԱՐԿ»

Նորավանքը, որպես եպիսկոպոսանիստ կենտրոն, անկասկած ունեցել է հարուստ մատենադարան, դիվան, գրչատուն: Վանքի առաջնորդներից շատերը գիտական ու մշակութային հակումներ ունեցող, հաճախ՝ ժամանակի ամենաուսյալ մարդիկ էին, ինչպես, օրինակ, Ստեփանոս Օրբելյանը և նրան հաջորդած՝ Գլաձորի շրջանավարտներ Հովհաննես Օրբելն ու Ստեփանոս Տարսայիճը: Սակայն Նորավանքում գրված և մեր օրերը հասած ձեռագրերը փոքրաթիվ են (հայտնի են Նորավանքում գրված ստույգ տեղորոշված երեք ձեռագրեր՝ Մոմիկի ընդօրինակած 1292 թ. Ավետարանը, Մատենադարան, թիվ 2848, նույն գրչի սկսած 1307 թ. Ավետարանը, որ հետո կազմվել է Վերին Նորավանքում, և 1451 թ. ընդօրինակված մի «Մաշտոց», Մատենադարան, թիվ 6950): Սակայն, ինչպես վերը նշվեց, Նորավանքի եպիսկոպոսարանն այն առանձնահատկությունն ուներ, որ անմիջականորեն ընդգրկում էր ևս երկու վանքեր, Արատեսը՝ որպես ամառային նստավայր՝ «նստագահ», և Վերին Նորավանքը՝ որտեղ եղել է Նորավանքի եպիսկոպոսարանի դպրոցն ու գրչատունը:

Այնուամենայնիվ, բացի եկեղեցական վարչական կենտրոն լինելուց, Նորավանքին նաև մեկ այլ դեր էր վերապահված:

1414-ին Գրիգոր կրոնավորը Գրիգոր Տաթևացու Հարցմանց գրքի ընդօրինակությունը սկսել է Հերմոնի վանքում, որոշ ժամանակ եղել Նորավանքում, ապա գործն ավարտել Եղվարդում. «եղեւ սկիզբն... ի վանս Հերմոնի, առ ոտս մեծ ռաբունոյն Յովաննէս հռետորի եւ միջայմուխ եղեալ ի ճգնողական յարկին Նորայվանս եւ աւարտ գրչութեան սորա ի... յԵղիվարդ» *(Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, Երևան, 1955, էջ 163)*: Հետաքրքիր է, որ Նորավանքն այստեղ անվանվում է «ճգնողական հարկ»: 1486 թ. Վերին Նորավանեցի գրիչ Մաթեոսի որդիներ Իգնատիոսն ու Ստեփանոսը իրենց հոր Գանձարանը նվիրել են Եղիշե արքեպիսկոպոսին՝ այն Նորավանքում պահելու համար: Հիշատակարանում գրում են. «տուաք զմեր հօր՝ տէր Մատթէոսի ձեռագրած Գանձատետրս ի ձեռն տէր Եղիշայ արհիեպիսկոպոսին, որ դնէ ի սուրբ ուխտն ի Նորավանս, անջինջ յիշատակ մեզ... եւ նա խոստացաւ

ի ձեռն խարազն ճգնաւոր միաբանացն, որ ժողովին ի սուրբ ուխտն եւ զմեզ ի ժամ աղօթիցն յիշեն եւ «Աստուած ողորմի» ասեն եւ պատարագեն...», նշվում է նաև Ավագ Սուրբ Նշանը՝ կապված չթողնելով, որ խոսքը եպիսկոպոսանիստ Նորավանքի մասին է *(ԺԵ, Գ, 85)*: Այս երկու հիշատակարաններում էլ ակնարկվում է Նորավանքի միաբանության խստակրոն վանական ճգնակեցությունը: Այստեղ հարկ է նաև հիշել, որ Նորավանքը ճգնակյացների բնակավայր է եղել եպիսկոպոսանիստ դառնալուց շատ ավելի վաղ ժամանակ; Դեռևս ԺԱ դարում Վահանավանքից այստեղ եկած Հովհաննես եպիսկոպոսն իր շուրջն է հավաքում «կրոնավոր ու ճգնակյաց» հոգևորականներ, ինքն էլ «ապրում էր մեծ ճգնություններով» *(Ստեփանոս Օրբելյան, էջ 288-289)*: Վանական այս ավանդույթները, ինչպես տեսնում ենք, Նորավանքում հարատևել են:

Վանքը նաև Օրբելյանների տոհմի գերեզմաններն ամփոփող վայր էր, ուր եկեղեցիները շարունակաբար պիտի Ս. Պատարագ մատուցեին բարձրատոհմիկ հանգուցյալների հոգու փրկության համար: Պատահական չէ, որ հիշատակարաններում ու վիմագրերում վանքը, «փառաբնակ, հոյակապ, հռչակավոր» անվանվելու հետ մեկտեղ, կոչվում է նաև «դամբարան մեծ իշխանաց»: Հիրավի, Նորավանքի չորս եկեղեցիներից երկուսը եկեղեցի-դամբարաններ են (այդօրինակ դեր ունի նաև գավիթը): Տեղի միաբանները պարտավոր էին բարեխղճորեն կատարել սահմանված Պատարագներն ու այս կամ այն հանգուցյալի հոգեհանգստի ծեսը, ինչպես վիմագրերից մեկում Տարսայիճի կին Մինա խաթունն է պահանջում՝ «...հանդեսիւ աւրհնեսցեն զշիրիմս» *(Դիվան հայ վիմագրության, էջ 238)*:

Վանքի վիմագրերը, կատարված բազմաթիվ նվիրատվությունները վկայում են, որ այն մեծ ուխտավայր է եղել, ընդ որում եկել են թե՛ ունևորներ, թե՛ հասարակ մարդիկ ու կարոտյալներ, որոնց համար հատուկ հոգատարություն է ցուցաբերել Ստեփանոս Օրբելյանին նախորդած Սարգիս Բ եպիսկոպոսը: Նա Նորավանքի մոտ հյուրատուն է կառուցել («շինեցի զհիւրատունս»), խոշոր նվիրատվություններ հատկացրել, որպեսզի «մուտքն (եկամուտը) ի հիւրերին պէտքն անցուցանեն, որ աւտարքն եւ կարաւտեալքն ուտեն, պարոնացն եւ երախտաւորացն աղաւթք եւ «Աստուած ողորմեա» ասեն» *(Դիվան հայ վիմագրության, էջ 246)*:

Փաստորեն Նորավանքի միաբաններն ապրել են ավելի շատ ճգնավորական, աղոթական կենցաղով, միաժամանակ ապահովել Օրբելյան բազմաթիվ իշխանազունների դամբարանների, նաև առաջնորդների ու մետրոպոլիտների հիշատակին նվիրված ծիսական արարողակարգը: Թերևս Նորավանքի միաբանների այսօրինակ զբաղվածությունն է նաև պատճառ դարձել, որ եպիսկոպոսարանը,

որպես դպրոց և գրչատուն, հովանավորել է մեկ այլ վանական կենտրոն՝ Վերին Նորավանքը:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ Օրբելյանների միտրոպոլիտական իշխանության շրջանում Նորավանքի գլխավորությամբ ստեղծվել է եպիսկոպոսարանի ինքնատիպ եռավանք համակարգ: Բնակլիմայական նկատառումներով Արատեսի բարձրադիր վանքը դարձել է միտրոպոլիտների ամառային նստավայր, իսկ կրթամշակութային նպատակների համար օգտագործվել ու հովանավորվել է Օրբելյան իշխանների նստավայր Եղեգիսի մոտ գտնվող Վերին Նորավանքն իր դպրոցով ու գրչատնով: Վերջինիս գործունեությունը ձգվում է մինչև ԺԷ դար:

ԼՈՒՅՍ ՏԵՍԱՎ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ «... ԵՎ ՕՐՈՐՎՈՒՄ Է ՆԱՎԸ ԱԼԻՔՆԵՐԻ ՎՐԱ» ԳԻՐՔԸ

Վերջերս Նյու Յորքում լույս տեսավ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի «...**Եվ օրորվում է նավը ալիքների վրա**» էսսեների անգլերեն ժողովածուն՝ Հայ Առաքելական Եկեղեցու Ամերիկայի Արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանի տնօրինությամբ եւ Քրիստափոր Հ. Զաքյանի խմբագրությամբ: Ժողովածուն լույս տեսավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հիմնադրման 50-ամյա հոբելյանի, ինչպես նաեւ Հայաստանում Քրիստոնեության՝ որպես պետական կրոն հռչակման 1700-ամյա հոբելյանի առթիվ:

ԵՀԽ-ի ստեղծումը ողջ աշխարհին եւ Ընդհանրական Եկեղեցուն լավատեսություն ներշնչող երեւույթ էր. էկումենիկ շարժման համար կարեւոր առաջընթաց քայլ, եւ դրա հիմնադիրներն այն համոզմունքն ունեին, թե Խորհուրդը կհաստատի ավելի տեւական համախմբվածություն եւ համերաշխություն: Սակայն վերջին տարիներին թվում է, թե Խորհուրդն իր կեսդարյա գործունեությունը եզրափակում է՝ ենթարկվելով ճգնաժամի վտանգին: Ետ նայելով իր բազմաթիվ ուշագրավ նվաճումներին, այսօր ԵՀԽ-ը տեսնում է ինքնիրեն քշված՝ վեճերի ալիքների հոսանքի կողմից:

Նորին Սրբություն Վեհափառ Հայրապետի հոգեւոր սպասավորության ժամանակաշրջանը գործնականում գրեթե համընկել է ԵՀԽ-ի հիմնադրման եւ դրանից ի վեր ծավալած գործունեության ժամանակաշրջանի հետ, եւ պատահական չէ, որ Նորին Սրբության ելույթները տարբեր էկումենիկ հավաքների ժամանակ հիացմունք են առաջ բերում իրենց դինամիզմով ու պարզությամբ:

Եթե ուշադրություն դարձնենք գրքի ենթավերնագրին՝ «*Ճնշագրեր՝ արված էկումենիկ ճանապարհորդության ընթացքում*», ապա սույն ժողովածուում ընդգրկված էսսեներն իրոք, ըստ ժամանակագրական կարգի՝ գրի են առնում մի էկումենիկ ճանապարհորդություն՝ երկու իմաստով. մի կողմից դրանք իրարահաջորդ կերպով ներկայացնում են վերջին տասնամյակների ընթացքում ԵՀԽ-ի իրադարձությունները ու շարժումները, եւ մյուս կողմից՝ ուրվագծում Վեհափառ Հայրապետի անցած ուղին, նրա մտածողության զարգացման եւ հասունացման ընթացքը՝ սկսած քահանայական ձեռնադրությունից մինչեւ գահակալության շրջանը՝ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Էսսեները, բացառությամբ առաջինի, գրքում ներկայացված են ըստ ժամանակագրական կարգի եւ համառոտ, սակայն բովանդակալից կերպով մեկնաբանված են առաջաբանի հեղինակ Քրիստափոր Հ. Զաքյանի կողմից:

Առաջին էսսեն՝ **«ԵՀԽ-ն իր նոր տարողության մեջ եւ Ուղղափառ Եկեղեցիները»**. ժողովածուում գրաւում է առաջին տեղը. քանի որ հող է նախապատրաստում սույն ժողովածուի հիմնահարցի ուսումնասիրման համար. այն է՝ ԵՀԽ-ի զարգացող. ծավալվող գործունեության շրջանակները եւ Ուղղափառ Եկեղեցիների տեղը Խորհրդում: Ստանձնելով միջնորդի դերը. Վեհափառ Հայրապետը թե՛ Խորհրդին եւ թե՛ Ուղղափառ Եկեղեցիներին հորդորում է գնահատել ու ճանաչել իրենց ստացած եւ իրենց մատուցած օգուտները: Ու թեեւ այն գրված է ավելի քան 20 տարի առաջ՝ 1978 թվականին. դրանում արծարծված թեման առ այսօր արդիական է:

Երկրորդ էսսեն՝ **«Էկումենիկ հիմնահարցը Բյուզանդական Քրիստոնեության մեջ» /1959 թ./**. ամենից վաղ գրված աշխատությունն է: Նրանում 27-ամյա Գարեգին աբեղա Սարգիսյանը վերլուծում է 5-րդ դարում տեղի ունեցած Եկեղեցու պառակտման երեւույթը: Թեեւ դրանից հետո անցել է ավելի քան 1500 տարի. այնուամենայնիվ, այսպես կոչված քաղկեդոնյան հարցը մի խոց է. որը դեռեւս կարոտ է բուժման: Այդ հարցի լուծման ուղին կարող է լույս սփռել Եկեղեցիների միջեւ համընդհանուր համաձայնության ձեռքբերման ճանապարհին:

«Քրիստոսի անձի վարդապետությունը Հայ Եկեղեցում» /1964 թ./ էսսեում. այժմ արդեն Գարեգին եպիսկոպոս Սարգիսյանը. վերջնական նպատակ ունենալով հաշտությունը. գտնում է. որ Եկեղեցիների միջեւ բացահայտ տարաձայնություններն ու վեճերը կարելի է հաղթահարել՝ հրավիրելով ստեղծելով հինավուրց էկումենիկ ժողովներին համարժեք ժամանակակից մի մարմին:

«Նոթեր Եկեղեցիների քաղաքական պատասխանատվության շուրջ» /1967 թ./ էսսեում. հակիրճ խոսելով Եկեղեցու եւ հասարակության փոխհարաբերությանը նվիրված 1966 թ. հրավիրված համաշխարհային կոնֆերանսի մասին. Գարեգին եպիսկոպոս Սարգիսյանը մատնանշում է աճող քաղաքական երկճյուղավորումը էկումենիկ շարժման մեջ եւ վաղօրոք նախազգուշացնում ԵՀԽ-ի ներսում վերահաս ճգնաժամի մասին:

Հաջորդ՝ **«Քրիստոնյա Եկեղեցիները եւ Պաղեստինցի փախստականների հիմնահարցը»** /1970 թ./ էսսեում Գարեգին եպիսկոպոս Սարգիսյանը պնդում է. որ ԵՀԽ-ը կարող է եւ պետք է արդյունավետ դեր կատարի միջազգային քաղաքականում. եւ մատնանշում Եկեղեցիների գործունեության որոշ ուղղություններ՝ մարդասիրական օգնության ու օժանդակության ապահովում. հակամարտող կողմերի միջեւ միջնորդ գործունեություն. մարդու իրավունքների պաշտպանություն:

«Անհամբերությունից խոնարհություն՝ բարեկամության մեր հանձնառության մեջ» /1972 թ./ էսսեում պարզորեն ակնարկվում է այն հիասթափությունը. որ ճնշում էր ԵՀԽ-ին: Գարեգին եպիսկոպոս Սարգիսյանն անկեղծորեն տարակուսում է. թե ինչպես կարելի է հաղթահարել «անելանելի դրությունը եւ անզգայությունը.... անհամբերությունը եւ հիասթափությունը»: Գործելով շուրջ քառորդ դար. ԵՀԽ-ը նպաստել է բազմաթիվ անձնական բարեկամական հարաբերությունների հաստատմանը՝ տարբեր Եկեղեցիների ներկայացուցիչների միջեւ եւ նույնիսկ հող նախապատրաստել՝ տեսականորեն ավելի սերտ համախմբման համար: Սակայն Եկեղեցիներն իրենք պատրաստ չէին ավելի սերտ միության: Գարեգին եպիսկոպոսը պնդում է. որ միասնությունը. բարեկամությունը առաջադիմության տրամաբանական եւ կարեւոր նշան է եւ պետք է մնա Եկեղեցիների հեռահար նպատակը՝ չնայած էկումենիկ շարժման մեջ ժամանակավոր վայրիվերումներին:

Քրիստոնեությունը սկիզբ առավ որպես հալածված կրոն, եւ շատ վայրերում հակաքրիստոնեական ուժերը դեռեւս հալածում են դրա հետեւորդներին՝ բացահայտ կամ գաղտնի կերպով: Ահա այս թեման է շոշափում Վեհափառ Հայրապետն իր **«Կյանք ի Քրիստոս տառապանքի եւ համբերության միջով»** /1982 թ./ էսսեում: Բյուզանդական Եկեղեցիները նշանակ են այն իրողության, որ երբ ուժը չի կարող ինքնիրեն արտահայտել արտաքնապես, ապա կարող է դա անել ներքնապես՝ համբերատարության, տոկունության եւ հոգեւոր կյանքի միջոցով: Ճիշտ ընկալվելիս՝ նման անզորությունը մի շնորհ է, որ «մենք չենք կարող փոխանակել որեւէ այլ ուժի հետ, որ աշխարհը կարող է մեզ առաջարկել»:

«Ինքներս մեզ հետ դեմ առ դեմ» /1997 թ./ էսսեով թեւակոխում ենք Նորին Սրբության հոգեւոր սպասավորության մի նոր փուլ՝ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, Վեհափառ Հայրապետի առաքելության ժամանակաշրջանը: Այստեղ Գարեգին Ա Կաթողիկոսը հանդես է գալիս արդեն որպես էկումենիկ շարժման փորձառու եւ վաստակավոր գործիչ: Մատնանշելով աշխարհը վերափոխող զարգացումներն ու իրադարձությունները, ազատության պոռթկումը ողջ աշխարհում, հասարակության հարաճուն աշխարհայնացումը, Գարեգին Ա Կաթողիկոսն ապացուցում է, որ աշխարհիկ մշակույթը շլացրել է էկումենիկ շարժումը: Պայքարը, վեճը կրոնական համայնքների միջեւ ավելի են ամրապնդում հասարակության աշխարհիկ ուղղվածությունը, որին կարելի է հակազդել հաշտությամբ եւ միությամբ:

«Էկումենիկ միտումները Հայ Եկեղեցում» /1998 թ./ էսսեում Վեհափառ Հայրապետը խոսում է 19-րդ դարում Գերմանիայում կրթված հայտնի հայ հոգեւորական-գիտնականներ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի եւ Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանի մասին, որոնց որոշ ըմբռնումները, թեեւ նրանց ողջության օրոք քննադատվել են, սակայն իրենց ազդեցությունն են թողել Հայ Եկեղեցու վրա: Այստեղ կա բացահայտ համանմանություն այսօրվա էկումենիկ շարժման հետ, որը համբերության եւ ինքնազսպության դաս է՝ շարժման ժամանակակից սերնդի ղեկավարներին: Էսսեի սքանչելի յուրահատկությունն է Վեհափառ Հայրապետի մտորումն իր կյանքի անցած ճանապարհի շուրջ:

Վերջին երկու էսսեներում Վեհափառ Հայրապետին տեսնում ենք արդեն որպես հովվապետ՝ եկեղեցական կյանքի ճակատային գծում, Եկեղեցու գործուն առաջնորդ եւ ապա՝ ավելի լայն շարժման առաջնորդ: **«Էկումենիկ մարտահրավերն Արեւելյան Եվրոպայում»** /1998 թ./ էսսեում Վեհափառ Հայրապետը հանդես է գալիս որպես իր հոտը գառան մորթի հագած գիշատիչներից պաշտպանող աչալուրջ, զգոն հովիվ: Խորհրդային Միության փլուզումը, իր եւ այլ ժողովուրդներին ազատություն բերելու հետ միասին, ուղեկցվեց նաեւ այդ երկրներ «քրիստոնյա եւ կեղծ-քրիստոնյա» աղանդների ներխուժմամբ: Ահա հենց այդ աղանդներն են այսօր «էկումենիկ մարտահրավեր» հանդիսանում:

Վերջաբան հանդիսացող **«Խոհեր Հայաստանի՝ դեպի Քրիստոնեություն դարձի 1700-ամյա հոբելյանի շուրջ»** /1998 թ./ էսսեում դրսեւորվում է Գարեգին Կաթողիկոսի հովվապետական գործունեության մյուս կողմը: Առաջնորդելով իր հոտին դեպի ուղենշային այդ հոբելյանը, Նորին Սրբությունը հրավիրում է ողջ աշխարհի քարեկամ եւ հավատակից քրիստոնյաներին՝ մասնակցել դրան ոչ թե որպես հանդիսատեսներ, այլ որպես մասնակիցներ՝ տոնելու Քրիստոնեության ընդհանուր պատմության մեջ երջանիկ մի իրադարձություն: Նրա եզրափակիչ

բառերը՝ ուղղված թե՛ էկումենիկ շարժմանը եւ թե՛ իր ժողովրդին, կարող են նշանաբան հանդիսանալ Գարեգին Կաթողիկոսի ամբողջ առաքելության համար։

Էսսեների այս ժողովածուում անսասան է Վեհափառ Հայրապետի հավատն առ այն, որ Քրիստոնեությունը հավատացյալին ուսանում է երբեք չընկրկել եւ չերկմտել՝ դժբախտության, ծախորդության սպառնալիքի առջեւ։

Արտահայտելով հիացմունքն իր տառապյալ նախնիների ունեցած ոգեկան ուժի հանդեպ, Վեհափառ Հայրապետն ինքն իրեն հարց է տալիս. «Մեր ամենամռայլ օրերին Քրիստոնեությունն ինչպե՞ս ծառայեց հույսի եւ տոկունության, հաստատակամության եւ վերանորոգման աղբյուր։ Այս հարցին պատասխան տալու համար պետք է հետամուտ լինել Խաչի իմաստին։ Խաչը պետք է դիմագրավի Հարության ուժին»։ Եվ եթե սա է մեզ թիկունք եղող ուժը, իրո՞ք կարող է այդքան դժվար լինել այսօր Եկեղեցուն վշտացնող տարաձայնությունների հաղթահարումը։

Այս ամենից զատ, Վեհափառ Հայրապետի աշխատությունները ցույց են տալիս, թե հինավուրց քրիստոնեական մի ավանդույթ ինչպես կարող է իմաստություն հաղորդել եւ առաջնորդել ժամանակակից էկումենիկ շարժումը։

ԼԱՐԻՍԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ԱՐՇԱՐ ԻՍԹՈՒՌՈՒՆ
ԵՎ ՀԱՏԵՐԻՆ ՈՒՐՈՒՆ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Փետրվարի 11-ին, Վարդանանց տոնի օրը, Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագով մեկ անգամ ևս ոգեկոչվեց Ավարայրում նահատակված հերոսների հիշատակը։

Ս. Պատարագից հետո, ժամը 13.00-ին, Գևորգյան Հոգևոր Ճեմարանում տեղի ունեցավ հանդիսություն՝ ի հիշատակ Վարդանանց, որին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը՝ գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի գլխավորությամբ, Ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը, Մայր Աթոռի պաշտոնեությունը եւ հրավիրյալ հավատացյալներ։

Հանդիսությունը բացվեց Տերունական աղոթքով, այնուհետեւ հնչեցին ՀՀ Պետական հիմնը եւ Ճեմարանի քայլերգը։ Բացման խոսքով հանդես եկավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի փոխտեսուչ Տ. Բաբկեն աբեղա Սալբիյանը։ Նա հակիրճ, բայց եւ բովանդակալից խոսքով ընդգծեց Վարդանանց գոյամարտի կրոնա-բարոյական, պատմական ու հայրենասիրական նշանակությունը եւ նշեց, որ բոլոր սերունդները միշտ երախտագիտության զգացումներով են ոգեկոչել Ս. Վարդանանց խնկելի հիշատակը։ Հայր Սուրբի խոսքին հետեւեց Ս. Ներսես Շնորհալու «Նորահրաշ» անզուգական շարականի երգեցողությունը, որից հետո «Վարդանանց պատերազմի դասերը» բանախոսությամբ հանդես եկավ պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը՝ առանձնակի նշելով.

«Գերաշնորհ Սրբազան Հայրեր, Հոգեշնորհ Հայրեր, սիրելի սաներ, դասախոսներ, հյուրեր։ Այսօրն իսկապես մեր ժողովրդի միաբավաքության խորհուրդն ընդգծող սրբազան տոներից է եւ, եթե չեմ սխալվում, բոլորից տոկուն տոնն այն միաբանության, որին դարեր ի վեր մենք ձգտել, փափագել՝ որոնել եւ գտել ենք։ Պատմությունը նման օրինակներ շատ է տալիս։ Վարդանանց ուխտը իսկապես մեր Եկեղեցու միաբանության խորհուրդն է։ Երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր մի պատգամում այդ մասին ասաց, թե «Քրիստոնեությունը միայն երկնքի ու երկրի մարդկանց միջեւ հարաբերություն մը չէ, ուխտ մը չէ, այլ նաեւ՝ ապրելու կենսաձեւ»։

Քրիստոնեությունը երկրում մարդկանց միմյանց հետ հարաբերություններ վերաճշտելու, կարգավորելու ձեւ է։ Այս խորհուրդը Վարդանանց պատերազմում առավել եւս հաստատվեց։ Այն ժամանակ, երբ կար քրիստոնեությունից հրաժարվելու սպառնալիքը, Հայոց աշխարհ հասած հրովարտակը, պարզապես, վտանգով հեղեղեց երկիրը։ Մենք հասկացանք, որ քրիստոնությունից հրաժարումը միայն կենսաձեւից, ապրելաձեւից հրաժարում չէ։ Դա հրաժարում է նաեւ ազգային գիտակցությունից, ընդհանրապես մարդ լինելու գաղափարից, որովհետեւ եթե մարդ ես, ունես քո գաղափարները, ապրելու փիլիսոփայությունը, պարտավոր ես տեր կանգնել նաեւ այդ գաղափարներին։ Այդ օրերին Եկեղեցին էր, որ կարողացավ համախմբել բոլորին։

Միանգամայն ճիշտ է այն խորհուրդը, թե Վարդանանց կռիվը, մեզ համար լինելության կռիվ լինելուց զատ, նաեւ կյանքի ճշմարտությունը բացահայտելու

փիլիսոփայություն է: Եվ խոր իմաստ կա, արդեն, Վարդանի ճառի վերջին հատվածում, երբ նշում է, թե վախը թերահավատության նշան է:

Պատմության ո՛ր հատվածում էլ փորձում ենք քննել մեր ժողովրդի կեցության ու պայքարի խորհուրդները, գտնում ենք, որ հաղթանակն այնտեղ է հասել, որտեղ մենք կարողացել ենք մեր միջից հանել վախը:

Ծերենցը մի հետաքրքիր խոսք ունի: Նա ասում է. «Պատմության ո՛ր հատվածում էլ ուզենաս մաքառել թշնամու դեմ, Վարդաններ կգտնվեն, մեկը չէ՝ տասը, բայց պատերազմ շահելու համար դու պարտավոր ես Ղեւոնդ ունենալ»:

Այսօր մեր ժամանակները նույնքան հերոսական են, որքան Վարդանանց ժամանակները: Երբեմն առօրյայի մեջ մենք այդ հերոսականությունը չենք զգում, նաեւ հպարտանանք, որ այսօր ունենք մեր ոգու առաջնորդը, մեր Ամենայն Հայոց Կաթողիկոսը, մեր Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը, որ թերեւս այնտեղ՝ հեռավոր Նյու Յորքում, վախը թերահավատության հետ շպրտում է մի կողմ, հաղթահարելով հիվանդությունը:

Թերեւս այս խորհրդով, այս հավատով էլ եզրափակեմ իմ խոսքը եւ նշեմ ամենագլխավոր պատգամն ու դասը, այն, որ Վարդանանց պատերազմը շարունակական է, երբեք միայն պատմության մեկ էջը չէ մեր ժողովրդի կյանքում»:

Այնուհետեւ երգչախմբի կատարմամբ հնչեց Մակար Եկմալյանի «Երգ մեռնող հայրենասերի»-ն: Վահան Թեքեյանի «Խորհուրդ Վարդանանց» բանաստեղծությունը կարդաց Բ լսարանի սան Արման Սիմոնյանը: Ճեմարանում կատարվող հանդիսությունների անմիջական մաս են կազմում նաեւ երաժշտական համարները: Կոմիտասի «Կռունկ» ստեղծագործությունը կատարեցին Ա լսարանի սան Զոհրապ Կարապետյանն ու Բ լսարանի սան Վասիլ Շահբազյանը: Բանախոսությամբ հանդես եկավ նաեւ Գեւորգ Մակարյանը: Նա իր խոսքում մեկ անգամ եւս շեշտեց. «Հերոսությունը ծնվում է ոչ թե անհրաժեշտությունից, այլ համարձակների քաջագործությունից: Բազմաթիվ մարդիկ են ապրում, բայց նրանցից հերոսանում են միայն քչերը: Սակայն պատմության մեջ եղավ մի պահ, երբ նախախնամությունը որոշեց խախտել այդ օրինաչափությունը, եւ հայ ժողովրդի սրբության ու հերոսության ծառը միանգամից պտղաբերեց. մենք ունեցանք բազում Սրբեր ու հազար երեսունվեց հերոս-նահատակներ, որոնք կոչվեցին Վարդանանք:

Վարդանանց առերես ուրացումը չի կարելի ուրացում համարել այդ բառի բուն իմաստով: Քրիստոս ասում է. «Ով Ինձ ուրանա մարդկանց առաջ, Ես էլ նրան կուրանամ Իմ երկնավոր Հոր եւ սուրբ հրեշտակների առաջ» /Մատթ. Ժ 33, Ղուկ. ԺԲ 9/: Սակայն Վարդանանց այս քայլն ավելի շուտ մի քաղաքականություն էր, եւ Վարդան Մամիկոնյանն էլ այդպես էր համարում, որովհետեւ իր ճառում ասում է. «Մանավանդ ես չեմ մոռացել եւ հիշում եմ, թե ինչպես ես եւ ձեզանից ոմանք այն ժամանակ անօրեն իշխանին խաբեցինք, մոլորեցրինք, ինչպես մի անպիտան մանուկ տղայի, երբ երեսանց նրա անբարիշտ կամքն իբր կատարեցինք: Բայց Տերն Ինքը վկա է մեզ, թե ծածուկ մտադրություններով ինչպես անբաժան ենք մնացել նրանից»:

Գիտակցված մահն անմահություն է, սակայն այս արտահայտությունը որոշ լրացումներ է պահանջում: Վեհ գաղափարների համար գիտակցված մահն է անմահությունը: Ոսկեբերանն իր գործերից մեկում ցույց է տալիս, որ Հին Կտակարանում հիշվող մեծ մարդիկ սարսափել են մահից: Սակայն Պողոս

առաքյալն ասում է. «Մարմնից դուրս գալը եւ Քրիստոսի հետ լինելն ավելի լավ է» /Փիլիպ. Ա 23/: Քրիստոս Իր մահը մկրտություն է համարում. որովհետեւ Զեբեդեոսի որդիների հետ խոսելիս ասում է .«Իմ բաժակը կխմեք. եւ այն մկրտությամբ. որով Ես մկրտվում եմ. կմկրտվեք» /Մատթ. Ի 23/:

Վարդանանք իրենց անձերը զոհեցին Քրիստոսի եւ հավատի համար. հերոսաբար պայքարեցին եւ նահատակվեցին՝ իրենց օրինակով ցույց տալով. որ ոչ թե ուժը. այլ բարձրագույն զգացումների տեւականությունն է ստեղծում բարձրագույն մարդկանց»:

Այնուհետեւ Ճեմարանի երգչախումբը երգեց «Արեգակն Արդարութեան» շարականը: Եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» գրքից «Որոց ոգիքն թուլացեալ են յերկնաւոր առաքինութենէն» հատվածն արտասանեց Ա լսարանի սան Անդրանիկ Հակոբյանը: Գ լսարանի սան Դավիթ Մարգարյանը կարդաց Ղեւոնդ Ալիշանի «Պլպուլն Ավարայրի» բանաստեղծությունը: Կոմիտասի «Շողեր ջան»-ը կատարեց Արման Բեգլարյանը /Ա լսարան/, իսկ Ա լսարանի սան Էդիկ Հակոբյանն արտասանեց Ներսես Վանականի «Ոգով Վարդանանց» բանաստեղծությունը:

Գեղարվեստական հայտագիրն ավարտվեց երգչախմբի կատարմամբ հնչած Մակար Եկմալյանի «Լռեց» երգով /մենակատար՝ Հարություն Տերտերյան. Դ լսարան/:

Ապա գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանն իր օրհնության խոսքը հղեց ներկաներին.

«Միրելի հոգեւոր եղբայրներ. Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանի դասախոսներ. սաներ եւ հանդիսականներ:

Տարին մեկ անգամ Վարդանանց տոնակատարության այս առիթը. կարծում եմ. այնքան քիչ է. քանի որ տարվա երեք հարյուր վաթսունհինգ օրերում էլ կարիք ունենք այսպիսի հանդիսության ներկա լինելու. հոգեպես խանդավառվելու եւ Վարդանանց ոգով մեր կյանքը շարունակելու:

Այս օրը մեր կյանքում բնորոշվում է Ս. Պատարագով եւ հանդիսությամբ: Թեեւ նահատակության առիթով ենք հավաքվում. բայց մեր հոգիները լցվում են ուրախությամբ եւ հպարտությամբ: Հպարտությամբ եմ ասում. որովհետեւ Վարդանանց պատերազմի խորքում տեսնում եմ հավատքի զորությունը. հավատքի ուժը. որ նեցուկ դարձավ մարտնչող զինվորներին. հոգեւոր դասին եւ պատերազմի բոլոր մասնակիցներին. որպեսզի նրանք հաղթանակեն: Հակառակ որ իրենց զորավարը՝ Վարդանը. ընկավ պատերազմի դաշտում. բայց բարոյական հաղթանակը. իսկական հաղթանակը մնաց հայ ժողովրդին ոչ միայն պատերազմի շրջանին. այլեւ մեր ողջ պատմության ընթացքում:

Ինչ համար միշտ խորհրդավոր են եղել «Տէր յերկնիցի»՝ այսօրվա շարականի. երկու փողերը. որոնք ասում են. «Հրոյ հոգւոյն շիջուցին զբոց զկրակապաշտ Պարսիցն» (Հոգու հրով մարեցին կրակապաշտների կրակը):

Տեսնու՞մ եք. կրակը հակադրվում է կրակին: Պարսիկների հավատքի խորհրդանիշը. այն կրակը. որ պաշտամունքի համար բերվում էր Հայաստան. եւ հավանաբար մեր նախնիները պաշտել են կրակը. բայց նոր հավատքի՝ Սուրբ Հոգու կրակն այնքան ուժեղ էր. այնքան ամբողջական. այնքան տիեզերական եւ

այնքան համոզիչ, որ Սուրբ Հոգու տված այդ հավատքի կրակով կարողացան պարսիկների հավատքի կրակը հանգցնել:

Ի՞նչ է նշանակում այդպիսի հավատքի կրակ ունենալ: Դա նշանակում է՝ Վարդանանց պատերազմը հաղթանակով պսակել:

Հայ ժողովուրդը, ճիշտ է, քրիստոնեությունը Թադեոս եւ Բարդողիմեոս Առաքյալների օրերից ընդունեց մասամբ, սակայն երբեք հարյուր տարի քրիստոնեությունը հալածվեց Հայաստանում եւ միայն Ս. Գրիգոր Լուսավորչի ջանքերով, Տրդատ թագավորի դարձով է, որ այն Հայաստանում պետական կրոն հռչակվեց, եւ դեռ որոշ ժամանակ քարոզչության կարիք կար Հայաստան աշխարհում, որպեսզի մեր ժողովուրդն ամբողջությամբ իր հոգին բացեր այս նոր հավատքի լույսի ճառագայթի առջեւ: Եվ Ս. Սահակը, եւ՝ Ս. Մեսրոպը չսխալվեցին՝ Հայոց Եկեղեցուն ազգային դրոշմ հաղորդելով հայկական ոգով, հայկական շնչով՝ այբուբենի ստեղծումով եւ Հայաստանում գրի ու գրականության տարածումով:

451 թ., քրիստոնեությունը պետական կրոն հռչակումից ճիշտ 150 տարի հետո, այդ 150 տարիների ընթացքում քրիստոնեությունն այնպես արմատավորվեց մեր մեջ, որ քաղաքական որեւէ ծանր վիճակ երբեք որեւէ ազդեցություն չունեցավ հայ ժողովրդի վրա: Եվ մենք որպես զգեստ չհագանք քրիստոնեությունը, այլ այն արյուն ու ոսկոր դարձավ մեզ համար, տեսիլք դարձավ, պաշտամունք, մեզ համար հոգի դարձավ, եւ այդ հոգուց բաժանվելն անհնար էր: Հովսեփ Կաթողիկոսի ստորագրությամբ Պարսկաստան ուղարկված նամակում շատ բնորոշ կերպով նկարագրվում է քրիստոնեության էությունը, մենք չենք կարող այդ հավատքից հեռանալ: Ո՛չ հուրը եւ ո՛չ սուրը մեզ չեն կարող կտրել այն ճշմարտության ակունքից, որ մերը դարձավ, սեփականացվեց հայ ժողովրդի կողմից:

Ես շնորհավորում եմ Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանի տեսչությանը եւ մանավանդ ուսանողությանը, որ այնքան զեղեցկորեն պատրաստել էին այսօրվա ծրագիրը, այնքան ամբողջական եւ այնքան սրտահույզ: Շնորհակալություն պրն. Դանիելյանին, նաեւ ուսանող Մակարյանին, ովքեր կարողացան ներկայացնել Վարդանանց պատերազմի ամբողջ էությունը: Նաեւ այն խոսնակին, որ իր խոսքերով համենում էր հանդիսությունը՝ յուրաքանչյուրին ելույթ ունենալու հրավիրելիս: Շնորհակալություն Հայր Արշակին, որ Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանի կյանքում շարականի սերն ու ոգին է ավելացնում, նաեւ պրն. Շարբաթյանին, որ Վարդանանց տոնին նվիրված այս ազգային երգերով գալիս է մեկ անգամ եւս մեր հոգիները փոթորկելու եւ մեզ փոխադրելու մի այլ՝ զեղեցիկ, վարդագույն աշխարհ, որտեղ մեր նահատակները երեւում են շարքով՝ իբրեւ հաղթական մարտիկները:

Այս օրն այնքան ուրախալի է եւ ամբողջական, որ բոլորս՝ ուսանողներ, հոգեւորականներ, աշխարհիկ հյուրեր, միասին, միասիրտ եւ միահոգի դարձած, այս պահն ենք ընթրելանում: Մշտ հիշում ենք նաեւ մեր Վեհափառ Հայրապետին, որ Նյու Յորքում վերջերս նորից վիրաբուժական գործողության ենթարկվեց: Մեր բոլորի մաղթանքն ու աղոթքն է, Վարդանանց տոնի առիթով Աստված առողջություն պարգեւի Վեհափառ Հայրապետին եւ շուտ ուղարկի Մայր Աթոռ, որպեսզի մենք, իբրեւ նրա զավակներ, մեզ երբեք որբ չզգանք, այլ զգանք, որ մեր հայրը մեզ հետ է:

Թող Վարդանանց հոգին միշտ կենդանի մնա մեր մեջ:

Բոլոր ժամանակներում Վարդանանց պատերազմը ներկա է մեր կյանքում: Եթե ուզում եք Վարդանանց հոգուց շեղվել եւ այլ ուղղությամբ գնալ՝ հեռեւեցեք նրանց. ովքեր. աղանդավորի իսարանն առած. թակում են ձեր դռները. բայց Հայաստանյայց Եկեղեցու ավանդությունը. պատմությունը եւ սրբություններն այնքան զեղեցիկ են. սրտագարալ. հուզիչ. որ երբեք ես չեմ կամենա. որ ձեզանից որեւէ մեկն աղանդավոր դառնա եւ հեռանա այս Եկեղեցու պաշտպանությունից. Սուրբերի հետ հաղորդությունից եւ այս Եկեղեցու շնորհների ստացումից:

Այսօրվա պատարագիչ Հայր Սուրբն իր քարոզում ասաց. որ անտարբերությունն է մեր այսօրվա մեղքը. անտարբերությունը՝ մեր այսօրվա հոգեւոր կյանքի հանդեպ: Ամեն օր մենք մտածում ենք սնվելու մասին. եւ երբ սնունդը պակասում է. անհանգստանում ենք. իսկ ինչո՞ւ չենք մտահոգվում հոգու սննդի մասին. երբ հոգեւոր սնունդը պակասում է. ինչո՞ւ չենք անհանգստանում. ինչո՞ւ հարեւանի դուռը չենք ծեծում եւ ասում. «Հավատքի հացից մի քիչ էլ մեզ տուր. որովհետեւ հավատքով սոված ենք»:

Այս գիտակցությամբ պետք է ապրել. եւ երբեք ձեր դռները չբացեք աղանդավորների առջեւ: Հայաստանյայց Եկեղեցու հավատարիմ զավակներ մնացեք եւ տեր եղեք այն ավանդությանց. որոնց տերը միայն հոգեւոր դասը չէ. մենք բոլորս ենք՝ միասին. համերաշխությամբ եւ միասնությամբ:

Օրհնված լինեք Վարդանանց նվիրումով»:

ՀՐԱՆՏ ԿՈՍՏԱՆՅԱՆ

Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանի
Ե լսարանի սան

ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ԽԱՐՈՒՅԿ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, հավատարիմ մնալով հնավանդ սովորությանը, Տյառնընդառաջը տոնակատարում է փետրվարի 14-ին, Քրիստոսի Ծննդյան 40-րդ օրը:

Գեղեցիկ ավանդություններից է Տյառնընդառաջի տոնի նախօրեին, երեկոյան ժամերգությունից հետո, խարույկ վառելը: Սկզբում այս սովորությունը կապված է եղել հեթանոսական կրակի եւ Արեգակի չաստված Միհրի հետ, որը սակայն վերաիմաստավորվել եւ կցվել է « Տիրոջ Քառասնօրյա Տաճար գալստյան» տոնին:

Այս տարի էլ, Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանի սաների ջանքերով, Մայր Աթոռում վառվեց Տյառնընդառաջի խարույկը:

Տոնակատարությանը ներկա էին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Ճեմարանի տեսչությունը՝ գլխավորությամբ Տ. Հայկազուն Ծ. Վրդ. Նաջարյանի, միաբան հայրեր, Ճեմարանի սաներն ու շուրջ հարյուրից ավելի հյուրեր:

Խարույկը վառելուց հետո ճեմարանականները ներկայացրեցին իրենց պատրաստած ծրագիրը: Այն սկսվեց Ճեմարանի օրհներգով, ապա երգչախումբը կատարեց «Ազնիվ ընկեր» եւ «Զեյթունցիներ» երգերը: Դրանց հաջորդեց Կոմիտասի երգերի շարքը /«Էս առուն ջուր է գալիս», «Հոյ նազան», «Ֆիղան յար»/: Երգերի կատարումը հաճախ ընդմիջվում էր բանաստեղծությունների արտասանությամբ:

Տոնակատարությունը շարունակվեց մինչ ուշ երեկո: Կրակի վերջին բոցերի հետ ներկաները հեռացան հոգեմորոգ ու բարձր տրամադրությամբ:

ՀՐԱՆՏ ԿՈՍՏԱՆՅԱՆ

Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանի
Ե լսարանի սան

ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋԸ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՈՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆՈՒՄ

Ամեն անգամ, երբ տեսնում ես, թե ինչպես են եկեղեցական տոները դառնում ժողովրդական հանդիսություններ, հոգեւոր մեծ ցնծություն ես ապրում ու փառք տալիս Աստծուն, որ վերադարձան անկաշկանդ ու աներկյուղ աղոթելու օրերը, որոնցից տարիներ շարունակ զրկված էինք: Այսպես, Տյառնընդառաջը Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի բնակիչների համար, թեմական առաջնորդ գերաշնորհ Տ. Առաքել եպս. Քարամյանի եւ քաղաքապետ պրն. Այվազյանի ջանքերով, վերածվել էր համաքաղաքային մեծաշուք տոնակատարության: Այստեղ էին եկել Երեւանի Պետական համալսարանի Աստվածաբանական ֆակուլտետի դեկան գերաշնորհ Տ. Շահե արքեպս. Աճեմյանը ֆակուլտետի երկու եարյուր ուսանողներով ու դասախոսական կազմով, Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղար գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանն ու գերաշնորհ Տ. Տաքեւ արքեպս. Սարգիսյանը, գերաշնորհ Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանն ու Հյուսիսային Կովկասի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, թեմական առաջնորդ Սրբազան Հայրն ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան հոգեշնորհ Տ. Մակար աբեղա Հովհաննիսյանը:

Քաղաքում կառուցվելիք եկեղեցու հիմքերի մոտ սկսվեց երեկոյան ժամերգություն՝ հանդիսադրությամբ Շահե Սրբազանի: Ժամերգության վերջում կատարվելիք նախատոնակը վերածվեց մեծաշուք թափորի՝ կազմված Աստվածաբանական ֆակուլտետի ուսանողներից, Ջրվեժի ՀԵԵՄ-ի անդամներից, տեղի կիրակնօրյա դպրոցի սաներից ու պարի համույթներից: Հարկ է նշել, որ իրենց երգեցողությամբ ու կազմակերպչական աշխատանքով մեծ ծառայություն ունեցան Աստվածաբանական ֆակուլտետի դասախոս պրն. Խորեն Պալյանը, քարեշնորհ Գեւորգ սրկ. Ղուշչյանն ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից եկած Արթուր տրկ. Հայրապետյանը:

Թափորը, «Քրիստոս փառաց թագաւոր» տաղի երգեցողությամբ, շարժվեց դեպի քաղաքի կենտրոնական հրապարակ: Ճանապարհին, հասնելով քաղաքում տեղադրված խաչքար-հուշարձանի մոտ, կանգ առավ, եւ գերաշնորհ Սրբազան Հայրերն օրհնեցին աշխարհի չորս կողմերը, ապա թափորը շարժվեց առաջ:

Հրապարակում թափորին դիմավորեց հավատացյալների հոծ բազմությունը: Հասնելով հարթակին՝ հավաքվածներին դիմեց քաղաքապետ պրն. Այվազյանը՝ շնորհավորելով բոլոր ներկաներին այս մեծ ու լուսավոր տոնի կապակցությամբ եւ խոսքը տվեց թեմական առաջնորդ Առաքել Սրբազանին:

Գերաշնորհ Սրբազան Հայրը պատմեց քառասնօրյա Տիրոջ Տաճար ընծայման պատմությունը եւ ապա անդրադարձավ տոնի հեթանոսական ակունքներին ու բացատրեց նրա նոր՝ քրիստոնեական խորհուրդը: Առաքել Սրբազանը շնորհակալություն հայտնեց բարձրաստիճան հոգեւոր Հայրերին՝ հրավերն ընդունելու եւ իրենց ներկայությամբ տոնին առավել շուք տալու համար:

Այնուհետեւ խոսեց գերաշնորհ Տ. Տաքեւ արքեպս. Սարգիսյանը՝ անդրադառ-

նալով Հայ Առաքելական Եկեղեցու՝ հայ ժողովրդի կյանքում ունեցած դերին ու նշանակությանը. հայ մանուկներին հայեցի դաստիարակություն տալու կարեւորությանը:

Ելույթներից հետո ներկա յոթ նորապսակ զույգերի հանդիսավորարար հանձնվեցին ամուսնության վկայականներ. որից հետո գերաշնորհ Տ. Շահե Սրբազանն օրհնեց նորապսակներին՝ նրանց հանձնելով մեկական ոսկյա մատանի ու հեռուստացույց:

Նվերների բաշխումից հետո գերաշնորհ Տ. Առաքել եպս. Քարամյանն ու քաղաքապետը մոտեցան հրապարակի մեծ խարույկին ու այն վառեցին կանթեղի լույսից. որը խորհրդանշում է հավատավորների հոգու սուրբ լույսը. որ է՝ Հիսուս Քրիստոս:

Այնուհետեւ սկսվեց տոնակատարության ժողովրդական մասը:

Տա Աստված. որ նման միջոցառումները դառնան ավանդական. լինեն օրինակելի թե՛ Կոտայքի մարզի եւ թե՛ այլ մարզերի քաղաքների համար: Նաեւ մաղթենք առողջություն. ուժ ու եռանդ Կոտայքի թեմի բարեխնամ առաջնորդ Տ. Առաքել եպս. Քարամյանին՝ հետագայում եւս նման միջոցառումներ կազմակերպելու համար:

ՎԱՀԵ ԴՊԻՐ ԲԵԳՈՅԱՆ

«Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆԻՆ

Երեսունութ տարի առաջ էր։ Երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով Կոստանդնուպոլսից Հայաստան եկավ մաեստրոն եւ փորձեց, պետական ակադեմիական երգչախմբի միջոցով, նոր որակ ու կատարելություն հաղորդել հայ երգչախմբային արվեստին։

Դժվարին, բայց եւ երախտաշատ գործը շուտով տվեց իր անդրանիկ պտուղները։ Այսօր արդեն այսպես կարելի է խոսել վաստակաշատ մաեստրո Հովհաննես Չեքիջյանի մասին. ավելի քան երեք հազար համերգներ Հայրենիքում, նախկին Խորհրդային Միության շատ ու շատ քաղաքներում եւ արտասահմանյան երկրներում։ Այսպիսին է խմբավար եւ դիրիժոր, ժողովրդական արտիստ, պետական մրցանակի դափնեկիր Հովհաննես Չեքիջյանի ստեղծագործական վաստակը։

Շուրջ չորս տասնամյակ առաջ, 1961 թվականին, ստանձնելով Հայաստանի պետական երգչախմբի ղեկավարությունը, մեծ ջանքեր գործադրեց՝ երգչախմբի կատարողական մակարդակը միջազգային չափանիշներին հասցնելու, երգացանկը հարստացնելու համար։ Գեղարվեստական ուրույն մտածողության, կատարողական բարձր վարպետության շնորհիվ Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբն ստեղծագործական մեծ նվաճումների հասավ՝ ամենուր տարածելով Կոմիտասյան հարուստ ավանդներով սրբագործված հայկական երգարվեստի համբավը։

Վաստակաշատ երաժիշտն ու քաղաքացին այսօր բոլորել է իր կյանքի 70-ամյակը։ Երախտագետ ժողովուրդն ի պատշաճի նշեց այդ տարեդարձը։ Նախ մայրաքաղաքի «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի ունեցավ հոբելյարին նվիրված մեծ հանդիսություն, ուր, մեծաքիվ արվեստասերների ներկայությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան հոգեշնորհ Տ. Արտակ աբեղա Տիգրանյանն ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը՝ երախտաշատ արվեստագետին Մայր Եկեղեցու կողմից յուրովի շնորհավորելու եւ գնահատելու մասին։

Հիրավի, Հայ Առաքելական Եկեղեցին առանձնակի արձագանքեց հայ երգարվեստի երախտավոր հոբելյարին։ Վեհափառ Հայրապետի կոնդակով հայկական երաժշտական արվեստին մատուցած նշանակալից ծառայությունների համար եւ ծննդյան 70-ամյակի ուրախ առիթով Հովհաննես Չեքիջյանին շնորհվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսության բարձրագույն պարգեւներից մեկը՝ «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» շքանշանը։

Փետրվարի 14-ին, Տյառնընդառաջի օրը, հավարտ Սուրբ եւ անմահ Պատարագի, Մայր Աթոռի Վեհարանում, ներկայությամբ հոգետրականաց դասի, մեծաքիվ երաժիշտների, գրողների, նկարիչների, ինչպես նաեւ մշակույթի այլ գործիչների ու հրավիրյալների, տեղի ունեցավ շքանշանի հանձնման շնորհանդեսը։ Հոգեշնորհ Տ. Արտակ աբեղա Տիգրանյանի կողմից հանդիսավորաբար մեկ անգամ ևս ընթերցվեց Հայրապետական կոնդակը եւ ապա, ձեռամբ Մայր Աթոռ Սուրբ

Էջմիածնի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, մաեստրոյին հանձնվեց Հայոց Եկեղեցու պատվավոր շքանշանը: Սրբազան Հայրը, շնորհավորելով Հովհաննես Չեքիջյանին, միաժամանակ նշեց այն մեծ ավանդը, որ ներդրել է նա հայ երգի պանծացման, երգարվեստի հարստացման ու զարգացման գործում:

Հոբելյարին ի սրտե շնորհավորեցին եւ ստեղծագործական հետագա նորանոր հաջողություններ մաղթեցին Մայր Աթոռի միաբան գերաշնորհ Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը, Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամ, ժողովրդական նկարիչ, ակադեմիկոս Գրիգոր Խանջյանը:

Շնորհակալանքի ու երախտիքի խոսք ուղղելով ներկաներին՝ երգարվեստին նվիրաբերած իր գործունեությունն այդքան բարձր գնահատելու համար, մաեստրո Չեքիջյանը բարեմաղթանքներ հղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ խնդրելով ներկաներին համատեղ աղոթել Նորին Սրբության շուտափույթ ապաքինման եւ Մայր Հայրենիք վերադառնալու համար:

Շնորհանդեսի վերջում, ի պատիվ Հովհաննես Չեքիջյանի, Վեհարանի հյուրասրահում տեղի ունեցավ նաեւ պաշտոնական ընդունելություն:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԿՅԱՆՔԻ ԿՈՉՎԵՑ ՆՈՐ՝ ՀՈՎՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ

Ս. Ծննդյան տոներից հետո, ակտիվ քարոզչական գործունեություն ծավալելու նպատակով, Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի կողմից կյանքի կոչվեց Հովվական Գործունեության Համակարգող Գրասենյակը (ՀԳՀԳ)։

Գրասենյակի գործունեության նպատակն է՝ թեմերում ծավալել ակտիվ քարոզչություն եւ, որպես քարոզիչ-օժանդակողներ, ներգրավել Մայր Աթոռի միաբաններին։ Գրասենյակի տնօրեն է նշանակվել Տ. Արշեն աբեղա Սանոսյանը։

Գրասենյակի գործունեության ոլորտն է հանդիսանում հովիվ-հոտ, հոգեւորական-ժողովուրդ հարաբերության սերտացումը, քարոզչական օրինական բոլոր միջոցների օգտագործումը եւ հանրակրթական դպրոցներում Հայ Եկեղեցու պատմության եւ քրիստոնեական վարդապետության դասավանդման կազմակերպումը։

Գրասենյակի խնդիրներից մեկն էլ խիստ կարիքավոր ընտանիքներին օգնություն եւ նպաստ տրամադրելն է։

Ուժերն առավել նպատակային օգտագործելու համար կազմակերպվեցին խմբեր, որոնց պայմանականորեն տրվեցին հետեւյալ անունները.

Մայր Աթոռ Խմբի ղեկավար՝ Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյան, անդամներ՝ Տ. Արտակ աբեղա Տիգրանյան, Տ. Աշոտ աբեղա Մնացականյան, Տ. Արշակ աբեղա Խաչատրյան),

Գեւորգյան Հոգեւոր Ճեմարան (ղեկավար՝ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյան, անդամներ՝ Տ. Բարկեն աբեղա Սալբիյան եւ Հոգեւոր Ճեմարանի սարկավագներ),

ՔԴՔԿ (ղեկավար՝ Տ. Վազգեն վրդ. Միրզախանյան, անդամներ՝ Տ. Զարեհ աբեղա Կաբաղյան եւ ՔԴՔԿ-ում աշխատող սարկավագներ),

Արարատյան Հայրապետական թեմ (ղեկավար՝ Տ. Թորգոմ աբեղա Տոնիկյան, անդամներ՝ թեմի քահանաներ եւ սարկավագներ),

Արմավիրի թեմ (ղեկավար՝ Տ. Խորեն քհն. Մարուքյան, անդամներ՝ թեմի քահանաներ եւ սարկավագներ)։

Այս խմբերն ամեն կիրակի քարոզչական աշխատանքներ են ծավալում Արմավիր, Մեծամոր քաղաքներում, Ջանֆիդա, Մրգաշատ եւ Նոր Արմավիր գյուղերում։ Տեղերում կազմակերպվում են հանդիպումներ ժողովրդի հետ, ներկայացվում Հայ Առաքելական Եկեղեցու պատմությունը, մեր ժողովրդի ավանդությունները, քննարկվում են ժողովրդին հուզող բազմաթիվ հարցեր, բաժանվում հոգեւոր գրականություն՝ Աստվածաշունչ Մատյան, ՔԴՔԿ-ի կողմից հրատարակված պարզ, բացատրական թերթոններ ու գրքույկներ, ինչպես նաեւ այլ հրատարակչությունների կողմից լույս ընծայված գրքեր թե՝ մեծահասակների եւ թե՝ մանուկների համար։

Մրգաշատ գյուղի եկեղեցում ամեն կիրակի եւ տոն օրերին մատուցվում է Ս. Պատարագ, իսկ մյուս վայրերում, ուր չկան եկեղեցիներ, կատարվում են

ժամերգություններ, ընդհանրական աղոթքներ։ Քարոզչական նպատակներով ցուցադրվում են հոգեւոր թեմաներով տեսաֆիլմեր։ Կազմակերպվում են նաեւ համերգներ՝ Արարատյան Հայրապետական թեմի Հայորդաց տների գեղարվեստական, երգի-պարի համույթների մասնակցությամբ։ Տեղերում ստեղծվում են երգի եւ պարի խմբեր։

Հանդիպումներ են կազմակերպվում նաեւ աղանդավորական տարբեր խմբերի հետ։

Մարզային իշխանությունների գիտությամբ եւ անմիջական օգնությամբ, հանրակրթական դպրոցներում կդասավանդվի Հայ Եկեղեցու պատմություն, որը կիրականացնեն ՔԴՔԿ-ի կողմից վերապատրաստված կրոնի շուրջ 45 ուսուցիչներ։

Քարոզչական նպատակներով գրասենյակը համագործակցում է նաեւ մարզի լրատվական միջոցների, հատկապես՝ Արմավիրի «Ալտ» եւ Էջմիածնի «Էջմիածին» հեռուստաընկերությունների, ինչպես նաեւ մարզային «Արմավիր» թերթի եւ մարզպետարանի լրատվական բաժնի հետ։

ԱՐՇԵՆ ԱԲԵՂԱ ՍԱՆՈՍՅԱՆ

ՈՒՍԱՆԵԼԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին միշտ գրկաբաց է ընդունում իր մոլորյալ զավակներին, ավելին, զանազան միջոցառումներ կազմակերպում՝ նրանց իրենց արմատներին մոտեցնելու համար: Նմանատիպ նպատակ էր հետապնդում հերթական այցելությունն Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղ:

Փետրվարի 28-ին, առավոտյան, Արարատյան Հայրապետական թեմի Նորքի «Հայորդաց տան» սաները, ինչպես նաեւ մի խումբ ճեմարանականներ, գլխավորությամբ հոգեշնորհ Տ. Արշակ աբեղա Խաչատրյանի, ուղեւորվեցին Ջանֆիդա: Ցեռնարկի իրագործմանը մեծապես աջակցել էին գյուղապետ Ղուկաս Սրեյանը եւ փոխգնդապետ Սմբատ Սրեյանը: Գյուղապետարանը հյուրերին էր տրամադրել մշակույթի տունը, որի դահլիճը բազմամարդ էր:

Գյուղ հասնելուն պես, ճեմարանականները, գլխավորությամբ Հայր Արշակի, կատարվեց «Արեւագալի» ժամերգություն, հավարտ որի Հայր Սուրբը խոսեց «Արեւագալի» խորհրդի մասին՝ խոստանալով ավելի հաճախակի դարձնել այցելությունները:

Այնուհետեւ ելույթներ ունեցան «Հայորդաց տան» շնորհաշատ սաները: Փոքրիկները իրենց ծրագիրն սկսեցին «Տոնական» պարով, որին հաջորդեցին «Ցեռնածու» կրկեսային համարները, ինչպես նաեւ երգերի ու պարերի այլկատարումները: Երեխաների պատրաստած գեղարվեստական հայտագիրն ավարտվեց Ռոբերտ Ամիրխանյանի «Հայաստան» երգով:

Հավարտ գեղարվեստական մասի, բեմ հրավիրվեց Տ. Արշակ աբեղա Խաչատրյանը: Նա իր խոսքում մասնավորապես անդրադարձավ Առաքելական Եկեղեցու դերին ու կարեւորությանը: Հայր Սուրբը խոսեց հայ ժողովրդի անցած պատմական ուղու մասին, այնուհետեւ բացատրեց փրկագործության խորհուրդը եւ խոսքն ավարտեց յուրահատուկ ուխտով. «Ուխտում ենք այսուհետ ամեն կիրակի գալ այստեղ՝ միասիրտ աղոթելու , պաշտամունք մատուցելու եւ դրանից հետո միայն զբաղվելու մեր մյուս հոգսերով»:

1700-ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆԸ 1700–ԱՄՅԱԿԻ ԾՐԱԳՐՈՎ.

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՓՅՈՒՌՔԻ ԹԵՄԵՐ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ

Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700–ամյակի ծրագրով նախատեսված ուխտագնացությունների կազմակերպման մի շարք հարցեր քննարկելու նպատակով 1700–ամյակի ուխտագնացությունների հանձնախմբի ատենապետ, Հայ Առաքելական Եկեղեցու Կանադայի թեմի առաջնորդ գերշ. Տ. Հովնան արքեպս. Տերտերյանն իր Երուսաղեմ–Հայաստան ուղեւորության (հունվարի 28–փետրվարի 7) ընթացքում այցելեց Սփյուռքի մի շարք գաղթօջախներ: Սրբազան Հոր այցելությունը մասնավորապես վերաբերում էր 1999 թվականի ապրիլին Երուսաղեմ մեծ ուխտագնացության, 2001 թվականի երիտասարդական ուխտագնացության նախապատրաստման, ինչպես նաեւ 1700–ամյակի տոնակատարություններին առնչվող մի շարք այլ հարցերի: Ուղեւորության առաջին հանգրվանը Երուսաղեմն էր: Այստեղ իր երկօրյա այցելության ընթացքում Սրբազանը. բացի 1700–ամյակին առնչվող հանդիպումներից, հնարավորություն ունեցավ ծանոթանալու նաեւ Ճեմարանի /դպրեվանքի/ սաներին:

Երուսաղեմում Հովնան Սրբազանը հանդիպումներ ունեցավ Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի, գերաշնորհ Տ. Արիս եպիսկոպոս Շիրվանյանի եւ 1700–ամյակի Երուսաղեմի հանձնախմբի անդամների հետ՝ քննարկելով հետեւյալ հարցերը.

1. 1999 թվականի ապրիլին Երուսաղեմ կատարվելիք ուխտագնացությունը՝ իր մանրամասնություններով.

2. 1700–ամյակի առթիվ երիտասարդական ուխտագնացության հետ կապված կազմակերպչական խնդիրները.

3. Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքում Հիսուսի Ծննդյան 2000–ամյակի առթիվ կատարվելիք տոնակատարությունների նախապատրաստական աշխատանքների ընթացքը:

Երուսաղեմից Սրբազան Հայրն ուղեւորվեց Լիոն, ուր նախատեսված էին հանդիպումներ 1700–ամյակի տոնակատարությունների Ֆրանսիայի հանձնախմբի հետ : Այստեղ նա մասնակցեց հայրապետական պատվիրակի փոխանորդ Նորվան արքեպս. Զաքարյանի հրավիրած 1700–ամյակի տոնակատարությունների Ֆրանսիայի հանձնախմբի ժողովին, որին մասնակցում էին նաեւ հոգեշնորհ Տ. Տաքեւ վարդապետը եւ Տ. Կարապետ աբեղան:

Ժողովի ընթացքում քննարկվեցին՝ 1700–ամյակի տոնակատարությունների ֆրանսահայ հանձնախմբի կազմը, 1999 թ. ապրիլին Երուսաղեմ–Հայաստան ուխտագնացությանը ֆրանսահայերի մասնակցությունը, 2001 թ. երիտասարդական ուխտագնացությանը ֆրանսահայ երիտասարդների մասնակցությունը, հանձնախմբերի կազմավորումը Փարիզում եւ Մարսելում, 1999 թ. փետրվարի 3–4 ուխտա-

գնացության կենտրոնական վարչության եւ փետրվարի 5–7–ը միջքեմական ներկայացուցչական ժողովների հետ կապված մի շարք խնդիրներ:

Ժողովի ընթացքում Նորվան եպիսկոպոսի գլխավորությամբ ստեղծված միջին Ֆրանսիայի հանձնախումբը ներկայացրեց 1700–ամյակի առթիվ կազմած իր մի շարք ծրագրերը, որոնք ամփոփում են Լիոնում նախատեսված Հայ Եկեղեցու վարագույրների ցուցահանդեսը, 2001 թվականի գիտաժողովը Սորբոնում եւ մի շարք այլ նախաձեռնություններ:

1700–ամյակի ուխտագնացությունների հարցերով պատասխանատու Սրբազան Հայրը Լիոնից այցելեց Լոնդոն, ուր հանդիպեց Անգլիայի հայրապետական պատվիրակ գերշ. Տ. Եղիշե արքեպս. Կիզիրյանի գլխավորած 1700–ամյակի ուխտագնացությունների հանձնախմբի հետ: Այստեղ եւս, հրավիրված ժողովի ընթացքում, քննարկվեցին 1999 թ. ապրիլին եւ 2001 թվականին կազմակերպվելիք ուխտագնացությունների եւ կենտրոնական վարչության ու միջքեմական ներկայացուցչական մարմնի ժողովների հետ կապված մի շարք հարցեր:

Անգլիայից Գերմանիա ուղեւորված Սրբազան Հայրը, Գերմանիայի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Բեքչյանի հրավերով, Ս. Պատարագ մատուցեց Քյոլնի առաջնորդանիստ եկեղեցում: Ս. Պատարագի ավարտին իր քարոզում նա կրկին անդրադարձավ 1700–ամյակի առթիվ կազմակերպվելիք ուխտագնացություններին՝ կարեւորելով երիտասարդության մասնակցությունն այդ նվիրական իրադարձություններին:

Սրբազան Հայրն ուղեւորության վերջին հանգրվան՝ Հայաստան, այցելելու ճանապարհին հանդիպում ունեցավ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Եվրոպայի հայրապետական պատվիրակ եւ Փարիզի առաջնորդ գերշ. Տ. Գյուտ արքեպս. Նազաշյանի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին 1700–ամյակի Փարիզի հանձնախմբի կազմակերպման հետ առնչվող մի շարք հարցեր:

Փարիզից Հովնան Սրբազանն ուղեւորվեց Հայաստան, ուր մասնակցեց 1700–ամյակի ուխտագնացությունների կենտրոնական մարմնի (փետրվարի 3–4) եւ միջքեմական մարմնի (փետրվար 5–7) ժողովներին: Նա ունեցավ մի շարք հանդիպումներ 1700–ամյակի տոնակատարությունների եկեղեցական հանձնախմբի, թեմական առաջնորդների, «Հայկազուններ» պատանեկան կազմակերպության անդամների եւ նրանց ծնողների, Էջմիածնի Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանի եւ Մեւանի Վազգենյան դպրանոցի սաների հետ, հավուր պատշաճի քարոզ խոսեց Մայր Տաճարում:

Մամլո Դիվան 1700-ամյակի

ՀԱՄԱԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարությունների կենտրոնական մարմնի նախաձեռնությամբ փետրվարի 5-7-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հրավիրվեց միջթեմական համաժողով՝ նախագահությամբ գործադիր մարմնի վարիչ-քարտուղար գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանի եւ Կանադայի թեմի առաջնորդ, 1700-ամյակի ուխտագնացությունների կենտրոնական մարմնի ատենապետ գերաշնորհ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի, որն էլ վարում էր համաժողովի նիստերը:

Համաժողովին մասնակցում էին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Հայաստանի եւ Սփյուռքի թիմերի (Երուսաղեմ, ԱՄՆ, Կանադա, Գերմանիա, Արգենտինա, Բրազիլիա, Ուրուգվայ, Ֆրանսիա, Իրան, Սիրիա, Իտալիա, Վենեսուելա, Քուվեյթ) առաջնորդներ, հոգեւոր եւ աշխարհական ներկայացուցիչներ, Հայ Եկեղեցու երիտասարդաց եւ ուսանողական միությունների անդամներ:

Անդրանիկ նիստն սկսվեց աղոթքով, որից հետո, հանուն Վեհափառ Հայրապետի եւ Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդի, բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: Մինչ անդրանիկ նիստի աշխատանքներն սկսելը, ժողովականները ողջույնի նամակ կազմեցին՝ ուղղված ԱՄՆ-ում ապաքինվող Ամենայն Հայոց Գարեգին Առաջին Կաթողիկոսին:

Համաժողովի մասնակիցներին ողջույնի խոսքով դիմեց Մեսրոպ արքեպս. Աշճյանը: Սրբազան Հայրը հակիրճ ներկայացրեց 1700-ամյակի ծրագրով նախատեսված միջոցառումների նախապատրաստության ընթացքը, առանձնապես կարեւորեց ուխտագնացության դերը՝ որպես մեր հավատի ակունքներին վերադառնալու իրողություն, ուխտը համարելով մեր սրբազան դաշինքը Աստծու հետ:

«1700-ամյակը, ըստ Վեհափառ Հայրապետի, նոր հոգեգալուստ է: Այդ խոհերով էլ ես արժեւորում եմ Ձեր առաքելությունը», - իր խոսքն այդպես ավարտեց Սրբազան Հայրը:

Համաժողովի ընթացքում քննարկվեցին 1700-ամյակի տոնակատարությունների ծրագրի եւ ուխտագնացությունների կազմակերպման հետ կապված մի շարք կարեւոր հարցեր: Այնուհետեւ ՀՀ հուշարձանների պահպանության վարչության կողմից Հակոբ Սիմոնյանը ներկայացրեց 2001 թվականին Հայաստանում եւ Արցախում չորս երթուղիներով կազմակերպվելիք ուխտագնացությունները ընդգրկող բնակավայրերը տանող ճանապարհների հաղթահարման հետ կապված մի շարք խնդիրներ ու դժվարություններ: Որոշվեց դրանց անդրադառնալ ուխտագնացության կենտրոնական մարմնի հատուկ նիստերում:

Առանձնապես բուռն քննարկում ծավալվեց Հովնան արքեպս. Տերտերյանի ներկայացրած 2001 թ. երիտասարդական ուխտագնացության նախագծի շուրջ: Ամենայն մանրամասնությամբ քննարկվեցին այդ միջոցառումների հետ կապված բոլոր խնդիրները: Եղան մի շարք հետաքրքիր առաջարկություններ, կատարվեցին լրացումներ, որոնք արձանագրվեցին՝ հետագայում վերանայելու մտադրությամբ:

Կարեւորվեց մի շարք հրատարակությունների դերը, որոնք պետք է ոչ միայն ուղեցույց հանդիսանան ուխտավորների համար, այլեւ օժանդակեն նրանց՝ ուխտագնացության ընթացքում քարոզչական գործունեություն ծավալելուն: Եղան նաեւ քարոզչական գրականության հրատարակության հետ կապված այլ առաջարկություններ:

Երուսաղեմի Հայոց Պատրիարքության ներկայացուցիչը՝ հոգեշնորհ Տ. Բագրատ աբեղան, հանդես եկավ հատուկ հայտարարությամբ՝ ներկայացնելով Երուսաղեմի Հայոց Պատրիարքի՝ Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի պատրաստակամությունը՝ հոգալու 1999 թ. ապրիլի 7–14-ը դեպի Երուսաղեմ կատարվելիք ուխտագնացության հայաստանցի մասնակիցների կեցության ու սննդի հետ կապված բոլոր ծախսերը: Հայր Բագրատն անդրադարձավ նաեւ 2000 թվականի Ս. Ծննդյան տոներին դեպի Երուսաղեմ կատարվելիք ուխտագնացությանը:

Համաժողովում 1700–ամյակի տոնակատարություններին հայ երիտասարդության մասնակցության ծրագրին ներկաների ուշադրությունը երավիրեց Հայ Եկեղեցու ուսանողական միության ներկայացուցիչ Արեգ Թադեւոսյանը: Նա, անդրադառնալով իրենց կազմակերպության դերին ու աշխատանքներին, նշեց, որ 1700–ամյակը մի հրաշալի առիթ է՝ իրենց գործունեությունն առավել նպատակասլաց ծավալելու համար, որի նպատակը հայ երիտասարդին դեպի Եկեղեցի առաջնորդելը պիտի լինի:

Այնուհետեւ զբոսաշրջիկության հայկական ընկերակցության ներկայացուցիչ Արթուր Ոսկանյանը հանդես եկավ մի ծրագրով, որով առաջարկվեց, հովանավորների նյութական աջակցությամբ, կազմել երիտասարդական կամավորների խմբեր՝ բարեկարգելու եւ մաքրելու համար պատմական հուշարձանների հարակից տարածքները, որպեսզի 1700–ամյակի առթիվ Հայաստան ժամանած բազմաթիվ հյուրերին կարողանանք դրանք պատշաճորեն ներկայացնել: Այս հարցի առթիվ եւս եղան առաջարկություններ:

Ժողովի եզրափակիչ նիստից առաջ Մեսրոպ արքեպս. Աշճյանը համաժողովի քննարկմանը ներկայացրեց երկու ծրագրեր: Դրանցից առաջինը վերաբերում էր «Մշո Սուրբ Կարապետ» ընկերակցության ստեղծմանը, որի նպատակն է լինելու 1700–ամյակի առթիվ ուխտագնացության ոգին վերակենդանացնել մեր ժողովրդի կյանքում: Երկրորդը վերաբերում էր 1700–ամյակին առնչվող մի այլ կարեւոր եւ նպատակային միջոցառման՝ Խոր Վիրապի շրջակայքում Ծառատունկին եւ Տրդատ թագավորի անունով անտառի ստեղծմանը:

Ներկայացվեց նաեւ ուխտավորի անձնագրի նմուշը, որի շուրջ եղան առաջարկություններ:

Հայ Եկեղեցու Ուսանողական եւ Երիտասարդաց Միությունների միացյալ հայտարարությունից եւ Գեղարքունյաց թեմի առաջնորդ Անանիա արքեպս. Արաբաջյանի կողմից 1999 թվականի սեպտեմբերին թեմի եկեղեցիներ եւ ուխտավայրեր կատարվելիք ուխտագնացության ծրագիրը ներկայացնելուց հետո, ավարտվեցին համաժողովի նիստերը:

Կիրակի օրը, փետրվարի 7–ին, համաժողովի մասնակիցները ներկա էին Մայր Տաճարում մատուցված Սուրբ Պատարագին: Պատարագիչն էր գերաշնորհ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը: Նա իր քարոզում նույնպես անդրադարձավ ուխտագնացությունների սրբազան ավանդույթի վերականգնման անհրաժեշտությանը՝ որպես հայ երիտասարդության հայեցի եւ հոգեւոր դաստիարակության լավագույն միջոց:

Համաժողովի եզրափակիչ հանգրվանը Խոր Վիրապն էր, ուր, Սրբազան Պատարագից հետո մասնակիցները ուխտի մեկնեցին:

Մանլո Դիվան 1700-ամյակի



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Փետրվարի 1-ին, երկուշաբթի.- Սրբոց Ատովմեանց զօրավարցն:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեցին Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը, ինչպես նաև Բեռլինի և Հյուսիսային Գերմանիայի հայոց հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Սերովբե վրդ. Իսախանյանը:

Փետրվարի 3-ին, չորեքշաբթի.- Պահք:

Այսօր, երեկոյան, վեհարանում տեղի ունեցավ Միաբանական ժողով, որի ընթացքում Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը ներկայացրեց Մոսկվայում կայացած Ուղղափառ Եկեղեցիների համաժողովում քննարկված խնդիրները: Ժողովում Հայ Եկեղեցին ներկայացնում էր Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը:

Միաբանները քննարկեցին Արմավիրի թեմում տարվող քարոզչական աշխատանքների ընթացքը:

Փետրվարի 4-ին, հինգշաբթի.- Սրբոց Ոսկեանց քահանայիցն:

Այսօր ԱՄՆ՝ Նյու Յորք մեկնեց Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ գերշ. Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը՝ տեսակցելու Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ:

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գիսակ արքեպս. Մուրադյանը:

Փետրվարի 5-ին, ուրբաթ.- Պահք:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Քուվեյթի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Սարգիսյանը:

Փետրվարի 7-ին, կիրակի.- Դ կիրակի զկնի Մենդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց պատարագիչ Սրբազանը (Տես էջ 18):

Քարոզի վերջում Սրբազան Հայրը, Մայր Տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի խնդրանքով, հավատացյալ ժողովրդին տեղեկություններ հաղորդեց Վեհափառ Հայրապետի առողջության մասին:

Փետրվարի 8-ին, երկուշաբթի.- Սրբոցն Մարկոսի եպիսկոպոսին, Պիոնի քահանային, Կիւրղի եւ Բենիամինի սարկաւագացն եւ սրբոց վկայիցն Արդլմսեհի, Որմզդանայ եւ Սայենի:

Այսօր Կանադա մեկնեց ուխտավորաբար Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանած Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը:

Փետրվարի 9-ին, երեքշաբթի.- Սրբոց Ղեւոնդեանց քահանայիցն:

Այսօր Գերմանիա մեկնեց ուխտավորաբար Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանած Բեռլինի և Հյուսիսային Գերմանիայի հայոց հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Սերովբե վրդ. Իսահանյանը:

Փետրվարի 11-ին, հինգշաբթի.- Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց՝ հազար երեսուն եւ վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին:

Այսօր Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Արշակ աբեղա Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր Սուրբը՝ «Ցպամ հաւատոց մեզ ո՛չ ոք կարէ խախտել, ո՛չ հրեշտակք եւ ո՛չ մարդիկ, ո՛չ սուր եւ ո՛չ հուր, եւ ոչ զինչ եւ եւ դառն հարուածք» (Եղիշե) բնաբանով:

Պատարագի ընթացքում կատարվեց հոգեհանգիստ՝ «վասն համօրէն ննջեցելոց ազգիս Հայոց»:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց Հայրապետական մաղթանք:

Փետրվարի 12-ին, ուրբաթ. Պահք:

Այսօր Քուվեյթ մեկնեց ուխտավորաբար Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելած Քուվեյթի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Սարգիսյանը:

Փետրվարի 14-ին, կիրակի.- Բուն Բարեկենդան: Տեառնընդառաջ: Տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի Տաճարն:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը քարոզ խոսեց՝ «Արդ արձակես զծառայս քո, Տէր, ըստ բանի քում ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկութիւն քո, զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց» (Ղուկաս Բ 29-31) բնաբանով (Տես էջ 16):

Փետրվարի 15-ին, երկուշաբթի.- Ա օր Մեծի Պահոց:

Այսօր Արգենտինա մեկնեց ուխտավորաբար Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանած Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գիսակ արքեպս. Մուրադյանը:

Փետրվարի 18-ին, հինգշաբթի.- Դ օր Մեծի Պահոց:

Այսօր Նյու Յորքից Մայր Աթոռ Ս. Էջմիածին վերադարձավ Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Գարեգին արքեպս. Ներսիսյանը:

Փետրվարի 19-ին, ուրբաթ.- Ե օր Մեծի Պահոց:

Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի ունեցավ Միաբանական ժողով, որի ընթացքում Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Գարեգին արքեպս. Ներսիսյանը միաբաններին տեղեկացրեց Նյու Յորքում Վեհափառ Հայրապետի ունեցած վիրաբուժական գործողության հաջող արդյունքների մասին: Սրբազան Հայրը հավաստիացրեց, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շուտով, ապաքինվելուն պես, կվերադառնա Մայր Աթոռ: Վերջում միաբաններն իրենց աղոթքը վերառաքեցին առ Աստված՝ հայցելով Բարձրյալից Վեհափառ Հայրապետին շուտափույթ ապաքինում և քաջառողջություն:

Փետրվարի 20-ին, շաբաթ.- Զ օր մեծի Պահոց: Սրբոյն Թէոդորոսի զօրավարին:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Ռումինիայի և Բուլղարիայի հայոց միացյալ թեմերի առաջնորդ Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանը:

Փետրվարի 21-ին, կիրակի.- Բ կիրակի Քառասնորդական Պահոց (Արտաքսման):

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Տիրայր քհն. Գրլրճյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց ՔԴՔԿ Վարիչ-տնօրեն Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը՝ «Եւ մի՛ կերպարանիք կերպարանօք աշխարհիս այսորիկ, այլ նորագեցարուք ի նորոգութիւն մտաց ձերոց» (Հռոմ. ԺԲ 2) բնաբանով (Տես էջ 24):

Փետրվարի 22-ին, երկուշաբթի.- Ը օր Մեծի Պահոց:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հայաստանում Ռումինիայի նոր նշանակված դեսպան Պավել Պլատոնան՝ Ռումինիայի հայոց առաջնորդ գերշ. Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանի ուղեկցությամբ:

Հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսի դեսպանին ընդունեց Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ գերշ. Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը: Սրբազան Հայրն իր ուրախությունը հայտնեց Հայաստանում Ռումինիայի դեսպանատան բացման առթիվ՝ նշելով, որ այն մեծապես կարող է նպաստել հայ և ռումին ժողովուրդների հետագա մերձեցմանը:

Սրբազան Հայրը փաստեց, որ ռումինահայ համայնքի շուրջ 800 տարվա պատմության ընթացքում արդեն իսկ ձևավորված են սերտ հարաբերություններ երկու ժողովուրդների միջև: Սրբազան Հայրը նշեց, որ Ռումինիայում հայերն ունեն իրենց նվիրական սրբավայրերը, որտեղից երկու տարի առաջ սկսվեցին Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի առիթով կազմակերպված ուխտագնացությունները: Ռումինիայից էր նաև երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսը:

Պարոն Պլատոնան իր հերթին նշեց, որ հայերը Ռումինիայում հայտնի են որպես աշխատասեր և բարեպաշտ քրիստոնյաներ, որոնք կարևոր դիրքեր են զբաղեցնում նաև երկրի պետական իշխանության բարձրագույն օղակներում:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, դեսպանը խնդրեց նաև իր բարեմաղթանքը հայտնել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ ցանկանալով Վեհափառ Հայրապետին շուտափույթ ապաքինում:

Փետրվարի 23-ին, երեքշաբթի.- Թ օր Մեծի Պահոց:

Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի ունեցավ եպիսկոպոսական ժողով:

Փետրվարի 24-ին, չորեքշաբթի.- Ժ օր Մեծի Պահոց:

Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի ունեցավ Միաբանական ժողով, որի ընթացքում Արմավիրի թեմում տարվող քարոզչության ընթացքի մասին իրենց կարծիքները միաբանների հետ կիսեցին Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը, Տ. Բաբկեն աբեղա Սալբիյանը և Տ. Թորգոմ աբեղա Տոնիկյանը:

Փետրվարի 26-ին, ուրբաթ.- ԺԲ օր Մեծի Պահոց:

Այսօր Ռումինիա մեկնեց ուխտավորաբար Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանած Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանը:

Փետրվարի 28-ին, կիրակի.- Գ կիրակի Քառասնորդական պահոց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ: Բաբկեն աբեղա Սալբիյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը՝ «Հայր, մեղա յերկինս եւ առաջի քո, ոչ եւս եմ արժանի կոչել որդի քո» (Ղուկաս ԺԵ 21) բնաբանով (Տե՛ս էջ 27):

"ЭЧМИАДЗИН"
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(ФЕВРАЛЬ 1999)

1. *РЕДАКЦИОННАЯ:* Пост - победа над грехом (стр. 3-6).

ОФИЦИАЛЬНЫЙ ОТДЕЛ

2. 5 февраля 1999 г. в Нью-Йорке повторно оперирован Католикос Всех Армян Гарегин I (стр. 8-9).
3. Приветственные послания Католикосу Всех Армян Гарегину I (от Католикоса Киликийского Домна Арама I, Армянского Патриарха Иерусалима архиеп. Торгома Манукяна, Армянского Патриарха Константинополя архиеп. Месропа Мутафяна, Главы Католической церкви Папы Иоанна - Павла II, Главы Русской Православной церкви Патриарха Московского и Всея Руси Алексия II, Президента Республики Армения Роберта Кочаряна, Председателя Национального Собрания Республики Армения Хосрова Арутюняна, Президента Нагорно-Карабахской Республики Аркадия Гукасяна, других официальных лиц) - (стр. 10).
4. Поздравительная телеграмма архиеп. Нерсеса Позапаляна Католикосу Всех Армян Гарегину I в связи с праздником Вартанидов, 11 февраля 1999 г. (стр. 11).
5. Поздравительная телеграмма канцлера Первопрестольного Эчмиадзина архиеп. Нерсеса Позапаляна Патриарху Московскому и Всея Руси Алексию II в связи с 70-летием (от имени Католикоса Всех Армян Гарегина I и Эчмиадзинской братии), 16 февраля 1999 г. (стр. 12).
6. Встреча Президента Республики Армения Роберта Кочаряна с Патриаршим Викарием архиеп. Гарегином Нерсесяном, 19 февраля 1999 г. (стр. 13).
7. Поздравительная телеграмма архиеп. Нерсеса Позапаляна архиеп. Торгому Манукяну в связи с 80-летием и 60-летием иерейского служения, 17 февраля 1999 г. (стр. 14).

РЕЛИГИОЗНЫЙ ОТДЕЛ

8. Проповедь архиеп. Нерсеса Позапаляна в Кафедральном Соборе Св. Эчмиадзина на Сретенье Господне, 14 февраля 1999 г. (стр. 16-17).
9. Проповедь Предстоятеля Армянской Апостольской церкви в Канаде архиеп. Овнана Тертеряна в Кафедральном Соборе Св. Эчмиадзина, 7 февраля 1999 г. (стр. 18-19).
10. Проповедь протоархимандрита Микаэла Ачапагяна в храме св. Рипсимэ, 21 февраля 1999 г. (стр. 20-23).
11. Проповедь архимандрита Вазгена Мирзаханяна в Кафедральном Соборе Св. Эчмиадзина, 21 февраля 1999 г. (стр. 24-26).
12. Проповедь протоархимандрита Айказуна Наджаряна в Кафедральном Соборе Св. Эчмиадзина, 28 февраля 1999 г. (стр. 27-30).
13. ПРОТОАРХИМАНДРИТ МИКАЭЛ АЧАПАГЯН. Историческая основа Великого Поста (исследование) - (стр. 31-34).

14. ЧТЕЦ АРТУР КАРАПЕТЯН. Костер на Сретенья Господнем (исследование)- (стр. 35-37).
15. БАБКЕН НАНЯН. Свойства Божественных Лиц Пресвятой Троицы в системе догматических понятий (исследование) - (стр. 38-42).
16. ФРАНЦИСК САЛЬСКИЙ. Руководство к благочестивой жизни, часть IV (перевод с русского Ариниэ Паваян) - (стр. 43-52).

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ОТДЕЛ

17. ПИОН АКОПЯН. Епископские престолы во времена Григория Лусаворича (исследование) - (стр. 54-64).
18. Г. МАРТИРОСЯН. Первые церковные учреждения в Армении по Пентингеровой карте (исследование) - (стр. 65-70).
19. КАРЕН МАТЕВОСЯН. Новые страницы из истории Епископского престола в Нораванке (исследование) - (стр. 71-86).
20. ЛАРИСА НАВАСАРДЯН. Рецензия на книгу Католикоса Всех Армян Гарегина I "... И качается лодка на волнах" (стр. 87-90).

В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ ЭЧМИАДЗИНЕ И ЕПАРХИЯХ

21. ГРАНТ КОСТАНЯН. Торжество в Эчмиадзинской Духовной Академии, посвященное празднику Вартанидов, 11 февраля 1999 г. (стр. 92-96).
22. ГРАНТ КОСТАНЯН. Сретенский костер в Первопрестольном Эчмиадзине, 14 февраля 1999 г. (стр. 97).
23. ЧТЕЦ ВАГЕ БЕГОЯН. Сретенье Господне - общегородской праздник в г. Чаренцаване, 14 февраля 1999 г. (стр. 98-99).
24. МАРИАМ ВАРДАНЯН. Вручение ордена "Св. Саак-Св. Месроп" Ованесу Чекиджяну в Резиденции Католикоса, 14 февраля 1999 г. (стр. 100-101).
25. ИЕРОМОНАХ АРШЕН САНОСЯН. Образование нового Отдела по управлению пастырской деятельностью (стр. 102-103).
26. Поучительная инициатива (духовно-культурное мероприятие, проведенное в селе Джанфида Армавирской губернии усилиями Норкского Дворца юношества Араратской епархии совместно с группой учащихся Эчмиадзинской Духовной Академии, 28 февраля 1999 г.) - (стр. 104).

Навстречу 1700-летию провозглашения христианства государственной религией в Армении

27. Паломничество в программе 1700-летия. О посещении Предстоятелем Армянской Апостольской церкви в Канаде архиепископом Ованом Тертеряном армянских епархий за рубежом и в Армении с 28 января по 7 февраля 1999 г. (стр. 105-106).
28. Заседание в Первопрестольном Эчмиадзине под председательством архиеп. Месропа Ашчяна, исполнительного секретаря по 1700-летию и архиеп. Ованна Тертеряна, председателя комиссии по организации паломничеств в связи с 1700-летием, 5-7 февраля 1999 г. (стр. 107-108).
29. Церковная хроника за февраль месяц. (стр. 109-113).

"ETCHMIADZIN"
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(FEBRUARY 1999)

1. *EDITORIAL:* Fasting - victory over the sin (pp. 3-6).

OFFICIAL

2. His Holiness KAREKIN I Catholicos of All Armenians underwent a new chirurgical intervention and is recovering in New-York (February 5, 1999) - (pp. 8-9).
3. Good wishes to His Holiness KAREKIN I Catholicos of All Armenians (Aram I Catholicos of Cilicia, Armenian Patriarch of Jerusalem Torkom Manukyan, Armenian Patriarch of Constantinople Mesrop Mutafyan, Pope John-Paul II, Alexi II Patriarch of Russia, President of Republic of Armenia Robert Kocharyan, Speaker of Armenian Parliament Khosrov Harutyunyan, President of Nagorno-Karabagh Arkadi Ghukasyan, other officials) - (p. 10).
4. Telegram of congratulation of Archbishop Nerses Bozabalyan to His Holiness KAREKIN I Catholicos of All Armenians on occasion of St. Vardanants feast, February 11, 1999 (p. 11).
5. Telegram of congratulation of Archbishop Nerses Bozabalyan to Alexi II Patriarch of Moscow and All Russia on occasion of 70th anniversary (in the name of His Holiness KAREKIN I and Armenian Church), February 16, 1999 (p. 12).
6. President of Repuhlic of Armenia received the Vicar General, Archbishop Karekin Nersisyan, February 19, 1999 (p. 13).
7. Telegram of congratulation of Archbishop Nerses Bozabalyan to Patriarch Torkom Manukyan on occasion of 80th birthday and 60th anniversary of ordination, February 17, 1999 (p. 14).

RELIGIOUS

8. Sermon of Archbishop Nerses Bozabalyan delivered in the Cathedral on the feast of Presentation of Lord to the Temple, February 14, 1999 (pp. 16-17).
9. Sermon of Archbishop Hovnan Terteryan delivered in the Cathedral, February 7, 1999 (pp. 18-19).
10. Sermon of Archimandrite Mikael Ajapahyan delivered in St. Hripsime Church, February 21, 1999 (pp. 20-23).
11. Sermon of V. Rev. Fr. Vasken Mirzakhanyan delivered in the Cathedral, February 21, 1999 (pp. 24-26).
12. Sermon of Archimandrite Haykazun Najaryan in the Cathedral, February 28, 1999 (pp. 27-30).
13. ARCHIMANDRITE MIKAEL AJAPAHYAN - Historic basis of Great Lent (pp. 31-34).
14. ARTHUR KARAPETYAN - Fire of "Tyarnendaraj" (pp. 35-37).
15. BABKEN NANYAN - The properties of Persons of Holy Trinity in dogmatic strue-

ture (pp. 38-42).
16. FRANCIS of SALES - Introduction to the Devont Life. part IV (translation from Russian by Arpine Papayan) - (pp. 43-52).

ARMENOLOGICAL

17. PION HAKOPYAN - Episcopal sees during St. Gregory the Illuminator (pp. 54-64).
18. H. MARTIROSYAN - First ecclesial institutions in Armenia according the map of Pevtinger (pp. 65-70).
19. KAREN MATEVOSYAN - New pages of the history of Episcopal see of Noravank (pp. 71-86).
20. LARISSA NAVASARDYAN - The book of His Holiness KAREKIN I "...And the Boat Moves on the Waters" is published (pp. 87-90).

IN THE MOTHER SEE & DIOCESE

21. HRANT KOSTANYAN - Ceremony in Gevorgyan Seminary dedicated to St. Vardanank feast. February 11. 1999 (pp. 92-96).
22. HRANT KOSTANYAN - Fire of "Tyarnendaraj" in the Mother See. February 14, 1999 (p. 97).
23. VAHE BEGOYAN - The feast of Presentation of the Lord in Charentsavan. February 14. 1999 (pp. 98-99).
24. MARIAM VARDANYAN - Presentation of "SS. Sahak- Mesrop" order to Hovhannes Chekijyan in the Mother See. February 14, 1999 (pp. 100-101).
25. HIEROMONK ARSHEN SANOSYAN - A new Office for Coordination of Pastoral Work is established (pp. 102-103).
26. Instructing initiative (spiritual-cultural event in Janfida village of Armavir organized by students of "Cultural Center" of Nork in Ararat diocese and by some seminarists). February 28. 1999 (p. 104).

TOWARDS THE 1700TH ANNIVERSARY

27. Pilgrimage in project of 1700th anniversary: visits to dioceses in Diaspora and Armenia (visits of Archbishop Hovnan Terteryan to some dioceses in Diaspora from January 28 to February 7) - (pp. 105-106).
28. Conference in the Mother See for 1700th anniversary, February 5-7, 1999 (pp. 107-108).

29. Church pulpit: News - The description of celebrated Holy Liturgies and delivered sermons in the Cathedral and other ceremonies in the Mother See on February (pp. 109-113).

"ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(FEVRIER 1999)

1. *Editorial:* Le saint temps de carême–pénitence des péchés (pp. 3-6).

INFORMATIONS OFFICIELLES

2. Sa Sainteté le Catholicos de tous les Arméniens Karékine Ier a subi une nouvelle opération chirurgicale (5 février 1999) et passe actuellement la période de sa convalescence à New York (pp. 8-9).
3. Souhaits de prompte guérison au Catholicos de tous les Arméniens de la part de Sa Sainteté Aram Ier, Catholicos de la Grande Maison de Cilicie, de Sa Béatitude l'archêveque Torgom Manoukian, Patriarche des Arméniens de Jérusalem, de Sa Béatitude l'archevêque Mesrop Moutafian, Patriarche des Arméniens de Constantinople, de Sa Sainteté le Pape Jean-Paul II, Souverain Pontif de l'Eglise catholique romaine, de Sa Sainteté Alexi II, Patriarche de l'Eglise orthodoxe russe, de Son Excellence Robert Kotcharian, Président de la République d'Arménie, de Monsieur Khosrov Haroutiounian, Président du Conseil Nationale de la République d'Arménie, de Son Excellence Arcadi Ghoukassian, Président de la République du Haut-Karabagh et d'autres personnalités officielles (p. 10).
4. Télégramme de félicitations de l'archevêque Nersès Bozabalian adressé à Sa Sainteté Karékine Ier à l'occasion de la fête de Saint Vartan (11 février 1999) - (p. 11).
5. Télégramme de félicitations de l'archevêque Nersès Bozabalian adressé au nom de Sa Sainteté Karékine Ier et au nom du clergé du Saint-Siège d'Etchmiadzine à Sa Sainteté Alexi II, Patriarche de Moscou et de toutes les Russies, à l'occasion du 70e anniversaire de sa naisssance (16 février 1999) - (p. 12).
6. Rencontre entre le Président de la République d'Arménie et l'archevêque Garéguine Nersissian, vicaire patriarcal de l'Eglise apostolique arménienne (19 février 1999) - (p. 13).
7. Télégramme de félicitations de l'archevêque Nersès Bozabalian, chancelier du Saint-Siège d'Etchmiadzine, adressé à Sa Béatitude Torgom Manoukian à l'occasion du 80e anniversaire de sa naissance et du 60e anniversaire de son ordination sacerdotale (17 février 1999) - (p. 14).

VIE RELIGIEUSE

8. Sermon de l'archevêque Nersès Bozabalian prononcé le 14 février 1999 dans la cathédrale de Saint-Etchmiadzine à l'occasion de la fête de la Chandeleur (pp. 16-17).
9. Sermon de l'archevêque Hovnan Tertérian, prélat du diocèse des Arméniens du Canada, prononcé le 7 février 1999 dans la cathédrale de Saint-Etchmiadzine (pp. 18-19).

10. Sermon du Père Mikaël Atchapahian prononcé le 21 février 1999 dans l'église de Sainte Hripsimée (pp. 20-23).
11. Sermon du Père Vazguen Mirzakhanian prononcé le 21 février 1999 dans la cathédrale de Saint-Etchmiadzine (pp. 24-26).
12. Sermon du Père Haïkazoun Nadjarian prononcé le 28 février 1999 dans la cathédrale de Saint-Etchmiadzine (pp. 27-30).
13. PERE MIKAEL ATCHAPAHIAN. "L'origine historique du Carême" (étude) - (pp. 31-34).
14. ARTHUR KARAPETIAN. "La tradition du feu de la Chandeleur" (étude) - (pp. 35-37).
15. BABKEN NANIAN. "Les caractères des trois personnes de la sainte Trinité dans l'ordre confessionnel" (étude) - (pp. 38-42).
16. SAINT FRANÇOIS DE SALES. "Introduction à la vie dévote" (IV partie). Traduit du russe par Arpinée Papayan (pp. 43-52).

ETUDES ARMENOLOGIQUES

17. PION HAKOBIAN. "Les sièges episcopaux à l'époque de Saint Grégoire l'Illuminateur" (pp. 54-64).
18. H. MARTIROSSIAN. "Les premiers établissements ecclésiastiques en Arménie d'après la carte Peutinger" (pp. 65-70).
19. KAREN MATEVOSSIAN. "Nouvelles pages concernant l'histoire du siège épiscopal de Noravank" (pp. 71-86).
20. LARISSA NAVASSARTIAN. La parution du livre de Sa Sainteté Karékine Ier intitulé "...et le bateau flotte sur les vagues" (compte rendu) - (pp. 87-90).

NOUVELLES DU SAINT-SIEGE ET DES DIOCESES
DE L'EGLISE ARMENIENNE

21. HRANT KOSTANIAN. Festivités au séminaire théologique du Saint-Siège d'Etchmiadzine consacrées à la fête de Saint Vartan (11 février 1999) - (pp. 92-96).
22. HRANT KOSTANIAN. Le feu de la Chandeleur au Saint-Siège d'Etchmiadzine (14 février 1999) - (p. 97).
23. VAHE BEGOYAN. La fête de la Chandeleur à Tcharentsavan (14 février 1999) - (pp. 98-99).
24. MARIAME VARTAVIAN. Cérémonie de la remise de l'Ordre "Saint Sahak–Saint Mesrop" à Monsieur Hovhannès Tchékidjian, chef de la chorale académique de la République d'Arménie (14 février 1999) - (pp. 100-101).
25. PERE ARCHEN SANOSSIAN. La création d'un nouveau bureau coordinateur d'activité pastorale (pp. 102-103).
26. Une initiative exemplaire concernant l'organisation d'une manifestation spirituelle et culturelle qui a eu lieu dans le village Djanfida de la région d'Armavir avec la participation des élèves de la "Maison d'enfants arméniens" (diocèse patriarcal d'Ararat) et d'un groupe de séminaristes (28 février 1999) - (p. 104).

AU-DEVANT DU 17e CENTENAIRE DE LA CHRISTIANISATION DE L'ARMENIE

27. Pèlerinage dans le cadre du 17e centenaire de la christianisation de l'Arménie. Visites aux diocèses arméniens de la Diaspora (l'archevêque Hovnan Tertérian, prélat du diocèse des Arméniens du Canada, a rendu visite à quelques colonies arméniennes de la Diaspora du 28 janvier au 7 février 1999) - (pp. 105-106).
28. Réunion au Saint-Siège d'Etchmiadzine tenue du 5 au 7 février 1999 sous la présidence de l'archevêque Mesrop Achdjian, directeur général du conseil exécutif pour les célébrations du 17e centenaire de la christianisation de l'Arménie, et de l'archevêque Hovnan Tertérian, président du comité central pour les pèlerinages (pp. 107-108).

29. Brèves informations concernant la célébration de saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies et solennités religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint Etchmiadzine et au Saint-Siège au cours du mois de février 1999 (pp. 109-113).

ԽՄԲԱԳՐԻ ԳԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie.

ԴԱՍԻՉ՝ 77764

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ